



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

### **Usage guidelines**

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

### **About Google Book Search**


Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

GRAD  
EREN  
997  
BUHR

B 1,205,771







ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ, ԹԻՖ 1

# ՓՏՈՒԹԵԱՆ ՈՃԱԽԸ

և՛՛՛

ՕՐՈՍՆԵԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՆԱԲ ԵՐԱՅԵ ԿՈՒՐԸ



ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԱՅԵ  
ԿՈՒՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



*Օրհմանք Ն. Վրացյանի*



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ԱՋԳՄ», ԹԻԻ 1

# ՓՏՈՒԹԵԱՆ ՕՃԱԽԸ

ԿԱՄ

ՕՐՄԱՆԵԱՆԻ ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹՅՈՒՆԸ

Դրեց

Ա. ԳՐԻԳՈՐԵԱՆ



ԳՈՍԹՈՆ

1908



Handwritten text, possibly a signature or name, located at the top of the page.

ՀԱՄԱՐ  
ԼՔԷ 7/  
777  
1919



ՓՏՈՒԹԵՆՆ ՕՂՆԻՐ

Երեսուն տարիներ է իվեր լրջօրէն մասնակցած ու հետեւած եմ մեր ազգային կեանքի բոլոր փուլերուն: Բայց երբ հարկ եղաւ այդ երեսուն տարուան ազգային կեանքը վերլուծել, ցաւով տեսայ, թէ այս վերջին տասը-տասնամէկ տարիները, ազգային կեանքի տեսակէտով, ամենէն աւելի աղտոտ, տխուր ու մահառիթ վիճակի մը ենթարկած են մեզի: Այս արդիւնքին ծնունդ տուող պատճառները վերլուծելով տեսայ, որ՝ եթէ մէկ կողմէն թուրք կառավարութեան երկրակործան քաղաքականութիւնը, միացած թուրք և քիւրտ ժողովուրդներու աւերիչ ու կողոպտող մոլեռանդութեան, Երկիրը վերածեց բացարձակ անիշխանութեան մը, և քաղաքական պատմութեան մէջ նմանը չի տեսնուած բազմասակաւ պետութեան (polyoligarchie) դժոխային մեքենակալութեան, եթէ միւս կողմէն գաւառի ու կեդրոնի իսլամ ժողովուրդը, խորասուզուած իր գազանային խրախճանութիւններուն գիրկը, չի կրցաւ երբէք մըբռնել Հայկական Յեղափոխութեան գերազանցա-

պէս երկրասէր ոգին ու սկզբունքը, և անոր հակա-  
 ուակելով բուն իսկ Թուրքիոյ բարեւաւութեան երազն  
 ու փափաքները խորտակեց, սա ալ պէտք չէ ուրա-  
 նալ, Թէ Պոլսոյ Հայ Պատրիարքութիւն և Պատրի-  
 արքարան կոչուած խրտուիլակն ալ ո՛չ նուազ տխուր  
 դեր մը ունեցաւ մեր ազգային քայքայումին մէջ. և  
 ա՛յս, անոր համար, որ ազգին պատրիարքը, այդ տասը  
 տարիներու ընթացքին, յաջողեցաւ զերծ մնալ ազ-  
 գային քօնթրօլէ, անոր համար որ, ապօրէն ընտրու-  
 թեան մը վիժած զաւակը, Օրմանեան Պատրիարք,  
 շահագործեց ազգին դժբախդ վայրկեանները, իր  
 անձնական շահուն ու փառքին համար: — Եւ ես, որ  
 երկու տարիէ իվեր Թուրքիան Թողլով Եգիպտոս  
 հաստատուած եմ, Թէպէտ շատ կանուխ մտադիր  
 էի պատրաստել այդ ազգային կեդրոնական կեանքի  
 ուրուագիծը, բայց ամէն անգամ որ նօթերս մէջտեղ  
 կը հանէի, զգուանքի փրփրոտ ցայտք մը զիս կ'ընդ-  
 վզեցնէր, և ակամայ ձեռքէս վար կը ձգէի գը-  
 ըրիչս: Բայց հիմա որ Խրիմեանի մահով Թափուր կը  
 մնայ Արարատեան Աթոռը, և մեր կուսակցական  
 շրջաններէն ոմանք, ի շարս կաթողիկոսական ընտրե-  
 լիներու կը դնեն նաև Օրմանեան Պատրիարքը, այս  
 անգամ կատարեալ անաչառութեամբ ուզեցի պատ-  
 րաստել այդ ուրուագիծը, ինքզինքս զերծ պահելով  
 կ ու ս ա կ ց ա կ ա ն ն կ ա տ ու մ ն եր է, միմիայն  
 զայն մեր հանրութեան ներկայացնելու, և ընտրական  
 վրիպանքէ մը ազատելու համար բոլոր անոնք, որոնք  
 մեր ազգին ճակատագիրը վճռելու համար յառաջի-  
 կայ հոկտեմբերին պիտի հաւաքուին էջմիածնայ կա-  
 մարներուն տակ:

Կը յուսանք, Թէ մեր այս անաչառ տողերը իրենց  
 արդիւնքը կ'ունենան:



### ՕՐՄԱՆԵԱՆԻ ՊԱՏՐԻԱՐԻՈՒԹԻՒՆԸ

Պատմութեան մէջ հազուադէպ չեն պատահարներ, որոնք հակասեն ժողովրդական զգացումներու, և քանդեն բաղձանքներու ամուր շղթաներ:

Դպրեվանքը, իր եօթ տարիներու կեանքէն վերջ, ծանր տագնապ մը կ'անցնէր Կ. Պոլսոյ Օսմ. Պանգայի արիւնոտ դէպքին յաջորդող օրերուն, երբ Բարթողիմէոս Չամչեան, այդ կնամարդի ու թրքամուլ արարածը, իր տեղապահութեան օրով, ազգային ճակատագիրը ուղղակի Երլտըզի կամքին հպատակեցնելու ջանքը կը փորձէր: Օրմանեան, դրամի ու փառքի մարդ, տեսնելով, թէ այլևս Արմաշը չի կրնար գոհացում տալ իր այդ երկու մոլութիւններուն, կը մտածէ լռիկ մնջիկ թողուլ Դպրեվանքը, որ իր բարձրացումի պատուանդանը եղաւ, և անցնիլ Եգիպտոս, ուր դրամի փայլը, կեանքին հանգիստը, հանդէսներու շռայլանքը գինքը կը քաշէին: Օր մը, սա տեսակցութիւնը տեղի կ'ունենար Բարթողիմէոսի Նչան-թաշըի բնակարանին մէջ.

— Սրբազան եղբայր, քանի որ Դպրեվանքի ապագան անստուգութեան մատնուեցաւ, և քանի որ դուք ալ չէք ուզեր անոր շարունակութիւնը, ես մտադրած եմ թողուլ այդ հաստատութիւնը, և անցնիլ Եգիպտոս, ուր քոյր ալ ունիմ, և կը յուսամ թէ դուք իմ ճամբորդութիւնս կը դիւրացնէք:

— Ուրախ եմ, որ ատանկ նպատակ ունեցեր էք, իմ սէվ կիւլիւ Սուլթանիս շնորհիւ, կրնամ քեզի լաւ անցագիր մը առնել, բայց մէկ պայմանով. հիմա պատրիարքական ընտրութիւն տեղի պիտի ունենայ, այդ ընտրութիւնը պիտի կատարէ ո՛չ թէ Ազգային Երեսփոխանական Ժողովը, որ հոգեվարք է արդէն, այլ Սուլթանիս հաւատարիմ կարգ մը մեծամեծներ. պէտք է որ ճամբորդութիւնդ քիչ մը ուշացնես, և աշխատիս իմ պատրիարքութիւնս յաջողցնելու, և ես քեզ առօք փառօք Եգիպտոս պիտի դրկեմ:

Պայմանը ընդունուած էր: Բայց Օրմանեան այն միջնորդներէն է, որոնք բարեկամի մը համար աղջիկ ուզելու կ'երթան, ու երբ աղջկան հաւնին, զայն իրենց հաշւոյն վար կը դնեն: Օրմանեան տեսաւ թէ շահագործուելիք վայրկեան մը կար, զոր ինքը չէր կրցած տեսնել: Սոտթուեցաւ, ջլլիկ կնկան պէս դուռնէ դուռ վազեց, և ինքզինքը սիրելի ընելու բոլոր միջոցները — քծինք, կեղծիք, անուշ լեզու — ամենքն ալ գործածեց: Բարթողիմէոս հասկցաւ իր սխալը, բայց ուշ էր արդէն, և երբ ուզեց Եգիպտոս ճամբել Օրմանեանը, այս վերջինին մէջ այդ փափաքը մարած գտաւ, մինչև որ 1896 Նոյեմբեր 6 ին կ. Պոլսոյ մէջ ջոջերուն գումարած ապօրէն ժողովը, ի հեճուկս Չամչեանի, կ. Պոլսոյ Պատրիարք անուանել կուտար Օրմանեան Մաղաքիա Եպիսկոպոսը:

Այդ ընտրութեան լուրը երկու տպաւորութիւն միայն թողուց չորս դին: — Անոնք, որ Օրմանեանը կը ճանչնային իր իսկութեանը մէջ, յայտարարեցին, թէ «Ազգին ճակատագիրը յանձնուեցաւ մարդու մը, որուն մէջ ո'չ ազգային և ո'չ եկեղեցական արժանապատուութեան զգացումը գոյութիւն ունի», և ափսոսացին ապօրէն ընտրութեան մը այդ վիժած արդիւնքին վրայ: Ընդհակառակն, անոնք որ հեռաւոր ծանօթութիւններ միայն ունէին այդ եկեղեցականին նկատմամբ, անոնք այդ ընտրութենէն զգացին երջանկութիւն մը, որ մայրամուտ արեւին ջերմութիւնը միայն կրնար տալ, վայրկեան մը վերջ խաւարով միայն ծածկելու համար բոլոր այն հոգիները, որոնք պահ մը առաջ հրաշափառ օծումով մը ճառագայթուած էին: Տասը տարուան պատրիարքական շրջան մը բոլորուած տեսնելէ վերջ, այսօր չեմ կրնար երբէք երեակայել մարդ մը, որ համակարծիք չըլլայ մեզի, և չի հաստատէ, թէ Օրմանեան հայ ազգին պատրիարք ըլլալէն աւելի, վատ մը, սրիկայ մը և գող մը միայն եղաւ: Այս պարագան ամփոփ տողերու մէջ անձանագրել կարենալու հա-

մար, քանի մը մասերու պիտի բաժնեմ նիւթը, և Օրմանեանը պիտի պատկերացնեմ

- |                             |     |        |
|-----------------------------|-----|--------|
| 1.— Պատրիարքարանի           | մէջ |        |
| 2.— Իր ազգականներուն        | »   |        |
| 3.— Ժողովներու              | »   |        |
| 4.— Եկեղեցիներու            | »   |        |
| 5.— Պալատին                 | »   |        |
| 6.— Տարագրեալներու          |     | Հանդէպ |
| 7.— Փաւառներու              |     | »      |
| 8.— Կոտորածներու            |     | »      |
| 9.— Յեղափոխականներու        |     | »      |
| 10.— Սահմանադրութեան        |     | »      |
| 11.— Նպաստից գումարներու    |     | »      |
| 12.— Իր թագուն ծրագիրներուն |     | »      |

Այս բաժանումի իւրաքանչիւր ճիւղին մէջ քանի մը տողերով երևան բերել պիտի ջանամ իսկութիւնը Օրմանեանի, որ Մեծ Հիւանդէն մէկ տարեկան մեծ ըլլալով Հանդերձ, սրտի, նկարագրի, սկզբունքի և կիրարկուած միջոցներու տեսակէտով, անկէ ո՛չ նուազ ցած ու ստորին դիրքի մը մէջ գտնուած է:

### ՕՐՄԱՆԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՄԷՋ

Պոլսոյ Աղգ. Պատրիարքարանը իր ներքին կազմակերպութիւնով բնաւ տարբերութիւն մը չունի Երւսթղի ներքին կազմակերպութենէն: Տեսնուած տարբերութիւնը սա է միայն որ Երւսթղի մէջ ոճիրը նիւթականացած է և արիւնահեղ, մինչ Պատրիարքարանի մէջ քսու է ու դաւաճանող:

Ներքին պաշտօնէութիւնը իր երկար ատենի կեանքով տարուբերուած Խրիմեանի՝ գգայնոտ, Վարժապետեանի՝ կուռ, Աչգեանի՝ ներողամիտ, Իզմիրլեանի՝ օրհասային, Չամչեանի՝ վատասիրտ, և Օրմանեանի՝ պատահական պատրիարքութիւններու իրերայաջորդ հոսանքին մէջ, և միշտ գոյն ու սկզբ-

բունք փոխած, ինկած է այն տեսակ վիճակի մը մէջ, ուր նկարագիր և ուղղամտութիւն իրենց ամբողջական բացակայութիւնովը կը փայլին: Պատրիարքարանի դռնապանէն սկսեալ մինչև աւագ դիւանապետը, մէկ մէկ անխիղճ պաշտօնէի և վարձկան խաֆիէի դերը կը կատարեն իրարու մէջ, ու նոյն իսկ ուղղամիտ ժողովականներու հանդէպ:

Հոն ամէն պաշտօնեայ, իր դիրքը ամուր պահելու համար, իր թուրք պաշտպանը ունի. թաղի պէքճի պաշիէն ու քօմիսէրէն սկսեալ մինչ Ջապթիէ նազըրին, մէկ մէկ քարտուղար կամ բարապան շալկած, կը հովանաւորեն զիրենք: Ո՛չ մէկ պատրիարքի օրով, այսքան վատասերում, այսքան ստորութիւն բոյն չէր դրած Ազգ. Պատրիարքարանին մէջ, որուն իրաւամբ պաթախան է անունը տրուել սկսուած է: Ո՛չ մէկ արդարութեան ձայն ու բառ, ո՛չ մէկ ճշմարտութեան բողոք կարելի է լսել ընել հոն, ուր վատութիւնը կ'իշխէ: Եւ այդ ազտոտ շահավաճառութեան միակ ու միակ պատասխանատուն կը մնայ Օրմանեան, որ իր հովանաւորած պաշտօնէութեան աչքին իբր մօտ է և կը ծառայէ, և կը քաջալերէ այս հակազգային ուղղութիւնը: Օրմանեան, փառքի ու շահու մարդ, չի կրնար հաշտ աչքով դիտել պաշտօնեաներ, որոնք ուղղամիտ զգացումով և արդարասիրութեամբ կապուած ըլլային իրարու հրտ:

«Բաժանեա՛ զի տիրեսցես» սկզբունքը իբրև դաւանանք ընդունել վերջ, ա՛լ ուրիշ միջոց չունէր, եթէ ո՛չ պաշտօնեայ պաշտօնէի, բարապան բարապանի աչքին կասկածելի ներկայացնել, զիրար լըրտեսել տալ, և իւրաքանչիւրը իրարմով հակողութեան ենթարկել: Այս ճիզուիթական սկզբունքը կը կիրարկուէր անանկ ժամանակ մը, երբ ազգին ճակատը արիւնով կարմրած էր, ու սրտերը արունարցունք կուլային քանդուած օճախներու շուրջ: Բողոքի ձայն մը կրնար չուտով մարիլ Օրմանեանի ըս-

պառնացող բամբ ձայնին ազդեցութեանը տակ : Վրէժի ու պատիժի սպառնալիք մը , որքան ալ աղտոտ ըլլար , անձնուէր հոգիներու համար , տակաւին խոչընդոտ մըն էր արդար շարժումի մը , և վատասիրտ ու զօջաքաղ պաշտօնեաներու համար կրնար իբրև լաւագոյն միջոցը ծառայել շահախնդրութեան գոհացումին :

Ո՛րքան պատիւներ ցեխին մէջ քաշկռտուած են Պատրիարքարանի սեմէն ներս , և ո՛րքան անձայն վրէժխնդրութիւններ գոհացում գտած ...

Օր մը , գործերու բերմամբ , կը գտնուէի Պատրիարքարանի մէջ : Կին մը ներկայացաւ խնդրագիր ի ձեռին , և ուղեց պատրիարքը տեսնել : Արցունքը արիւնով շաղուած էր այդ կնկան աչքերուն մէջ , ուր կեանքի դառնութիւնը իր ցաւագին պատկերը դրօշմած էր : Հազար աղաչանք , պաղատանք չի կրցին ողորքել Օրմանեանի անձնական ե ա ս ա գ ճ ի ին բիբա ու կոշտ սիրտը :

— Եղբայր , ցաւ մը ունիմ , ազգին տանը մէջն եմ , թողէ՛ք որ ներս մտնեմ ազգին ու մեր հօրը ներկայանալու , և տէրտիս տէրման մը աղերսելու ...

— Պատրիարքը զաւակ չունի , չե՛ս կրնար տեսնել զինքը , մարդ ներս չի կրնար մտնել , ե ա ա ի ս է ...

— Գուզո՛ւմ , պիտի մեռնիմ , պիտի խենթեանամ , զաւակս սպաննուեցաւ , ամուսինս Վանեցի ըլլալուն իր հայրենիքը աքսորեցին , երեք աղջիկ զաւակներովս տունը մնացի : Մ ա հ լ լ է ի ն փ ո լ ի ս ր կ ՚ ու զ է աղջիկս բռնաբարել , կամ թէ մեզ ալ աքսորել . թող տո՛ւր , Աստուծո՛ւ սիրուն , թող տո՛ւր , որ պատրիարքին երթամ ...

— Չէ՛ , չէ՛ , պատրիարքը աղջիկներուդ պէ գ ճ ի ն չէ՛ , եթէ անօթի ես , եթէ էրիկդ աքսորեցին , փոխանակ Պատրիարքարան գալու , ք էր ի ս ա ն է ն եր գացէ՛ք , հոն հաց ալ կայ , էրիկ ալ կայ ...



Այս խօսակցութիւնը, զոր հոս բառ առ բառ կ'արտագրեմ, զիս ընդվզեցուց: Պատրիարքը կը լըսէր ներսէն, պաշտօնեաներ ու քարտուղարներ՝ հանդիսատես այս գազանային մերժումին, գոհունակութեան ժպիտ մը ունէին իրենց շրթունքներուն ծայրը: Եկած էր վայրկեանը, որ պոռթկայի սրտիս կատաղութիւնը, անէծքի մը պէս փրփրած, բայց ի՛նչ օգուտ, ամչնալու կարողութիւնը պակասած է իրենցմէ, և արժանապատուութիւնը խեղդուած ապականութեան ցեխին մէջ:

Եսասագծի մը անպատկառ լրբութիւնը մինակը չէր իր տեսակին մէջ. օգնական գործակատարը, բռնի կուսապղծութեան համար բռնութիւն ի գործ կը դնէր բոլոր այն դժբաղդներուն վրայ, որոնց գործերը կարգադրելու պաշտօնը յանձնուած էր իրեն: Յեղափոխական մը ըլլալու պէտք չի կայ բնաւ այդ գազանութիւններէն ցնցուելու համար. եթէ ո՛չ ազգային՝ գոնէ մարդկային զգացում մը բաւական է շանթահարելու վոհմակը այդ վատերուն, որոնք Ազգին Տանը մէջ ազգին կանայքը կը լլկեն, կոտորածներէ այրիացումի դատապարտուած սգաւորներու արցունքները կը ծաղրեն, և բիրտ ուժի կամ աղուէս կեղծիքի մը ստորնութիւններով, ազգին գաւակները մարտիրոսացումի կ'առաջնորդեն յանձնելով փոլիսին, այդ պաշտօնական աւազակին, որ երբեմն կաշառքի պզտիկ բաժիններ ալ կը հանէ Պատրիարքարանի դործակատարին կամ բարապանին:

Լրտեսութեան այս զազրութիւնը, կասկածի ու կուսակցականութեան այս ցեխոտ բաժանումը ա՛յնքան առաջ գնաց ազգային տան ներքին շրջանակին մէջ, որ Օրմանեան պահ մը ինքն ալ սոսկաց իր պաշտօնեաներու վարմունքէն, և օր մը, Երևուզի վրիպած փորձէն վերջ, ինքն իսկ հարկ տեսաւ խուզարկել ամբողջ Պատրիարքարանը, պալատան լըրտեսս, և իրեն գործակից, Ռոպէր Եսաղըճեանի հետ:

Եւ այդ ազգային նուաստացումն եղող խուզարկութեան իբրև արդիւնք, բարապանի մը սենեակէն գտնուած մէկ վեցհարուածեանը, իբրև վտանգաւոր գէնք, Երլտըզի պալատին յանձնեց :

Ահա՛ Կ. Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանի այլասեւերած ու վատազգի պաշտօնէութեան ներքին կեանքէն պզտիկ դրուագ մը, որուն նմանները ժամէ ժամ, և օրէ օր տեղի կ'ունենան, շնորհիւ այն պետին, որ բաժանելով կը վարէ, լրտեսելով կը կառավարէ, սպառնալիքով կ'ուղղէ, և ազգային ստորնացումի գնով ինքզինքը կը պանծացնէ :

### ՕՐՄԱՆԵԱՆ ԻՐ ԱԶԳԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Օրմանեանի պատրիարքութիւնը օրհնութիւն մը եղաւ իր անձին, իր տունին և իր ազգականներուն : Ո՛չ աւելի, ո՛չ պակաս : Իր քոյրերուն Բերայի մէջ անցուցած շալլ կեանքը, իր փեսին և անոր եղբոր սնանկութիւնը, իր եղբոր, Տօքթոր Կոմիտասի, տունէն բաժնուելով ուրիշէն բռնի խլած կնոջ մը Հետ բնակութիւնը, Դպրեվանքէն ստացած թոշակին զեղջումը, զինքը նիւթական անօրինակ անձկութեան մը մատնած էին : Եւ այդ անձկութիւնը ստիպած էր զինքը երթալ Եգիպտոսի ափերուն վրայ փնտռելու վիպական ոսկի գեղ մը : Հազիւ պատրիարք եղած՝ իրերը կերպարանափոխ եղան բոլորովին : Մահասարսուռ արիւնով մը ներկուած ու կոտորուած գաւառներու Հայութեան կոչկոճուած կեանքը ապրեցնելու և քանդուած օճախները վերականգնելու համար Արասահմանի Հայութիւնը՝ մասամբ ինքնաբերաբար և մասամբ յեղափոխական ուժերէն մտրակուած՝ նիւթական-դրամական օժանդակութիւն հեղեղեց դէպի Պատրիարքարան, այն յոյսով, թէ Պատրիարքարանն է այն ապահով ու վստահելի

խողովակը, ուրկէ կարելի պիտի ըլլար սփոփող դըրամը հասցնել գաւառներու անկիւնը՝ գոնէ մասամբ դարմանելու համար թուրքին ու քիւրտին ձեռքով գործուած խժդժութիւններն ու աւարառութիւնները: Այդ միջոցի ժողովրդական կեանքի պատմութեան մէջ, երկու երևոյթներ կան, զոր պէտք է աչքէ վրիպեցնել: Իր բնագաւառին մէջ ապրող Հայը, երկար տարիներէ իվեր ստրկութեան լուծին վարժուած, եթէ չի կրցաւ շատ կանուխէն սեղմել Յեղափոխութեան փրկարար ձեռքը, և որդեգրել այն սկզբունքները, զոր Հայկական Յեղափոխութիւնը սերմանեց, Հայրենիքի ազատագրութիւնը, ժողովրդական ինքնապաշտպանութիւնն ու բարեկեցութիւնը, և եթէ արդարութեան յաղթանակը պատրաստելու համար ժողովրդական հաւաքական ուժին գործակցութիւնը զլանալով, իր վատագի անտարբերութեամբ, ուժ տուաւ թրքական բռնութեան յաղթանակին ու քրդական ապաշնորհ լախտին, չի մոռնանք, թէ Ռուսիոյ, Ամերիկայի, Պուլկարիոյ, Եգիպտոսի և Պարսկաստանի Հայութիւնը իր պարտականութիւնը կատարեց մասամբ, կոտորածներէն վերջ, իր դրամին օժանդակութիւնը ղրկելով անպատուրւած, տունէ ու սնունդէ զրկուած եղբայրներուն: Մէկին վատութիւնը և միւսին փութկոտ օժանդակութիւնը, սակայն, չեն կրնար քաւել այն ոճիրը, որուն հերոսներ ու անմեղներ զոհուեցան: Հեռաւոր ազգակիցներու այդ դրամը, եթէ դէպքերէն առաջ յանձնուած ըլլար պարկեշտ ու անձնուէր յեղափոխականներու, այսօր այդ ոսկիներէն փոխանակ մեր նահատակ ազգի խողխողուած գաւակներուն անթաղ, այրեացաւեր ոսկրոտիին ծածկոց չինելու, Յեղափոխութիւնը պիտի կրնար դէպքերէն առաջ պատրաստել Հայ Ազգութեան փառքին ու Ազատութեան պատուանդանը, զանի իբրև փրկութեան խորան ծառայեցնելու ազգին դարաւոր զրկումներուն, և իբրև

մուսէոն մը Հայութեան այս հերոս նահատակներուն, զոր Յեղափոխութիւնը իր արիւնոտ արգանդէն ծնցուց, դարաւոր երկունքէ մը վերջ:

Պատի՛ւ մեր մարտիրոսներուն: Երանի՛ թէ անոնց արիւնին վրէժի բողոքը, միացած թուրք կառավարութեան անվերջանալի բռնութիւններուն, կաշկանդումներուն, իրարու մօտ բերէր վայրկեան մը առաջ, հարուստին դրամը և ժողովրդի զաւկին զոհաբերող ոգին, և զանոնք օծէր Յեղափոխութեան ոգիովը, մեր մոխիրներէն վեր բերելու համար Ազգը, որ Փիւնիկին նման պէտք ունի յարութեան, կեանքի, անմահութեան և ընկերական արդարութեան:

Օրմանեան այդ հակասական շարժումներուն մէջ փոխատնկուած պատրիարքը, ծարաւի հարստութեան, իր մատը խոթեց նպաստից դրամներուն մէջ՝ ինքնաձեռն ու միայնակ, մատակարարեց զանոնք, անուանական նպաստից յանձնաժողովի մը գործակցութիւնովը: Դեռ ես Արտասահման չելած, այդ յանձնաժողովի անդամներէն շատերը կը ցաւէին, որ նըպաստի դրամները անձնական պէտքի և անձնական նպատակներու կը գործածուին Օրմանեանի կողմէն: Յայտնի բողոքի ձայն մը չի լսուեցաւ, սակայն, այդ կամայականութիւններուն դէմ: Հինգ-վեց տարիներ անցած էին նպաստի գործածութիւններէն իվեր, և ահա՛ Օրմանեան, օր մը, պէտքը տեսաւ հաշուեկշիռ մը ներկայացնելու Յանձնաժողովին, անոր կողմէ վաւերացնել տալու համար զայն: Չէ՞ որ վաւերացուած հաշուեկշիռ մը գերեզմանի մը կափարիչին պէս է, վերջապէս, անհանդարտ խղճի մը վրայ: Օր մը իւսկիւտար կ'ելլէինք, շոգենաւին կողմնակի խուցերէն մէկուն մէջ կը գտնուէինք, հանգուցեալ Ռ. Պէրպէրեանի և Բ. Թելեանի հետ: Այս վերջինը, ջրղազրգիւ the'oricien, կատաղի թափով մը կը յայտարարէր, թէ ահագին զեղծումներ կային պատրաստուած հաշիւներուն մէջ, և թէ 4—5 հազար ոսկիի

անանուն գումար մը նշանակուած է ծախքերուն կողմը: Այս երկուքը և Մանկունի Ծպիսկոպոսը երկար ատեն ընդդիմացան, այդ առանց քօնդրօլի և քմահաճ հաշիւը վաւերացնելու, պարզապէս համոզուած ըլլալով անոր զեղծումի պարունակութեանը:

Բայց Օրմանեան, գործի մարդ, դիւրութեամբ կրցաւ ձեռք բերել հաւանութեան բանալին: Թելեանի՝ պատուանշան, Մանկունիի՝ արքեպիսկոպոսութիւն, խայծեր եղան տարի մը վերջ, ուրկէ զեղծուած գրամները, Օրմանեանի ձեռքով չահագործուած, պատճառ կ'ըլլային հազարաւոր սովեալներու անողորմ մահուան:

Բայց դեռ աւելի'ն կայ: Օրմանեան իր պատրիարքութեան առաջին օրէն, Պատրիարքարանի աւագ գործակատար նշանակեց Տիգրան Տէր Ներսէսեան անուն վատը, որ այն ատենի ապօրէն Քաղաքական Ժողովին կ'անդամակցէր: Օրմանեանով ներդականութիւնը բոյն դրաւ Ազգ. Պատրիարքարանի մէջ, և քիչ ժամանակէն ահագին համեմատականութիւններ առաւ: Տիգրան Տէր Ներսէսեան եղբայն է իր քեռայրին, Միհրանի, երկուքն ալ սնանկացած Գօճաման-Օղլու խանի իրենց սենեկին մէջ: Օրմանեանի պատրիարքութիւնը, ուրեմն, նախանամական բարիք մը կը դառնար այդ սնանկ եղբայրներուն համար, որոնցմէ կրտսերը անմիջապէս կը մտնէր Սոցիալական-Մարքսիստական գրասենեակը, և միւսը՝ Պատրիարքարանի սեմէն ներս, հոն հազարաւոր հայերու արուն-արցունքէն պատրաստելու համար իր կեանքին պրոպագանդիստիկէն: Ներդականութեան զաւակը, Տ. Ներսէսեան, ամենէն խայտառակ կեանքը ապրեցաւ պատրիարքին հովանաւորութեան ներքեւ, իր օրով հայերու Պոլսէն տարագրումը սխաթէմաթիկ վիճակ մը ունէր: Օրմանեան իբր թէ պաշտպանելու համար այդ դժբաղդ հայերու ինչքն ու դրամները, կազմեց Տարեգրելոց Յանձնաժողովը, որուն նախա-

գահութիւնը յանձնեց Տ. Տէր Ներսէսեանի, անոր մօտ անդամ նշանակելով ուրիշ Կարնեցի մը, որուն կինը Օրմանեան Սրբազանի հոմանուհին եղած է Կարնոյ մէջ, նոյն իսկ Կարնեցի պատուաւոր ազգայիններու վկայութեամբ: Տէր Ներսէսեան, կանխաւ սեղանաւորն ըլլալով թուրք պաշտօնեաներու, շատ լաւ սերտած էր անոնց բարքն ու բնաւորութիւնը, կաշառակերութիւնները: Հիմա կարգը եկած էր գործածելու այն միջոցները, որոնցմով կարելի պիտի ըլլար՝ սրիկայութիւններով ու խաղամուտութիւնով կողոնցուցած իր հարստութիւնը վերականգնելու: Ինք չի խղճաց բնաւ՝ իբրև միջնորդ կաշառքի՝ հազարաւոր վաճառականներ կողոպտել, ճամբորդութեան դժուարութիւններ ընծայելու պատրուակով, և նոյն իսկ Պատրիարքարանի դրամները կերաւ առաջնորդական կոնդակներու ծախքին փոխարէն կրկնապատիկը գանձելով միշտ, Պատրիարքարանի նպաստից Սնտուկէն: Տարագրելոց խնդիրը ուզեց շահագործել: Ըսուեցաւ, թէ այն բոլոր հայերը, որոնք իրենց քիչ ու շատ հարստութիւնով Տէր Ներսէսեանի աչքին զարկած էին, կառավարութեան կողմէ իր գաղտնի թելադրութեամբ տարագրուեցան իրենց հայրենիքը: Աքսորականներու շոգենաւը քարափէն դեռ չի մեկնած, Տէր Ներսէսեան Տարագրելոց Յանձնաժողովի նախագահութեան իր տիտղոսով, ձեռքին տակ առաւ անոնց դրամը, գոյքերը և ամէն ինչ որ ունէին: Եւ ահա՛, ամիսներ վերջ, Օրմանեանի սրտագրութեամբ պաշտօնագիր մը կը հասնէր ուէ Առաջնորդարան, սա իմաստով.

«Կ. Պոլսէն տարագրուած ա յ ն ի ն չ ա յ ն ի ն չ ե ս ան ի գոյքերն ու դրամը Պատրիարքարանիս Յանձնաժողովին միջոցով հսկողութեան տակ առնուած լինելով, դրամները գանձուած, գոյքերը աճուրդով ծախուած են, և ապոնց արդիւնքը եղող . . . ոսկին, կք ղրկենք Ձեր Սիրելիութեան, մեր . . . թիւ . . .

ներփակ փոխգրով, զոր գանձելով յանձնեցէք յիջեալին և պաշտօնական մարմնոյ կողմէն վաւերացեալ, իր ընկալագիրը ղրկեցէք ի Պատրիարքարան:»

Առաջնորդը գտնել կուտայ դժբաղդ մարդը: Տեսնելու էր մարդուն յուսահատութիւնն ու վիշտը:

— Զիս աքսորել տուին ու հիմա դրամս կուտեն, Հա՛յր Սուրբ, իմ փարաս 10 ոսկի չէր, այլ 100-200 ոսկի. մնացորդն ալ պիտի ղրկե՞ն...:

Տարագրելոց Յանձնաժողովը անձնուիրաբար ծառայած էր Օրմանեանի քթին տակ, և գթասիրտ բունին պէս, գունէ գողցուած դրամին տասանորդը ղըրկած էր իր տարագիր տիրոջ:

Ժամանակին թերթերը հազիւ երկու անգամ կրցին դիտողութիւններ ընել Տարագրելոցի ա՛յնքան անխիղճ զեղծումներուն վերաբերմամբ, ու Օրմանեան երկու անգամին ալ գրաքննիչին արգիլել տըւաւ այդ արդար բողոքներուն հրապարակային ցնցող արձագանգները:

Ժողովուրդին կասկածները հաստատ կուտան մը կ'ուզեն միշտ, և Տէր Ներսէսեան չուշացաւ այդ կուտանը տալու ժողովուրդին:

Տատեան Արթին փաշա, որ Օրմանեանի ընտրող խումբին պարագլուխն էր, և որ անձնական սկըզբունքի մը կը զոհէր «կաթուղիկութենէ դարձուոր մը պատրիարք չընտրելու» ազգային սուանդութիւնը՝ յետոյ անհաշտ թշնամին դարձաւ Օրմանեանի, երբ տեսաւ, թէ որչափ ատեն պատրիարք մնայ Օրմանեան, իր բառով, այդ «խալպազան ճիզուիթը», չի պիտի կրնան երկուքը մէկ ջուրի վրայ խաղալ: Տատեան, առանց տեսնելու անկումը Օրմանեանի, կը մեռնէր, թափուր թողլով Գաղաք. Ժողովի ատենապետութեան աթոռը: Օրմանեան, երևոյթները փրկելու համար, պէտք ունէր Նորատունկեան Գաբրիէլ էֆէնտիի ատենապետութեան: Նորատունկեան դժուարահաճ գտնուեցաւ իրեն եղած առաջարկին

հանդէպ, և ի վերջոյ, պայմանաւոր հաւանութիւն մը յայտնեց :

— Կ'ընդունիմ ատենապետութիւնը, եթէ նախ Տէր Ներսէսեան հրատարի աւագ գործակատարութենէ :

Օրմանեան սիրեց այդ պայմանը, ա'լ յափրացած էր Տէր Ներսէսեանի կամայականութիւններէն, քանի որ իր գործիքը սկսած էր նոյն իսկ իր վրայ իշխել : Պատրիարքարանի աւագ գործակատարը իր դիրքն ու կացութիւնը շինած էր այլ ևս, Գուզկունճուզի իր եալըն գրաւէ գերծած էր իր զաւակներուն համար կազմած էր թղթատուն ու տպարանը, հալ-լալ ֆիւմ մէջ դիրք մը ստեղծած էր, կեանքը հեշտ էր և վայելքը դիւրին : Այսուհանդերձ բողոքի ձայն մը բարձրացուց Տէր Ներսէսեան, երբ հրատարելու առաջարկ մը եղաւ Պատրիարքին կողմէն :

— Կը հրատարիմ, բայց, եթէ մինչև մէկ շաբաթէն երեսուն ոսկի ամսականով պաշտօն մը յանձնել չի տաս ինծի կառավարական շրջանակներու մէջ, դատախազ պիտի ըլլամ ձեզի դէմ, քանի որ ես կը նախատուիմ կարգ մը զեղծումներու համար, որոնց արդիւնքը ձեզի հետ կիսեցի, Սրբազան...

Տիգրան Տէր Ներսէսեանի կողմէն արտաբերուած այս սպառնալիքէն միայն ՉՈՐՍ ՕՐ վերջը, Պատրիարքարանի նախկին գործակատարը, իր պահանջած ամսականով և թիւթ պէի բարձրացումով կը մըտնէր Շէհիր էմանէթի անդամակցութեան մէջ :

Անակնկալ դիպուած, որուն կը պարտինք ժողովրդական կասկածներու արդարացումը, ապահովելու համար Տարագրեցի կողմէն գործուած զեղծումներուն պատրիարքական մասնակցութեան :

Անցողաբար միայն ըսենք, Նորատունկեան իր անձնական ու մասնաւոր նկատումները ունէր Տէր Ներսէսեանի հրատարումը պահանջած ատեն : Կալացի հիւպատոս, Արիս էֆէնտի Ֆէսճեան, իրմէն Պոլսոյ



մէջ պաշտօն մը խնդրած էր : Նորաստունկեան կրնար շահագործել այս պարագան : Ինք ունէր եղբորորդի մը, որ հիւպատոսի մը քով քարտուղարութիւն կ'ընէր ոչինչ ամսականով մը, և զաւակ մը ունէր, որ ձրի ծառայութիւն կը մատուցանէր Խարիճիէի մէջ : Ֆէսճեան կալացի հիւպատոսութիւնը թողուց Նորաստունկեանի եղբորորդիին, և այս վերջինը իր poste-ը թողուց Նորաստունկեանի տղուն : Լաւ և խոհական հաշուեյարդարութիւն : Եթէ Նորաստունկեան նպաստաւորուեցաւ այդ կարգադրութենէն, ազգն ալ ո'չ նուազ նպաստաւորուեցաւ, որովհետեւ Ֆէսճեան միակ պարկեշտ մարդն է այսօր Պատրիարքարանի մէջ, աղբանոցներու մէջ բուսած ճերմակ սունկի մը պէս :

Օրմանեանի ներդրականութիւնը բաւական հեռուները գնաց տակաւին : Տէր Ներսէսեանի քէնիին տղան, կատարեալ ապուշ մը և սրիկայ մը, Պատրիարքարանի արձանագրութեան դիւանին օգնական նշանակուեցաւ, իրեն տեսուչ ունենալով Մկրտիչ Մեւիթեանը, որ աննկարագիր ու խիտավարակ սրիկայ, չէր խղճացած իր եղբօր կինը իբր հոմանուհի գործածել. անոր մէկ հեռաւոր ազգականը՝ Յարաբերութեանց Դիւանին պաշտօնեայ եղաւ : Եղբօրորդին Պիթլիսի կուսակալութեան օգնական, ճշմարիտ դատարկապորտ մը, որուն երիտասարդ գլխուն մագերը ճերմակցած են անառականոցներու և գաֆէշան թաններու անկիւնները : Եւ ամենէն աւելի յատկանշանականը Օրմանեանի ներդրականութեան, եղաւ իր եղբօր բժիշկ նշանակուիլը կայսերական պալատան, և «լրտես պալատան» նշանակուիլը՝ երբեմն կառապան և կաւատ, Ռոպէր Եազըճեանի, որուն կինը, հազարաւորներու հետ, նաև հոմանուհին եղած է Օրմանեան մաքրակրօնին :

Կարծեմ, թէ ա'լ աւելորդ պիտի ըլլար այս ամէն իրողութիւններուն վրայ նորանոր խորհրդածութիւններ աւելցնել : Այս անհերքելի ճշմարտութիւն-

ները ապացոյցներն են այս պատրիարքական գործունէութեան, որուն սկզբունքը եղած է «իմ տունս և իմ իններս» նշանաբանը, և իր այդ նշանաբանը կրցած է յաջողցնել, ի վնաս ազգին և ազգային դատին:

Ո՛րքան ծանրաշարժ ու համբերող եղաւ արդարութեան գնդակը, որ այնքան վատերուն ու դաւաճաններուն կեանքը պատժեց: Պատրիարքական այն ամէն յաջողութիւնները անձնական ճարպիկութեան մը արդիւնքը չեն, այլ վարձատրութիւնը մատնութիւններուն և ազգային նուիրական իրաւանց վաճառումին:

Վկայ, Պէշիկ-Թաշի ազգային Հին գերեզմանատան գաղտնի և անշշուկ սուլթանական պարտէզներուն կցուիլը, այն գերեզմանատան, որ երկար պատմութիւն մը ունի մեր ազգային տան ժողովներու արձանագրութեան մէջ:

### ՕՐՄԱՆԵԱՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒ Մէջ

Ժողովներուն օրինական կազմակերպութիւնը և անոնց գործակցութիւնը ազգին օրուան պատրիարքին հետ անհրաժեշտ պայմանն է և ոգին մեր ազգային վարչութեան: Գոնէ 1863 թուականէն ի վեր այս եղած է սկզբունքը, որով բոլոր ներքին ու յարաբերական գործերը վարուած են կ. Պոլսոյ Պատրիարքարանին կողմէն: Ստոյգ է, որ Սահմանադրութեան ամենէն վերջին յօդուածը, որ վերաքննութեան հարկը ցոյց կուտայ միշտ, կառավարութեան կողմէն պատրուակ բռնուեցաւ շարունակ Պատրիարքարանի ժողովական կազմակերպութիւնը և ընտրական ձևը ենթարկելու Երևանի անմիջական ազդեցութեանը, մանաւանդ այն օրէն իվեր երբ սոսկական մարդ մը, Ա. Արփիարեան, կ'ապտակէր նուրեանի նման թիւթպէաւոր երեսփոխան մը, և երբ ըսկըսան ծայր տալ Հայկական գաւառներու մէջ տեղի

ունեցող վայրագ խժոժութիւններու մասին սուր վիճաբանութիւններ Ազգ. Երեսփ. ժողովին մէջ: Բայց Պատրիարքարանը տակաւին չէր ունեցած շրջան մը, որուն մէջ այսքան անպատկառօրէն թառած ըլլար ապօրինութիւնն ու պատրիարքական անսանձ ու անսահման դիկտատորութիւնը: Կաթոլիկ եկեղեցին ու կաթոլիկ կրթութիւնը միշտ անհաշտ թշնամանքով մը վերաբերուած են ժողովրդական ձայնին ընդդէմ, և անոնց փայտայած սկզբունքը եղած է եկեղեցական միապետութիւնը, որ այլևս քաղաքակիրթ ազգերու մէջ չատին մտքին իբրև ցուցանիչը նկատուած է: Օրմանեան, կաթոլիկ դաստիարակութեան գաւազ, չէր կրնար տարբեր կերպով վերաբերուիլ իրեն յանձնուած ազգային աւանդին հետ, քանի որ մանաւանդ ժամանակը կը թոյլատրէր և դէպքերու ծնցուցած սոսկումը գինքը կը նպաստաւորէր:

Իր ապօրէն ընտրութեան համընթաց քալեցին ապօրէն ժողովներ, պղտոր ու անվաւեր աղբիւրներէ բղխած: Առաջին օրերուն՝ ժողովուրդը ցուրտ դիտող մըն էր, մխիթարութեան և յոյսի ծարաւի: Օրեր, տարիներ անցան, և ո՛չ մէկ քաջակերական շարժում չի խնդաց ժողովուրդին: Քաղաք. ժողովոյ մեծամասնութիւնը կը բաղկանար թրքամոլ պաշտօնեաներէ, որոնք իրենց ժողովականի հանգամանքը նկատի առած ատեն, ինքզինքնին ազդուած կը զգային աւելի իրենց թուրք համազգեստներէն, քան թէ ժողովականի ազգային պարտականութենէն: Շնորհազուրկ կամ պաշտօնանկ ըլլալու երկիւղը, Սուլթանէն վարձատրուելու մարմաջը ա՛լ բաւական էին այդ վարձկան ժողովականներուն սրտէն խլելու համար ո՛ր և է ազգային զգացումի բողբոջում, թողով որ մեծ լարախազացը, իր աճպարարական նախագահութեան թեարկութիւնով, մինչև իր միապետական երազանքին կատարը բարձրանայ, անկէ ծիծաղելու համար նախ ժողովականներուն, և

ապա ազգին քթին: Եւ ցաւալի է ըսել, թէ չի գտնուեցաւ ժողովական մը, որ համարձակութիւնն ունենար դիմակազերծելու այդ կեղծ հայ Լոյոլան, իր անբարոյական և աղտոտ նկարագրին, իր դիկտատորի ձգտումներուն և իր զեղծանողի ապօրէն յարատենջութիւններուն մէջ: Թողո՛ւնք այդ պարկեշտ համարձակութեան պակասը, զոր թերևս ուզէինք ներել, նկատողութեան առնելով ժամանակը, երկրին դժնդակ վարչութիւնը և անիրաւ հալածանքները, որոնք կայծակի պէս արագ կը հասնին բոլոր անոնց գլխուն, որոնք Ելլտրզի պահանջածէն և Օրմանեանի հաճելի եղածէն աւելին կը պահանջեն: Բայց եթէ անկեղծութիւնը և համարձակութիւնը արգելուած պտուղներ են, գոնէ կեղծիքն ու քրծնումը պարտաւորիչ չեն և պէտք չէին ըլլալ ո՛չ մէկ ժողովականի համար: Եւ, ո՛չ մէկ կերպով պարտաւորիչ եղող կեղծաւորութիւն մը, պաշտօնականացած կեղծիք մը, հանդիսաւոր օրերու մէջ արտայայտուած, մեզի համար ստութիւն մըն է, հետևաբար ազգային դաւաճանութիւն մը, քանի որ այդ պաշտօնական սուտը անպատկառօրէն կը նուիրագործէ ազգային կեանքին դէմ նիւթուած ամէն ստորնութիւն, և միջոց չի տար աւելի լաւին, աւելի մաքուրին և աւելի կենսականին վրայ խորհելու:

Անգամ մը աչքէ անցուցէք, ամանորի առթիւ Ազգ. Պատրիարքարանի մէջ տեղի ունեցած հանդէսները և անոնց նկարագրութիւնը թերթերու մէջ, և այն ատեն պիտի հասկնաք այդ հանդէսներուն անբարոյացուցիչ դերն ու հանգամանքները: Ես ինքս տըխուր բաղդը ունեցայ օր մը ներկայ գտնուելու այդ հանդէսներէն մէկին: Պատրիարքարանի ժողովականները յափրացած ըլլալով հանդերձ ամբողջ տարուան մը մէջ իրենց կրած յուսախաբութիւններէն և անորակելի տալիսավոլուութենէն, ամանորին, կը կազմեն թափորը. հանդիսականներուն կը նախագա-

Հէ Օրմանեան, ցոյցի ու երևոյթի սիրահար այդ արարածը: Պատրիարքարանի դակտիլը լեցուն է ժողովականներով, ժողովուրդի մեծամեծներով, ուսուցիչներով, տիրացուներով... Մոգական նշանը կը տրուի, դէմքերը կը լրջանան, ամէն մարդ ոտքի վրայ է արդէն: Քաղաք. ժողովի անդամներէն մին կը կանգնի ժողովրդական կիսաբոլորին մէջ, իր ուրտ է ն կ ոթ ը կոճկած, կը կարդայ իր ճառը. Օրմանեանի աստուածացումի ներբողն է որուն կը յաջորդէ ուսուցչապետին ճառը, յետոյ դպիրինը, յետոյ տիրացուինը: Ինք կ'ունկնդրէ ատոնց ամենուն, նախ սկեպտիկի մը, ու հետզհետէ ջերմեռանդի մը հաւատքով, կը հաւատայ կեղծուած կեղծիքին, այդ ոսկեզօծ սուտերը, այդ քաղցրահամ յերկրանքները իբրև իրականութիւն կ'ընդունի, ու այնուհետև ինքն ալ կը խօսի իր պատգամաճառը, գ ա ճ ա ճ գ ա հ ա ճ ա ու ը, կը թուէ ամբողջ տարուան մը գործունէութիւնները, որոնք անուն ունին միայն թուղթի վրայ, կը պատմէ ազգին յառաջդիմութիւնները՝ իր օրով կատարուած, իր կայսերական մաղթանքը կը կատարէ, և երբեմն ալ այս առթիւ չի մոռնար «ցրկեանս պատրիարք մնալու» փափաքը արտայայտել: Օրմանեանի նախագահութեան տակ կազմուած Քաղաք. ժողովին պաշտօնն ու պարտականութիւնը կը կայանայ պաշտօնական օրերու և հանդիսաւոր վայրկեաններու մէջ սուտեր և կեղծիքներ շռայլելուն մէջ միայն: Ի՛նչ փոյթ թէ վաղը ցուրտ իրականութիւնը, իր անողոք պահանջներով, պիտի գայ ցցուիլ իրենց առջև, ո՛չ միայն խախտելու համար օր մը առաջ կառուցուած կեղծիքի պալատները, այլ և խղճմըտանքը անոնց, որոնք պաշտօն ունին զեղծանելու համար միայն, և ձայն՝ իրենց սրիկայական պոռչքատուքին մէջ մարելու այրիին արցունքը և որբին բողբոջը:

Տատեան և Նորատունկեան Ռոտէններ միայն ե-

ղան, Լոյոլա պատրիարքի մը քով, որ իբրև նոր ճէնկիդ խան՝ ժողովուրդին արիւնը ծծեց: Տիգրան Յուսուֆեան կրաւորական գործիք մը միայն եղաւ Օրմանեանի ձեռքին մէջ: Արալանեան փաշա՝ մերթ ընդդիմադիր, և յաճախ կուսակից ձայնը պատրիարքական զեղծումներու: Միհրան Սէթեան, շուկայիկ միտք, աւելի հաշիւ խօթեց իր գործելու շարժառիթներուն մէջ, քան թէ ազգային զգացում: Իսկ Ասասեան՝ յոգնած իր փաստարանի ամուլ ճառերէն, աւելի մրափեց քան խորհրդածեց: Եթէ այդ կեղծապարիչտ ցուցադրութիւններուն, այդ անպատկառ ստութիւններուն թողած խորհրդաւոր լռութեան խորէն, շիտակութիւնն ու արդարութիւնը ձայն բարձրացնէին, ապահովաբար սա բառերը պիտի գործածէին ամանորի հանդէսներու հանդիսականները որակելու համար.

— Վատեր, և դո՛ւն, պատրիարքներուն վատագո՛յնը, դուք ազգն ու պարտականութիւնը սա ճոխ սալոնին չորս պատերուն մէջ կը սահմանափակէք, ու անկէ դուրս չի կրնար թափանցել ո՛չ ձեր միտքը և ո՛չ ձեր զգացումը, որոնք փառքի ստուերներու տակ կուրացած են հիմա: Քննեցէ՛ք ձեր խիղճը, արիւնով ու թարախով լճացած, հարցուցէ՛ք միութարութեան ու արդարութեան ծարաւի ժողովուրդի զաւկին, որուն վէրքերը միակ ընթեռնելի նշանագիրն են ձեր վատաբարոյ կեանքին պատմութեանը, հարցուցէ՛ք հարստահարուած հայերուն, որոնց բողոքի ձայներուն դէմ ականջնիդ խցեցիք, հարցուցէ՛ք մահամերձ վիրաւորին, որուն քովէն սառնասիրտ անցաք, աչքերնիդ փակելով, հարցուցէ՛ք ձեր նաւահանգիստներէն ձեռնունայն ետ դարձուած վաճառականներուն, որոնք բռնի սնանկութեան կ'առաջնորդուէին, հարցուցէ՛ք տարագրուածներուն, որոնց դրամները իւրացուցիք, և թողուցիք որ անթի ծարաւ մեռնին իրենց զաւակներուն հետ, հար-

ցուցէ՛ք՝ ձեր անտարբերութեան ու կաշառակերութեան երեսէն՝ հողերէն ու եզներէն զրկուած երկրագործին, հարցուցէ՛ք վերջապէս թուրքին ու քիւրտին ձեռքով լլկուած աղջիկներուն, հրդեհուած գիւղերու բնիկներուն, Աղթամարի կործանուած եկեղեցիին, և անոնք ձեզի պիտի պատմեն թէ ո՛վքեր էք, և պիտի համոզուիք, թէ ի՛նչ նիւթերէ կազմուած է ձեր փառքն ու գործունէութեան համբաւը: Վատե՛ր...

Մեր ազգային ճակատագրական դժբաղդութիւններէն մէկն ալ եղած է հոգևորականութեան տիրապետութիւնը մեր վրայ: Անժառանգներու դժբաղդութեան շղթան ծանրացնող ոյժ մը ունի կրօնքը, եկեղեցականին կողմէն քարոզուած: Ընդհակառակը, ծագումներնուն մէջ, բոլոր մեծ կրօնները, աւելի բողոքող եղած են քան համակերպող: Յիսուս այլևս պէտք չէ՛ նկատուի մեղքերու քաւիչ մը, կրօնական իմաստով, այլ զրկումներու դէմ բողոքող մը, որ իր մէջ կը խտացնէ դարերէ իվեր քաղաքական անիրաւութիւններու ժանգոտ շղթաներուն տակ հեծող ժողովուրդներուն բողոքը: Չի համակերպիր, այլ կ'ուզէ յեղաշրջել տիրող քաղաքական կարգն ու սարքը, ազատութեան շունչ մը ներարկելով թմրած հոգիներուն, և իբրև փրկութեան խորհրդանշան խաչը ցոյց տալով, խաչը, մահուան համազօր, որ պատրաստ պիտի ըլլայ յեղափոխական ոգիով օծուած անձնուրաց Ֆէտայիներուն:

Մեր եկեղեցականը սխալ մեկնիչը եղաւ Աւետարանին. ինք պորտաբոյժ մեղկութեան, անյազ չահի և անկուշտ փառքի ծարաւի, վամբիրի մը պէս ծծեց արիւնը այն ժողովուրդին, որուն հոգի, շունչ, կորով տալու կոչուած էր: — Այս պայմաններով կազմակերպուած եկեղեցականներու կրօնական ժողով մըն էր որ Օրմանեան պատրիարքին պիտի օժանդակէր, ազգը կառավարելու և ուղղելու համար անոր

քայլերը դէպի ապագան, երբ ներկան փշոտ էր և ճամբան քարքարուտ :

Ո՞վքեր էին այդ կրօն․ ժողովը կազմողները, և ի՞նչ էր արժէքը այն տարրերուն, որոնցմով ձուլուած էր փարիսեցիներու այդ վռնմակը : Անոնցմէ երկուքը շատ յասկանշանական ու կարկառուն գծերով կը ներկայանան մեր աչքերուն : — Յովհաննէսւրան Գրիգորիս և Մանկունի վահրամ եպիսկոպոսները : Երկութիւն մը, որ հակառակ անձնական ա՛յնքան հակասութիւններու, տեսակ մը անձանաչելի համերաշխութիւն ձևացուցին ամբողջ տարիներ : Անցեալներն . . . Մէկը Հնդկաստանի առաջնորդ, կողոպտիչ ու կեղծարար Մանկունին, հեշտասէր կաթողիկոսի մը «հոգեզաւակ», որ իր պետին, Գէորգ Կաթողիկոսի թրքամոլութեան յագուրդ տալու համար, Բաֆֆիի գրածին համաձայն, էջմիածնի պարիսպներուն տակ անօթութենէ մեռցուց Տէր Ղուկասօֆներու ձեռքով կոտորածէ փրկուած հազարաւոր Ալաշկերտցիներ, և որ յետոյ՝ Գէորգ Կաթողիկոսի մահուան ժամուն, էջմիածինը կողոպտելով երկարատեան անյայտ մնաց, և ռուսական կառավարութեան կողմէն իր գոյքերը խուզարկութեան ենթարկուեցան :

Երկու բարձրաստիճան եկեղեցականները, իրենց մութ ու մռայլ անցեալով ապականուած ըլլալէն վերջ, կուգային Օրմանեանի ապօրէն ընտրութեանը գործակցիլ, ապօրէն միջոցներով : Մանկունի, հակառակասիրութեան շեշտուած ոգիով, ջանաց իրեն համար ուրոյն տեղ մը, դիրք մը ստեղծել կրօն․ ժողովին մէջ, բայց իր անկեղծութիւնը կասկածելի, իր ճակատը ցեխոտ, իր միտքը յետսադէմ, իր համոզումը անորոշ ըլլալուն, խօսեցաւ միշտ, և աւելի քանդող մը եղաւ քան թէ շինող : — Պարտիարքական փոխանորդը, Գաբրիէլ Ճէվահիրձեան, ճշմարիտ թ ապլ օ - վի վ ա ն մը, անհատականութենէ, սկզբունքէ, նկարագիրէ զուրկ արարած մը, որ իր այդ



Հանգամանքով միայն կրցած էր իր աթոռը պահպանել: Եւ ասոնց Հետ կարգ մը քահանաներ, որոնք աւելի ջրհանկիր ըլլալու յարմարութիւն ունէին, քան թէ ազգի մը ճակատագրին հարցովը զբաղուելու: Ո՛ր էր ազգայնութեան բնադրոշմը, ո՛ր էր շարժումի, կեանքի յայտարար նշանը: Այդ պաշտօնական խրտուիլակներուն աննպատակ երթեկը բան մը չէր կրնար փոխել իրաց կացութենէն, բայց կրոնար զօրացնել Օրմանեանի տիրապետութիւնը, անոր անձնական միտումներուն համաձայն:

Օր մը Լեօնինք, թէ սա բառերով կը պարծենար Օրմանեան պատրիարքը, յղփալից սեղաններէն մէկուն վրայ.

— «Պատրիարքութիւնս կը փափաքէի որ միակեծան ըլլար, դէպքերն ու ժամանակները նպաստեցին ինձի, և ես փափաքեցայ, որ ժողովականի անունին տակ փայտէ մարդեր ունենամ, և ես փափաքիս հասած եմ այսօր»:

Որպէսզի մեր ընթերցողները որոշ տեղեկութիւն մը ունենան Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանի ժողովական կազմակերպութեան ստորնութեան, և անոր ձեռքով ազգին գլխուն հասած փորձանքներուն մասին, ըսենք թէ Հինգ տարիներ առաջ Սասնոյ երկրորդ կոտորածը տեղի ունեցաւ, և անոր աղեկէզ ողբերգութիւնը հասաւ Պատրիարքարան: Օրմանեան երլարդէն 300 ոսկի կաշառք մը առնելով անյայտացուց թուղթերը և ո՛չ մէկ ժողովական չի կրցաւ որոշ տեղեկութիւն մը ունենալ այդ ջարդին մասին: Եւ հակառակ դուրսէն եղած ստիպումներուն, ո՛չ մէկ ժողովական համարձակեցաւ պատրիարքէն փնտռելու այդ թուղթերը:

Աւելի՛ն կայ:

Վանի վերջին դէպքերուն միջոցին, թուրք կառավարութիւնը իր թնդանօթներով կրակ ըրաւ Աղթամարի վանքին վրայ, և կործանեց Գագիկ թա-

գաւորի շինել տուած եկեղեցիին գմբէթն ու կամարները: Տեղւոյն վրայ պատրաստուած կառավարական ռափօրը կը գրէր թէ՛—«Հայ յեղափոխականներ Աղթամարայ վանքը մտնելով կողոպտած, և եկեղեցին կործանած են»: Թրքական այս կեղծիքին հաստատութիւն մը տալու համար կը կանչուի ծերունազարդ Յովսէփ Եպիսկոպոսը, և կը բռնադատուի ստորագրել այդ ռափօրը: Եպիսկոպոսը կը մերժէ, հակառակ իրեն եղած խոստումներուն ու սպառնալիքներուն, յայտարարելով թէ՛ — «Ես արդէն կեանքս ապրած ու աւարտած եմ, այսուհետեւ մահուան միայն կը սպասեմ, չե՛մ կրնար իմ ճերմակ մօրուքս աղտոտել սուտ վկայութիւնով մը, յեղափոխականներու վերագրելով քանդումը մեր նուիրական եկեղեցւոյն, զոր ձեր թնդանօթները կործանեցին»:

Թուրք բռնապետութիւնը անճրկեցաւ ծերուկ և գեղջուկ եպիսկոպոսի մը հանդէպ, ու վրէժխնդիր ժպիտով մը ճամբու դրաւ զինք: Չորս ամիս վերջ հազիւ թէ կարևոր տեղեկագիրները Ազգ. Պատրիարքարան հասան: Օրմանեանէն խնդրուեցաւ, որ պէսզի աղաչողական դիմում մը ընէ, և խնդրէ յետ այսու զինուորներու և զօրքերու կողմէն ըլլալիք աւերումներուն վերջ տալու համար: Լսեցինք թէ Օրմանեան ու իր ժողովականները քնացան Աղթամարի աւերակներուն վրայ: Բայց թուրք կառավարութիւնը նոյն բանը չըրաւ, տեսնելով որ Պատրիարքարանի մարդերը կատարեալ անտարբերութեամբ սորված են համակերպութիւն ցոյց տալ թուրք կառավարութեան կողմէն ի գործ դրուած ամէն բռնական միջոցներուն, որոչեց նոր խնդիր մը յուզել Հայ ազգին հանդէպ և գրեթէ սա բռնեցով Ատլիէի նախարարութիւնը ի ագրիթի մը տուաւ Ազգային Պատրիարքարան:

«Ժամանակէ մը իվեր ներքին գաւառներու հայ

վանքերուն մէջ յեղափոխականներ կը պահուըտին , վանահայրերու կողմէն տրուած թոյլտուութեամբ , և եկեղեցիներ քանդելու նման վնասակար ձեռնարկութիւններու մէջ կը գըտնուին : Որպէսզի այդ տեսակ վնասակար արարքներու առաջը առնուի , կը ծանուցանենք ձեզ , որ պէտք եղած աղդու հրամանները տաք վանահայրերու , որպէսզի յեղափոխականներու ապաստանարան չի տըրուի , ապա թէ ո՛չ կայսերական կառավարութիւնը պիտի ստիպուի զօրքեր բնակեցնել բոլոր հայ վանքերուն մէջ» :

Պատրիարքարանը կայսերական այս բարեհաճ իրատէն գործադրեց , վանահայրերուն պէտք եղած պատուէրները տալով , և չամչցաւ , խորհելով թէ ինչ որ վանի տեղական կառավարութիւնը չի յաջողեցաւ Յովսէփ Եպիսկոպոսի միջոցաւ , նոյնը յաջողեցաւ ձեռք բերել Պոլսոյ մէջ , Օրմանեանի և իր վատազգի ժողովականներուն համակերպող լուութեամբ :

Եւ երբ նոր տարին եկաւ , նորէն լեցուեցան Պատրիարքարանի դահլիճը , և նորէն հանդիսատես եղանք այն կեղծապարիշտ և ամօթապարտ լկտութեան , որով ժողովականք և պատրիարք զիրար կը դրուատեն անցնող տարւոյն մէջ իրենց ունեցած ազգօգուտ գործունէութեան համար , ջանալով ազգին աչքին փչելու այն մոխիրները , զոր իրենց վատութիւնը՝ թուրք կառավարութեան խժդժութիւններուն միացած , սիռեց ներքին գաւառներու լալկան կեանքին վրայ :

Կը յիշէք , անշուշտ , Օրմանեանի պատրիարքական ուխտը կամ երդումը եզական նորութիւն մը եղաւ նման իր ընտրութեան :

Խրիմեան , Վարժապետեան , Վեհապետեան , Ալըգեան , Իզմիրեան երբ պատրիարք ընտրուեցան , Մայր Եկեղեցիին մէջ իրենց հանդիսաւոր ուխտը ըրին . . . « Հրապարակաւ կ'ուխտեմ հաւատարիմ մնալ

տէրութեան և ազգիս, և ճշմարտապէս հսկել Սահմանադրութեան անթերի գործադրութեանը»։ Եւ այդ պատրիարքներուն ամենքն ալ կատարեալ խղճմըտութեամբ կատարեցին իրենց ուխտը, փրկելու համար այն լաստակը — Սահմանադրութիւնը — որ ընդհանուր ազգային ալէկոծութեան միջոցին, իբրև միակ փրկութեան միջոց, մնացած էր մեր ձեռքը։ Ասոնցմէ միայն Խրիմեան Հայրիկ, նկատելով, թէ իր խանդոտ զգացումներուն համար նեղ կուգար Սահմանադրութեան գծած շրջանակը, և չէր թողուր զինքը ինքնագլուխ շարժելու կարգ մը թոյլ ժողովականներու մէջ, պատրիարքութենէ իր հրատարականք տուաւ և քաշուեցաւ, չուզելով ազգային օրէնքը բռնաբարողի աղտոտ անունին արժանանալ։ Իսկ իրմէ վերջ եկող պատրիարքները, եթէ մերթընդ մերթ պզտիկ շեղումներ ունեցան Սահմանադրութեան ոգիին ընդդէմ, այն ատեն Ընդհ. Երեսփ. ժողովը Սահմանադրութեան ճրգ. և ճրդ. յօդուածներու տրամադրութիւնը գործադրել ջանացած է, կատարեալ օրինաւորութեամբ։

Բարթողիմէոս Եպիսկոպոսի սեղապահութեան օրով, թուրք կառավարութիւնը յաջողեցաւ, կարգ մը վարձկան ազգայիններու ստորնութեամբ, Ազգ. Սահմանադրութիւնը՝ 99րդ յօդուածի տրամադրութեամբ՝ վերաքննութեան ենթարկել տալ։ Կառավարական-Բարթողիմէոսեան այս առաջարկը ականբերեալաւադրութիւն մըն էր ազգային իրաւունքներուն դէմ։

Սահմանադրութեան մտադրուած վերաքննութիւնը պէտք էր միշտ ի նպաստ ազգին ըլլար, գոնէ այս էր Սահմանադրութեան հեղինակներուն՝ Մկրտիչ Աղաթոնի, Ապանեան Ստեփանի, Ռուսինեանի, Գրիգոր Օտեանի միակ ու միակ նպատակը։ Սուլթանին կառավարութիւնը Սահմանադրութեան վերաքննութեան այդ ազգային նպատակը խափանելու

Համար վերաքննութեան սահմանեց այն տեսակ ժամանակ մը, երբ՝ Պանգայի զէպքերուն բերմամբ, ամէն կողմ, նոյնիսկ Պոլսոյ փողոցներուն մէջ, Հայաջինջ արիւնք կը հոսէր, երբ ազգին երեսփոխաններուն ամենէն անձնուէրները մեռած կամ փախած էին Պոլիսէն, և երբ Բարթողիմէոսին նման թրջամուլ և պորտաբոյծ անձեր միայն կային կառավարութեան ձեռքին տակ: Օրմանեան, ապօրէն ընտրութեան ծնունդ, մէկ կողմէն լաւ երևնալու Համար Սուլթանին աչքին, և միւս կողմէն միահեծանօրէն և սանձարձակ դիմելու Համար իր թաքուն, փառամուլ և ազգակործան նպատակներուն, բոլորովին հակասահմանադրական ուխտով մը նստաւ պատրիարքական աթոռը: Այդ պատրիարքական երդումը կատարած էր «ապագայ վերաքննեալ Սահմանադրութեան» վրայ: — Մարդ իր պատւոյն վրայ երդում կ'ընէ, եթէ ունի այդ պատիւը, կը ջանայ կատարել իր երդումը, միմիայն իր պատուաւորութիւնը ցոյց տալու համար: Օրմանեան երդուընցաւ ապագայ օրէնքի մը վրայ, և այդ օրէն ինքզինքը զերծ նկատեց ո՛ր և է պատասխանատուութենէ: — «Տուէ՛ք վերաքննեալ Սահմանադրութիւնը, և ես կէտ առ կէտ պիտի գործադրեմ զայն, իմ ուխտիս համաձայն»:

Չի խորհեցաւ վատը, թէ ընդհանուր սկզբունք մը կայ, որ ամենուրեք կ'իշխէ, և պէտք է իշխէ նոյնիսկ ամենէն ապականուած ու աղտոտ հոգիներուն վրայ: Այդ սկզբունքը սա է թէ, օրէնք մը կրնայ փոփոխութիւններու, սրբագրութեան կամ վերաքննութեան ենթարկուիլ, բայց մինչև որ աւարտի այդ վերաքննութիւնը, օրէնքին նախնական ձևը չի դադրիր գործադրուելէ, և ամէն գործադիր ժողով կամ անհաս պարտաւոր է այդ օրէնքը տառապէս գործադրել, մինչև որ վերաքննութիւնը աւարտի, և օրինաւոր հեղինակութիւն մը փոփոխուած օրէնքը վաւերացնէ, և հրամայէ անոր գործա-

դըրութիւնը: Օրմանեան, կարգ մը մարդերէ ազդըւած, վերջապէս իմաստութիւնն ունեցաւ այդ վերաքննութիւնը ձգձգելու, մինչև որ մեր ազգային սա աննպաստ կացութիւնը դադրէր գոյութիւն ունենալէ: Բայց այդ իմաստութիւնը պսակուեցաւ բուն օրէնքը արհամարհելու և ոտնակոխ ընելու իր անսանձ վատութեամբը: Միապետութիւնն ու անպատասխանատու ղիկատորութիւնը ա՛յսքան անպատկառօրէն հրամայած չէին Պատրիարքարանի մէջ, նոյնիսկ ամենէն ամիրայական օրերուն: Նախ «Սահմանադրութիւն» անունը խափանուեցաւ, և եղաւ «Պատրիարքարանի Օրէնք»: Նպաստի Մնտուկին դըրամները ըստ կամս մատակարարուեցան, և գործածուեցան պատրիարքական համախոհներու պէտքին ու հաճոյքին: «Փայտէ մարդերու» ժողովները փոխանակ երկու տարիի (ըստ Սահմանադրութեան 26րդ և 38րդ յօդուածներուն) ամբողջ ինը տարիներ շարունակեցին, միշտ առանց մեծամասնութեան, և երբ մաշը հետզհետէ պակսեցուց ժողովականներուն թիւը, և անդամատեց անոնց ամբողջութիւնը, այն ատեն միայն սթափեցաւ Օրմանեան, և ուզեց հիւլէի շէրիին դիմում ընել, նոր կատակերգութիւնով մը ժողովներու ընտրութեան սկսելով: Այդ ժողովական ընտրութիւնները կատարելու համար Օրմանեան իբր թէ Սուլթանին կառավարութենէն արտօնութիւն ստացաւ: Բայց որպէզի կարենանք հասկցնել մեր ընթերցողներուն, թէ ի՛նչ արժէք ունէր այդ կառավարական արտօնութիւն ըսուածը, և թէ օրինական յրպիսի խախուտ հիմեր ունի այսօրուան Պատրիարքարանի ժողով ըսուած կրկնակի իմբակին գոյութիւնը, կ'ուզեմ հոս համառօտակի նկարագրել այդ խաղցուած Օրմանեանական կատակերգութիւնը:

1906 Յուլիս 24ին քանի մը երեսփոխաններու, թիւով 52, նամակներ գրուեցան Պատրիարքարանէն, ծանուցանող, թէ միւս օրը Պատրիարքարանի մէջ

տեղի պիտի ունենար կրօնական և Քաղաքական Ժողովներու օրինակ որ ընտրութիւնը: Այդ հրաւիրագրերուն հետ զրկուեցան նաև միանուն ու եռանուն ցանկեր, որոնց վրայէն պիտի կատարուէր ընտրութիւնը: Ծուղակը այնքան լաւ լարուած էր, և նշանառութիւնը այնքան ճշդութեամբ կատարուած, որ արդիւնքը անվրիպելի պիտի ըլլար: Միւս օրը, Յուլիս 25, Օրմանեանի անուան տօնախմբութիւնն է: Ծնորհաւորութեան պատրուակին տակ հազիւ 25 երեսփոխան ներկայացան Պատրիարքարան, ուր պաշտօնէութիւնը Օրմանեանի կողմէն պաշտօն ստանձնած էր մի առ մի տեսակցել երեսփոխաններուն հետ, և անոնց հաղորդել, թէ Սուլթանը (իմա՛ Օրմանեան) կ'ուզէ որ տրուած ցանկէն դուրս մարդու քուէ չի տրուի: Որովհետև բոլոր անոնք, որոնք խօսիլ, դատել և զգալ գիտէին, դուրս ձգուած էին այդ ցանկերէն: Իսկ այն երեսփոխանները, որոնք չի պիտի ուզէին Պատրիարքարան գալ, մասնակցելու այդ կեղծուած քուէարկութեանցը, իրենց տուններուն մէջ ստացան սուլթան-պատրիարքական սպառնալիքին յայտարարութիւնը, և այսպէս, առանց օրինական նախապատրաստութիւններու, առանց օրինաւոր պայմանաժամի և ցանկերէն դուրս գտնուող անձերու քուէ տալու երեսփոխանական ազատութիւնը յարգուելու, ընտրուեցան ժողովներ, սուլթանական վարչագիտութեամբ մը, որ յաւէտ ո՛չ յիշատակելի գործ, այլ իբրև ազգային ամօթ պիտի կրնայ արձանագրուիլ պատրիարքական և ժողովական յիշատակարաններու մէջ:

Եւ ուշ կամ կանուխ, երբ հաշուեյարդարութիւն մը կատարենք Օրմանեան պատրիարքին հետ, սա հարցումները պիտի նետենք անոր երեսին, հարցումներ, որոնք իրեն դէմ տրուելիք դատաւճռին հիմը պիտի կազմեն:

1. — Եթէ կառավարութեան կողմէն արտօնուած

էր Վարչութիւնը վերակազմել օրինաւորապէս, ի՞նչու ուրեմն չի յարգուեցան օրէնքին տարրական սկզբունքները, և ի՞նչու 140 երեսփոխաններէն 25ին ներկայութիւնը միայն բաւական նկատուեցաւ ընտրութեան համար, մինչդեռ առնուազն 71 երեսփոխաններու պէտք մը կար օրինական մեծամասնութիւնը կազմելու համար:

2. — Օրէնքը կը պահանջէ հրաւիրագիր և «կարգ խնդրոց» անդամներուն հաղորդել ընտրութենէ 8 օր առաջ, ի՞նչու մէկ օր միայն պայմանաժամ տրուեցաւ, և զաղտագողի գործուեցաւ:

3. — Օրինաւոր ընտրութիւններու միջոցին միանուն և եռանուն ցանկերը երեսփոխանութենէն կազմուած յանձնաժողովներ կը պատրաստեն, քանի որ այս ընտրութիւններու մէջ այդ յանձնաժողովները չի կան, ուրեմն այդ ցանկերը որո՞ւ ձեռքով կազմուեցան:

4. — Սահմանադրութիւնը կը պահանջէ, որ ընտրեալը առնուազն 30 տարիքը լրացուցած ըլլայ, ի՞նչու 25-26 տարեկան անդամներ առնուեցան:

5. — Ի՞նչ նպատակի կը ծառայէին Օրմանեանի ազդարարութիւնները միայն իր նշանակած մարդերուն քուէ տալու համար, և ի՞նչու սպառնալիքով ու սարսափով սահմանափակուեցաւ ընտրողներուն ազատութիւնը:

6. — Ի՞նչու անձնական ծրագիրներու յաջողութեան, և անձնական վրէժխնդրութեան յազուրդ տալու համար, կարգ մը մարդիկ մրտուեցան և կասկածելի նկատուեցան Սուլթանին կառավարութեան:

7. — Ո՞ր օրէնքով նախորդ Վարչութեան անդամները վերընտրելի ներկայացուեցան, և այս մասին Սահմանադրութեան 26րդ և 38րդ յօդուածները բռնաբարուեցան:

8. — Եթէ այդ ընտրութեան նպատակը ո՛չ թէ



նոր ընտրութիւն էր, այլ հին ժողովներու պակաս անդամներուն թիւը լրացնել, ի՞նչու ուրեմն դուրս ձգուեցան Ռ. Եռուսուֆեան, Գ. Խտրեան և այլն, և եթէ այս վերջինները հիւանդներ էին, ի՞նչու անոնց տեղ ուրիշ հիւանդներ բերուեցան:

9. — Ի՞նչու խարդախուեցան Գէորգ Եպիսկոպոսի և Տէր Կարապետի տրուած քուէները:

10. — Ո՞ր օրէնքով ընտրեալ հոչակուեցաւ համեմատականի մնացած վահան Սուրէնեանը:

11. — Ո՞ճիր չէ՞ օրէնքի պահպանութեան պատրուակին տակ օրէնքը սպաննել:

12. — Ո՞ճիր չէ՞ այս բոլոր խարդախութիւնները կատարել, հացկատակներու ձեռքով, և իբրև օրինաւոր կլլեցնել ժողովուրդին այս բոլոր ապօրինութիւնները, և գրեթէ երկու ամիս վերջ միայն իբրև օրինաւոր ընտրութիւններու արդիւնք հոչակել այս վիժած ժողովներուն կազմութիւնը, որոնց անդամներու կէսը՝ եթէ ո՛չ աւելին՝ Դրան պաշտօնական լրտեսներն են, մեծ մասը բացարձակօրէն անբաններ և մակարոյծներ, և մնացեալը զազիր շահագէտներու խումբ մը:

1906 ի Յուլիս 25 ի Երկուշաբթին, «Երկոտասան Մարգարէից» տօնին օրը, Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանի դահլիճին մէջ թաղման հանդէսը կը կատարուէր Ազգ. Սահմանադրութեան, որուն դահլիճը եղաւ «Երկոտասան Մարգարէից» կրտսերագոյնին անուանակից, վատազգի Մաղաքիա Օրմանեան, իր շուրջը ունենալով փոխանակ 12 մարգարէներու, 25 աղտոտ դաւակիցներ:

Այդ ոճրագործութեան և Սահմանադրութեան թաղման հանդէսին մէջ, Օրմանեան հնաւանդ սովորութեան մը միայն պատկառ կեցաւ: Տակաւին ցարգ գաւառներուն մէջ ազգայնացած սովորութիւն մը կայ: Մեռելի մը յուղարկաւորները երբ փոսը կը ծածկեն հողով, և դուրս կ'ելեն գերեզմանատու-



նէն, դրան մօտ մատուակուած օղիէն հատ մը կը խմեն, հանգուցեալին հոգւոյն հանգիստ մաղթելով: Օրմանեան նոյն օրը կատարուած օրինաւոր գործողութեանց յաջողութեանը սատարող Պատրիարքարանի աւագ պաշտօնէից՝ իբրև վարձատրութիւն՝ մէկ ոսկի նուէր տուաւ, երթալ Սբեմտիտի մէջ

պաղ գարեջուրով զովացնելու համար իրենց պաս-  
քած ու չորքած կոկորդները :

Վատ գործ , որ գեղեցիկ շորերով կը ծածկուի :

### ՕՐՄԱՆԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԷՁ ԵՒ ԿՈՏՈՐԱՄՆԵՐՈՒՆ ՀԱՆԴԵՊ

Հայ եկեղեցին ու հայ եկեղեցականութիւնը՝ պատրիարքական աթոռին վրայ՝ ըստ ամենայնի պատկառանքով ու շուքով ցուցադրուեցաւ բաւական երկար ատեն : Լրջութիւնը , ստանձնուած դիրքին ու պաշտօնին հանդէպ յարգանքը , մինչև եղած այն յատկութիւններէն , որոնք իրաւամբ փնտուռեցան հայ պատրիարքներէ : Եւ պէտք է ըսել , թէ մեր բոլոր պատրիարքները , մինչև Օրմանեան , համեմատաբար կրցան ինքզինքնին պահպանել այն դիրքին մէջ , որուն կը բաղձար հայ ազգին անձնիրանհատը : Օրմանեան թեթևսօլիկութեան և հոպալա-յութեան աղտոտ թուական մը բացաւ Հայ Պատրիարքութեան տարեգրութեանց մէջ , և Աթոռի մը , ո՛չ թէ իր անձին , պատկանող շուքը , պատկառանքը ցելխի մէջ թաթխեց , և այսպէսով ստորնացուց պատրիարքութեան արժանապատուութիւնը : Օրմանեան դաստիարակուած ու սնուած կաթոլիկ միջավայրի ապականութիւններուն մէջ , կարգ մը ըստորին յատկութիւններու հետ ժառանգած է նաև ցուցամոլութեան և ջլգիկութեան ախտը , որ միացած է իր փառասիրութեան և դրամամոլութեան ցանկութիւններուն , և ժողովուրդը , թշուառ ու հարստահարուած ժողովուրդը , հանդէսներով խաբելու և քնացնելու կառավարական մտադրութեան ու բաղձանքին , զինքը ժամէ ժամ , եկեղեցիէ

ԱՄԵՆ ՃԱՄԲԱՅ ...  
ԳՈՂՄ ԿԸ ՏԱՆԻ



ՄԵԿՈՒ ՄԸ ԵՐԱՋԸ

եկեղեցի և հանդէսէ հանդէս վազցուց, և ինքզինքը ծայրայեղ լկտութեամբ մը, իբրև դերասան ներկայացուց բեմերուն վրայ, ոսկեճամուկ հանդերձանքներով, որոնց ներքև ո՛չ թէ ազգին ցաւերով մաշուած սիրտն էր որ կը տրոփէր, այլ երևնալու յարատենչ մարմաճը: Գրեթէ քսան տարի կաթուղիկ եկեղեցիին մէջ քահանայական պաշտօն վարած, վարժուած էր արդէն ամէն օր պատարագելու. այդ վաղնջուց սովորութիւնը խլուած չըլլալով իրմէ, և ինքը միշտ խորքին մէջ կաթուղիկ մնացած ըլլալով՝ հակառակ իր դրսերևութային կեղծ հայութեան, եթէ չի գտնէր եկեղեցիներու բազմութիւն մը, Պօլսոյ մէջ, ապահովաբար իր տունին մէջ պիտի կազմէր իր մասնաւոր սեղանը, և պապի մը պէս պիտի պատարագէր առանձին:

Մարդերու ներքին կեանքին խառնուելու նպատակ չունի՛նք բնաւ, եկեղեցական ներքին համոզումները մեզ չե՛ն հետաքրքրեր բնաւ, գիտենք միայն թէ եկեղեցականութիւնը կեղծի՞ք մը, արտաքնայարդար ոչնչութիւն մըն է, գեղերեսուած դիակ մը, որուն թաղումը մեզի չի պատկանիր: Բայց գոնէ իրաւունք ունինք խառնուելու այն գործերուն, որոնք ներքին կեանքի մը ժողովրդական ու հրապարակային արտայայտութիւններն են: Եւ ահա՛ այս պատճառով կ'ուզենք ուշադրութեան առնել Օրմանեանի պատարագիչի վազքը եկեղեցիէ եկեղեցի:

Օրմանեան, պանդուխտ ու մուրացկան քահանայի մը պէս, թաղէ թաղ վազեց, պատարագելու և ատով փայլուն երևնալու և դրամ դիզելու մարմաճով, բայց իր այդ նպատակները պարտկել զիտցաւ, ըսելով, թէ ինքը փափաք չունի, բայց թաղի ժողովուրդներուն թախանձանքին գոհացում տալու գիջումով միայն կը յօժարի այդ ձանձրոյթները յանձն առնել: Հարցուցէ՛ք թաղական խոր-

### ԱՆԿՏԱՂԵՐ ՄԵՆ ..

ՕՐՄԱՆԱ... Ե՛րբ քեզի սար ետի՛մ ձեր Պարտիզին.  
 ՊԱՍԿԱ... Երբեք չեմ անում: Ե՛րբ սարսուռով եմ: Ե՛րբ որչ կոպիտ սույն-բա՛ն  
 ՄԱՆԻՆ... Ե՛րբ, քեզի և պատեր.  
 ՕՐՄԱՆԱ... Ե՛րբ, արևը անգամներ արևն էլ չգամ...



հուրդներուն, և անոնք ձեզի պիտի պատմեն, թէ Օրմանեան ինչ անպատկառութեամբ զիրենք կը ստիպէ, մերթ աղաչելով և մերթ սպառնալով, որպէսզի զինքը հրաւիրեն իրենց եկեղեցիները:

Թուրք կառավարութիւնն անգամ ուշադրութեան առաւ Օրմանեանի պատարագիչի այս հապըտապ ընթացքը, որ մը Գարթալ և Ալէմտաղի երթալէ զինքը արգելեց, և պատեհ առթիւ մը, երբ

Սուլթանը Թահսինի բերնով Հարցումներ ըրաւ Օրմանեանի, իր այս անօրինակ երթևեկին առթիւ, Օրմանեան պատասխանեց. «Իս ստիպուած եմ Հանգիստս ծախել, եկեղեցիէ եկեղեցի վազել, դէպի սուլթանական գահը Հաւատարմութիւն քարոզելու ժողովուրդիս, և թոյլ չի տալու որ խռովարար յեղափոխականներ մուտ գտնեն ժողովուրդիս մէջ, և պղտորեն անոր Հաւատարմական զգացումները» : Թուրք կառավարութիւնը, չգիտեմ, գիտութեամբ թէ անգիտութեամբ, այլևս վեր չառաւ Օրմանեանի բուն նպատակը ծածկող վարագոյրը, և Սուլթանի գոհունակութեան բարեին Հետ 800 ոսկի պարունակող քսակ մը յանձնուեցաւ օրուան պատրիարքին :

Օրմանեանի առջև միայն Գատը-Գիւղի եկեղեցիին դուռը փակ մնաց, շնորհիւ Աբիկ Ունճեանի անսիրելութեան, և երբ Ունճեան սպաննուեցաւ, առաջին գոհունակութեան ձայն բարձրացնողը եղաւ Օրմանեան, քանի որ այդ սպաննութիւնը իր առջև կը բանար Գատը-Գիւղի եկեղեցիին դռները :

Պոլսոյ մէջ չի կայ Հայ մը, որ այս ամենուն Համոզուած չըլլայ սրտով ու խղճով :

Այդ չահախնդրական, ցուցամուլ պատարագները, որոնց նպատակը, ինչպէս ըսինք, նախ անձնական փառասիրութիւնն ու դրամամոլութիւնն էին, և յետոյ՝ ժողովրդական կեանքն ու զգացումները Հանդէսներով բթացնելու աղտոտ ու հակազգային մտադրութիւնը, երկու տեսակէտով վտանգեցին մեր ազգային կեանքի, Հայկական խնդրի կարևորութիւնը : Նախ, որ Հայ ժողովուրդը գրեթէ ամէն կիրակի գոհարանական աղօթք մը լսեց, փառաբանութեան ձայն մը, երգ մը հանդէպ Սուլթանին, զոր Օրմանեան չի խղճաց իբրև ազգին առատագութ և ամենողորմ Հայրը ներկայացնել : Ենթադրենք, պահ մը, թէ կեղծաւոր և պարագաներէ

Հարկադրուած փառաբանութիւն մըն էր կատարուածը, կատակերգութիւն մը, զոր Օրմանեան կ'ուզէր խաղալ հանդէպ այն Սուլթանին, որուն հիւանդ և խելագար մարմինը բիւրաւոր հայերու արիւնով լուացուեցաւ, և որուն իբրև դարուս Պիկմալիոնին սարսափը կոտորած մը աւելի յառաջ բերաւ մայրաքաղաքէն սկսեալ մինչև գաւառներու ծոցը թաղուած աննշան և մոռցուած գիւղին անկիւնը: Բայց ամէն կիրակի, պատրիարքական այդ գոհաբանական աղօթքները ելլտըզի Դահիճին տեղեկագրուեցան Սուլթանի խաֆիյէ ներուն ձեռքով: Սուլթանական աղօթքը պարտաւորիչ հանգամանք մը առաւ, և կասկածելի նկատուեցան բոլոր այն եկեղեցականները, որոնք առանց նոյն իսկ ուէթաքուն նպատակի, չուզեցին Օրմանեանի այդ աաղօթասէր սովորութեան հետեիլ: Միւս կողմէն՝ գրեթէ ամէն շաբաթ ժողովուրդը այդ լկտի աղօթքներուն ունկնդրելով, ինքն ալ վարժութիւնը ունեցաւ իր հաւատարմական զգացումներուն իրական արտայայտութիւնը տեսնել պատարագիչի բերնին մէջ, և այնուհետև ստիպել բոլոր եկեղեցականները, որպէսզի Օրմանեանի սովորութեան հետեին, իրենց թաղի ժողովուրդին հաւատարմութիւնը չի վտանգելու համար: «Սովորութիւնը երկրորդ բնաւորութիւն կ'ըլլայ» կ'ըսէ առածը, միևնոյնը պատահեցաւ նաև Պոլսոյ հայ ժողովուրդին համար: Օրմանեանի կեղծարար ու շահախնդիր միտումներուն այդ լկտի մարմնացումը, Սուլթանական աղօթքը, ամենավատ ազդեցութիւնը ըրաւ Պոլսական հայ տարրերուն վրայ, զանոնք ակամայ ու անզգալաբար թեքեց իրենց հայութեան անպղտոր և յստակ դարաւոր զգացումներէն, և անոնց ներարկեց ազգաջինջ այն թոյնը, զոր նոյնիսկ Սուլթանին բռնաւոր և գրեթէ անասական բրտութիւնը պիտի չի կրնար պատրաստել:



Օրմանեանի պատրիարքութեան շրջանը, ուրեմն, պիտի կրնանք ըսել թէ, մասնաւորաբար Պոլսոյ հայութեան համար ամենէն աղիտաբերը եղաւ, քանի որ ողջամիտ հայու նկարագիրը քանդեց, անոր տեղ դնելով իր անգոյն, վատասերած և անակգբունք ցուցամոլութիւնը: Ասոր համոզուելու համար հարկ չի կայ երկար ուսումնասիրութիւններու: Պոլսոյ հայութեան տասներկու տարուան կեանքին հետ մօտէն շփումներ ունեցող մէկը դիւրաւ պիտի կրնայ զատորոշել այն բոլոր փուլերը, որոնք այդ ազգային վատասերումը պատրաստեցին:

Խնդիրը պէտք է քննենք տարբեր տեսակէտով մըն ալ: Հասարակաց դժբաղդութիւն մը, գրահաւորի մը ընկղմումը, հանքի մը փլուզումը, վառօդարանի մը պայթումը, և ասոնց առթած ունէ պատահար ազգային սուգի մը պատճառը կը դառնայ, և յետաձգել կուտայ վեհապետական կամ նախագահական ո՛րէն ծրագրի գործադրութիւն, ըլլայ ճամբորդութեան թէ խնճոյքի: Այս տեսակ յետաձգումներ, նախ մարդկայնական անհրաժեշտ պարտականութիւններ են, և յետոյ քաղաքավարական ցոյցեր, քանի որ պատահարները կարգ մը կիներ այրիացուցած, զաւակներ որբացուցած և ազգը զրկած են արի ու ժիր բանւորներէ ու զինուորներէ: Ամէն մարդ պարտաւոր է յարգել դրացիին սուգը, և ազգի մը նախագահը ա՛լ աւելի պարտաւոր է յարգել ու յարգել տալ ազգին սուգը, իբրև այն ազգին ներկայացուցիչը, հրաժարելով իր անձնական միտումներէն, իր անձնական հաշիւներէն, գոնէ այդ տեսակ սուգի օրերուն մէջ: Այն նախագահը, որ՝ հակառակ իր կոչումին՝ ազգին սուգը կը ծաղրէ, մատնիչն է, դաւաճանն է այն ազգին: Օրմանեան մեր սգաւոր և արիւնոտ ազգին դաւաճաններէն մին եղած է, եթէ զինքը դիտենք այս հայեցակէտէն:

Իր պատրիարքութեան օրով, մեծ ջարդերէն վերջ, շարունակ տեղի ունեցան մասնակի ու փոքր կոտորածներ վանի ու Պիթլիսի նահանգներուն մէջ: Սասուն, Երրորդ, չորրորդ անգամ ըլլալով, իր արիւնի մկրտութիւնն ընդունեց, ու լեռներէն խոյս տուող դժբաղդ կիներ ու որբուկներ Մշոյ հարթ դաշտին մէջ ոստիկաններու ձիերէն կոխկրտուելով սպաննուեցան, իրենց կնոջական պատիւը բռնի խըռուելէ վերջ: Եւ երբ թնդանթները կը գոռային, երբ արիւնը կը հոսէր, երբ հրդեհուած գիւղերը իրենց մուխերուն տակ մոխիրներ կը փսխէին, երբ սուիներուն ծայրը անցուած երեխաներ իրենց հոգեվարքի ցաւը կը ճըւային, երբ թշուառութիւն ու գրկումներ կնոջական արցունքէ գետեր կը կազմէին, Օրմանեան, չի լսելու համար այդ ամէնը, ու չի տեսնելու համար այդ սրտակեղեք ու ցնցող տեսարանները վշտի, տառապանքի ու մահուան, կը պատարագէր եկեղեցիէ եկեղեցի, միշտ զուարթ ու անհոգ, միշտ հանդիսասէր ու դրամապաշտ, միշտ ցուցամուղ ու անզգայ, իբր թէ թշուառութեան ու սարսուռի այդ տեսարանները իր փառքին ջահերն ու ծնծղաներն եղած ըլլային: Եւ ամէն պատարագէ վերջ, ճոխ ու հացալից սեղանի մը գլուխը բազմած իր հացկատակ արբանեակներով, ներկայ կիներու կենացը կը խմէր, գիտնալով հանդերձ, թէ իրեն մատուակուած այդ գինին ու այդ գինարբուքը կոտորուածներու արիւնովը ու որբացածներու արցունքովն ու անէծքովը խառնուած էր: Պատրիարքի մը անձին ու օրինակին մէջ մարմնացած այս անխիղճ ու վատասիրտ հակազգայնականութիւնը չի կրնար արդարանալ և ո՛չ մէկ մարդկային դատաստանով, ո՛րքան ալ ամբարիշտ ըլլայ դատաստան մը և անարդար: Եւ ա՛յսքան անխղճութիւններ տեսնելով ազգին ներկայացուցիչը եղող պատրիարքի մը անձին վրայ, շատ չենք զարմանար երբ Բար-



գէն վարդապետ Մուշի որբերուն դրամը կը գողնայ , զանոնք անօթի թողլով , և երբ հաւաստի աղբիւրներէ կ'իմանանք , թէ Պիթլիգի երբեմնի Առաջնորդ , Ծղնիկ վարդ . Գալբագճեան , Սասնոյ վերջին դէպքերու ատեն կուսակալին հետ Սասնոյ այրեացաւեր գիւղերը պտոյտի ելած միջոցին , հեշտասէր կուսակալին մարմնական ցանկութիւնները գոհացնելու համար , այրիացած հարսերէն գեղեցիկները իր ձեռքով կը յանձնէ Սուլթանի այդ լկտի փոխանորդին : Պատրիարքին այդ սիրական վարդապետը որ , ի վարձ իր դաւաճան կաւատութեան , եպիսկոպոսական վրկայական մը առաւ , յետոյ հոգևոր հովիւ նշանակուեցաւ Պուլկարիոյ , ուր՝ եթէ երթար՝ ապահովաբար դէմ առ դէմ պիտի գտնուէր իր միջնորդութեամբը պատիւնին աղարտուած Սասունցի խեղճ հարսերու եղբայրներուն , որոնց արդարադատ գընդակը վրէժի լաւագոյն գործը պիտի կատարէր : Բայց ի՞նչու մեղադրենք վարդապետը , երբ օրինակը վերէն , պատրիարքական աթոռէն կը տրուի . վարդապետը մարմինները պղծել կուտայ , իսկ պատրիարքը հոգիները սպաննելու կը ջանայ . վարդապետը աւերակներու մոխիրներուն վրայէն կը քալէն սառնասիրտ , մինչ պատրիարքը համայնքին սուգը կը ծաղրէ անպատկառ լրբութիւնով մը , որ պատմութեան մէջ իր օրինակը պիտի չունենայ : Ա՛հ , ո՛րքան վատեր , որոնք ճշմարիտ հերոսներու նահատակութենէն վերջ , ապրեցան միմիայն արատաւորելու անոնց անմահ յիշատակը , ծաղրելու անոնց փառապանծ վաստակը , և սնանելու անոնց արիւնովըն ու ոսկրոտիովը :

Օրմանեան այս գերեզմանակապուտներուն պարագլուխը հանդիսացաւ , ու այնպէս կը մնայ տակաւին , իր պաշտօնավարութեան և իր անձին լծորդած ազգին նախատինքն ու ամօթը :

Ամօթ իրեն :



ԲԱՐՁՆՆԵՐ - Կրթական տիրան և թանձր  
ՉՆԱԹՅՈՒՆ - Ի՞նչ տիրութեան լուծիչը գրում է առ/ի՞նչ բան...

**ՕՐՄԱՆԵԱՆ ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ԵՒ ՏԱՐԱ-  
ԳԼՐԵԱԼՆԵՐՈՒ ՀԱՆԴԵՊ**

Օրմանեան, եթէ իր Պոլսոյ Պատրիարքի հանգամանքով, ամէն ճիգ թափեց Պոլսոյ հայութեան ըզգացունքները ջղակոտոր ընելու և գայն առաջնորդելու դէպի ազգային կեանքի աղտոտ անտարբերութիւնը, միւս կողմէն՝ գաւառացիներն ալ նուազ չի տուժեցին այդ պատրիարքի ներկայութենէն: Եւ այլապէս գաւառները աւելի հարուածուեցան անոր օրով մատնուելով տնտեսական փճացումի մը, զոր դարմանել կարելի չի պիտի ըլլայ, և ոչ մէկ ատեն:

Տիգրան Տէր Ներսէսեան, իբրև առաջին գործակատարը Պատրիարքարանի, իր պաշտօնին բերմամբ շարունակ յարաբերութեան մէջ գտնուեցաւ ոստիկանական նախարարութեան հետ: Թուրքիոյ մէջ ոստիկանութենէն աւելի աղտոտ ու ապականուած տարր մը գոյութիւն չունի: Սուլթան Համիտ, երկրին ժողովուրդներուն, մանաւանդ հայերուն, արիւնը ծծել տալու համար, այդ վամպիր-տղրուկները կ'ապրեցնէ կարծես: Եւ ոստիկանները երկրին ժողովրդեան պաշտանութեան տարրերը ըլլալէ աւելի, պաշտօնագգեստ գողեր են, որոնց մատը գործ ունի ամէն տեսակ կաշառակերութիւններու, հարստահարութիւններու, զրպարտութիւններու, ամբաստանութիւններու և սպառնալիքներու մէջ: Անոնք են, որ՝ կարգ մը գործիք եղած մարդերու օժանդակութեամբ՝ վնասակար թուղթեր պատրաստելով՝ անմեղներու գրպանները կամ տունները կը ձգեն, յետոյ կը խուզարկեն, ժ ու ը ն ա լ կը պատրաստեն, և ժ ու ը ն ա լ պատրաստելէ առաջ սակարկութեան կը մտնեն անմեղներու հետ, խոշոր գումարներ ձեռք ձգելու թաքուն մտածումով. ասոնք են որ գերադաս պաշտօնէութեան կասկածներ կամ երկիւղներ կը ներշնչեն երկրին անդորրութեանը մասին, և փոխադարձ կասկածներ ծնցնելով տեղական կառավար-

րութեան և ժողովուրդին մէջ, կը պատրաստեն եթէ ոչ ջարդերը, գոնէ տեղական տագնապները, հարըստահարութիւնները: Մինչև Սուլթանը հասնելու համար, հարիւրաւոր սուլթաններու պիտի հանդիպիս դո՛ւն ալ, է վրագ նե՛րդ ալ, և մի՛ գարմանաք, երբ ըսեմ, թէ ամենէն արհամարհուած ու աննշան փոլիսը, զորօրինակ քէլ Մստօն, իր կարգին ու իր դիրքին մէջ Սուլթանէն աւելի աղտոտ ու վատագի նկարագիր մը և ընկճող ու կործանող ուժ մը ունի:

Եւ գաւառի ժողովուրդը, ամենէն աւելի, զոհուած մըն է այդ աղտոտ ու գռեհիկ ուժին: Կարելի է գրչով բացատրել այն սոսկումը, զոր այդ պաշտօնագրեստ մարդիկը կը սփռեն երկրին ամէն կողմերը, մայրաքաղաքի կեդրոնէն սկսելով: Այս փոլիսներուն ամսականը 200—250 դրչ է միայն, բայց այդ պաշտօնը ձեռք ձգելու համար քանտիտասներ 50—60—80 ոսկիներ կաշառք կը վճարեն, ատով իրենցմէ պաշտօնապէս սրբել տալու համար նախ իրենց գողի կամ մարդասպանի նախկին դատապարտութիւն մը, և այնուհետև նորէն սկսելու՝ այս անգամ պաշտօնական զգեստի տակ ծպտուած, պաշտօնական գողութիւններու և հարստահարութիւններու շարք մը, որուն վախճանը մինչև հայերու քաղաքային յանցանքով դատապարտութեան կը յանգի յաճախ: Միայն փոլիսը չէ՛, որ այսպիսի տարրերով կազմուած է ամբողջ Թուրքիոյ, ու մասնաւորապէս Անատօլուի գաւառներուն մէջ: Կուսակալէն սկսեալ մինչև պարզ միւտիւր մը, Ատլիէի նախագահէն սկսեալ մինչև պարզ մւսթանթիք մը կամ հարցաքննիչ դատաւոր մը պաշտօնական գողերու ահագին շարք մը կը հիւսեն, իրենց ծախու առնըւած պաշտօնները ծառայեցնելով ո՛չ թէ երկրին ու ժողովուրդին, այլ միմիայն իրենց անձնական օգտին:

Հայկական խնդիրը, հայկական յեղափոխութիւնը

ասոնց հացին իւղ քսեց կարծես : Որովհետև հայկական խնդիրը ժողովուրդին դահիճ այս պաշտօնեաներու կողմէն պարզապէս իբրև ոսկեհանք մը շահագործուեցաւ : Օր մը, Բերայի Սբլանտիտին վերին խուցերէն մէկուն մէջ, տեսակցութիւն մը ունեցանք՝ իմ հայրենակցի հանգամանքովս՝ Բ. քաղաքի գայմագամ Ա. պէյի հետ, և օգտուելով այս քիթքի տեսակցութենէս, ուզեցի մանրամասն տեղեկութիւններ քաղել գաւառի վարչական կերպին ու վարիչներու վարուելակերպին մասին : Գայմագամը սապէս պատասխանեց ինծի. «Կայ տասը տարի մը, — ա՛լ թողունք անցեալը — որ գաւառներու մէջ չի կայ կառավարական վարչութիւն, ինչ իմաստով որ պէտք է ըմբռնել այս երկու բառերը, իբրև քաղաքակրթութեան մարդ : Ամէն պաշտօնէի համոզումը սա է, թէ թուրք կառավարութեան վարչական այս ձևը երբէք պիտի չի կրնայ դիմանալ մինչև վերջ, ուչ կամ կանուխ անիկա հիմնական փոփոխութիւն մը պիտի կրէ, և այդ բարեփոխուած վարչութեան մէջ արդի պաշտօնեաներէն և ոչ մին իր ձայնը կամ իր աթոռը պիտի կրնայ ունենալ : Ապա ուրեմն ապագային մեզ թերևս իբրև տունի մը սպասաւոր անգամ պիտի չուզեն գործածել, քանի որ մենք ալ վստահ ենք, թէ մեր աս խելքով ու մտաւոր կարողութեամբ, թո՛ղ թէ գայմագամութիւն, այլ պարզ գործաւորութիւն մը անգամ ընելու արժանիքէ զուրկ ենք : Քանի որ ապագան մեզի շատ որոշ կ'երևի, ա՛լ մենք չենք կրնար մտածել ո՛չ կառավարութեան և ո՛չ ալ ժողովուրդին շահը : Մեր շահը և մեր ապագայ հանգըստաւէտութիւնը ամենանուիրականն է մեզի համար : Պէտք է դրամ շահիլ, ահա՛ նպատակը . դրամի տէր ըլլալու միջոցին պատուաւորութիւնը կամ ապօրինութիւնը մեզ չեն շահագորգուեր, քանի որ օրինաւոր միջոցով չենք կրնար շահիլ, ապօրէն միջոցը կը նախադասենք . ժամանակը և մեր պաշտօնը կը



ներէ ատոր : Եւ ահա՛ ժողովուրդը կը կեղեքենք , առիթները կը շահագործենք , իհարկին առիթ կը ստեղծենք : Ո՛ղջ թող մնայ հայկական խնդիրը , որուն եսեսէն ո՛չ միայն չորս տարուան պաշտօնավարութեան միջոցին 1500 ոսկի դրամ վաստկեցայ , այլ և բարձրացայ մինչև միւթէմայիզի աստիճանին : Իմ շահած գումարս հնգապատկէ , տասնապատկէ , և այն ատեն պիտի համոզուիս , թէ գաւառներու մէջ կուսակալ մը ի՞նչ կը վաստկի ապօրէն միջոցներով , ու հայկական խնդրի պատրուակով :»

Այս ընդհանուր հանգամանքը նկատի առնելէ ետք , դառնանք մեր ըսելիքին : Տիգրան Տ . Ներսէսեան , պարզապէս և շահագործելու համար առիթներն ու պարագաները , իր կաշառակեր-միջնորդի հանգամանքով , սառ ցրտութիւն մը յառաջ բերաւ ոստիկանութեան նախարարին և Օրմանեան պատրիարքին միջև : Այդ ցրտութիւնը երթալով սուր հակառակութեան մը յանգեցաւ , որուն հետևանքը սա եղաւ որ Օրմանեան , իր վատի ու ստորինի աղտոտ խմորովը զանգուած Տէր Ներսէսեանի ապօրէն շահերը պաշտպանելու համար , ոստիկանութեան նախարար Շէֆիք փաշայի դէմ բողոքեց Սուլթանին , պատրուակելով , թէ անիկա արգելք կը հանդիսանայ գաւառացի կարգ մը պարկեշտ վաճառականներու Պոլիս երթևեկին : Սուլթանը ապահովաբար դժոխային ծիծաղով մը հիւրնկայեց հայոց սէվկիւլիւ և սատըգ պատրիարքին բողոքը , երկրին վարչութեան բուն ջիղը ձեռքը բռնող իր վէզիրին դէմ : Երջտըզի Քէօջըը աշխարհի միակ կեդրոնավայրն է , ուր դաւադրութիւնները , ոճրագործութիւնները , կեղծ ժպիտներու տակ սքողուած դաւաճանութիւնները , ծիրանիի տակ թաքնուած յիմարութիւնը , բիրտ ոսոխութիւնները , համերաշխութեան դիմակին տակ պահուող երկպառակութիւնները , եղբայրական սիրոյ պիտակին տակ ծած-

կըլած մատնութիւնները, հակառակութիւնները, բողոքները ա՛յնքան մօտ կ'ապրին իրարու իբրև մէկ անկողնի մէջ պառկող մօղնկաներ: Եւ Երլտըզի Դիւլահարը հաճոյք կը զգայ այն ատեն միայն, երբ ինչ ինչ պէտքեր կուգան զինքը հաւաստել, թէ ամբողջ Թուրքիան ու անոր մայրաքաղաքը Երլտըզի ներքին վիճակին մատնուած են:

Այն բոլոր հակառակութիւնները, որոնք Թուրք ժողովուրդը գէնքի, կոտորածի ու թալանի առաջնորդեցին մեծ ջարդերու ատեն, գաղտնապէս Սուլթանէն թելադրուեցան: Սուլթան Համիտ Հայերուն իր անձին ու իր անձնական դժոխային վարչութեան դէմ ցոյց տուած զզուանքը վատօրէն իբրև Թուրք ժողովուրդին դէմ լարուած ատելութիւն մը ներկայացուց իր զինուորական գործակալներուն, և անոնց ու անոնց ստորադասեալներուն միջոցաւ՝ աստիճանաբար՝ մինչև տգէտ ժողովուրդին ականջը հասցուց սա գաղտնի կարգախօսը, թէ «Հայերը Թուրքերը պիտի ջարդեն, պատրաստուեցէք դժուր Հայերը ջարդելու»:

Այս գաղտնի կարգախօսի ծագումին ու հրատարակութեան մասին ինծի ընդարձակ ծանօթութիւններ ու հաւաստի փաստեր տուաւ Դրդ. Զօրաբանակի շրջանակին բարձրաստիճան զինուորական մը: Այս և այսպիսի մեքենայութիւններու վարժ Համիտը, Հայոց Պատրիարքը քաջալերեց իր բողոքին մէջ, ու միևնոյն ժամանակ Շէֆիք փաշան զրգռեց, բառ առ բառ անոր հաղորդելով Օրմանեան Պատրիարքին բողոքները: Եթէ Օրմանեան բողոքեց ու քաջուեցաւ իր պատրիարքական անուանարկուած ու ստորնացած աթոռին անկիւնը, ոստիկանութեան նախարարը, սակայն, անգործ չի կրցաւ նստիլ:

Ան անգամ մըն ալ ինքզինքը Հայոց Պատրիարքին ցոյց տալու համար, իր բովանդակ մեծութեանը մէջ, իր վրէժխնդրի սլաքները դարձուց մեծ մա-

սամբ խեղճ գաւառացիներուն դէմ: Գաղտնի հրամաններ տրուեցան մինչև գաւառին ամենէն մոռցըւած անկիւնները, և երբ այդ խստութիւններու երեսէն Պոլսոյ մէջ ընտանեկան հաւաքումները արգիլուեցան հայերուն համար, անդին գաւառին մէջ նոյնիսկ դրացի գիւղերու երթևեկները արգիլուեցան, կուսակալութեան մը սահմաններուն մէջ վաճառականական երթ ու դարձը խափանուեցաւ, աննշան ու աննպատակ դէպքերը կարևորութիւն առնել սկսան, ու գաւառացի հայուն համար բացուեցաւ տնտեսական տազնապի, արժանապատուութեան ստորնացումի թուական մը, որուն նմանը նոյնիսկ մեծ ջարդերու ատեն չէր զգացուած: Գաւառացին իրապէս սարսուաց իրերու այս կացութենէն: Զարդը միայն երկրին հայ բնակչութիւնը կոտորակեց, բայց գոնէ վրէժխնդրութեան զգացում մը արթնցուց ողջ մնացողներուն հոգիին խորը, թալանը՝ միայն նիւթական հարստութիւն մը փճացուց, բայց աշխատելու և նոր տնտեսական դիրք մը, կացութիւն մը վերստեղծելու ըզճանքը կաթեցուց դժբաղդ հայուն սրտէն ներս: Հայը տակաւին ազատութիւն մը ունէր ապրելու, հոգ չէ՛ թէ տառապանքի ու աւերակներու գիրկը, գործելու և տքնելու իրաւունքը ունէր, հոգ չէ՛ թէ դժուարութիւններու և նախատինքի տարափի մը ներքն: Այսօր՝ Տէր-Ներսէսեանի չահախնդրութեամբը ստեղծուած սոյն հակառակութեան պատճառով, ապրելու և պարկեշտօրէն աշխատելու իրաւունքը կը յափշտակուէր իրմէն, իբրև վրէժխնդրութիւն մը Օրմանեանի բողոքին: Սոյն վրէժխնդրութեան ահաւորութիւնը այն ատեն միայն զգաց գաւառացին, երբ կարգ մը կարնեցի ու վանցի պարկեշտ վաճառականներ, Պոլսոյ համար 40-50 ոսկիի փոխարէն մէյ մէկ անցազիր ձեռք բերելէ վերջ, նաւէն դուրս ելած պահերնուն իսկ Ղալաթիոյ քարափէն նորէն անմիջապէս նաւ փոխադրը-

ւեցան իրենց տեղերը վերադարձուելու համար : Օրմանեան լսեց այդ խեղճերուն ցաւոտ ու դառնակակիծ աղաղակը, որ գաւառացի հայուն տնտեսական փճացումի հուսկ բողոքն էր, արիւնով ու լեղիով զանգուած բողոքը, իզուր յուսադրեց զանոնք, պատգամաւորներու բերնով, և երբ իր տուած յոյսերը ապարդիւն մնացին, երբ՝ պատրիարքական խոստումներու հակառակ՝ Հայր միշտ արգելափակ մնաց իր գիւղին ու իր խանութին անկիւնը, Օրմանեան ելաւ անպատկառօրէն յայտարարելու, թէ «կառավարութիւնը զինքը կը խաբէր, և ինքը ստիպուած էր իր ժողովուրդը խաբելու» : Հարցուցէ՛ք Օրմանեանին, և ինքը անպատկառօրէն ու cyniquement, անգամ մըն ալ պիտի կրկնէ այս բառերը : Վատասիրտ պատրիարքը չուզեց համոզուիլ, թէ Սուլթանին հլու գործիք դառնալուն, և գիտութեամբ իր հօտը, իր բազմաշարժար ժողովուրդը խաբելուն մէջ ոճրագործութիւն մը կար պահուելու : Օրմանեան գաւառի ժողովուրդին տնտեսական փճացումին մէջ մատնիչի դերը կը խաղար, ո՛չ թէ համոզումի մը, անձնական սկզբունքի մը արդիւնքով, այլ պարզապէս իր ապուշ փառասիրութիւնը և իր անձին զօջաքաղութիւնն ու շահախնդրութիւնը չի վտանգելու համար :

Աւետարանի դատը և հայկական խնդիրը շատ մը յարամերձութիւններ ունին իրարու հետ : Աւետարանի դատին մէջ Յուդա ճշմարտութիւնը կը մատնէ դրամի գնով . Օրմանեան հայկական դատին մէջ կամաւոր խաբէութիւններով կը գործակցի Սուլթանական էնթրիկներուն, իր ամսականները և պագչիչն երբ կանոնաւոր ստանալու համար :

Յուդա և Օրմանեան, հինի ու նորի ագուցում մը, նախատալից հիւսուածք մը ճշմարտութեան ու արդարութեան կուշտին վրայ : Առաջինին համար այսպէս կ'ըսէ հեղինակ մը . «Յուդա մէկն է այն վատագի մարդերէն, որոնք յեղափոխութիւններու

Ժամանակ կը վիտան և որոնցմէ քսանըՀինգ տարի-  
 ներէ իվեր շատ տեսանք: Ասոնք կուսակցութիւննե-  
 րու մէջ կը տարուբերուին, փնտռելով, թէ ո՞ր կող-  
 մը պիտի հակի յաղթանակը, որպէսզի զօրաւորին  
 կողմը միտին: Ժագոպէն մըն է, որ Բոպէսփիէրի  
 ջերմ արբանեակ մը (se'id) ըլլալէ վերջ, նաբուէոնի  
 դարպասողը կ'ըլլայ, եսամու պահպանողական մըն  
 է, որ Ֆուշէի նման, քանի մը ամսուան մէջ հակա-  
 ռակ երդումներ կ'ընէ, այսօր տէրօրիստ Հանրապե-  
 տական մըն է, վաղը՝ վարդապետական մը, միւս  
 օր՝ կեսարի պաշտօնեայ, աւելի յետոյ՝ թագաւորին  
 ծառայ, ու վերջ ի վերջոյ՝ մատնիչ թէ՛ թագաւո-  
 րին, թէ՛ կայսրին, թէ՛ Հանրապետականներուն, և  
 թէ՛ ամբողջ աշխարհի... Յուդա իր տէրը մատնե-  
 լու Համար դրամ կ'առնէ, և ատով իսկ անիկա լըր-  
 տես մըն է ի հաշիւ ոստիկանութեան: Անիկա լրտե-  
 սէն ալ ստորին է, որովհետեւ լրտեսութեան Համար  
 ո՛չ եռանդ ունի, ո՛չ անտարբերութիւն, ո՛չ անշա-  
 հախնդրութիւն և ո՛չ ալ հրահանգ. ցուրտ, փառա-  
 սէր, նենգաւոր ու չար սիրտ, ու անարի, սուտ խղ-  
 ճամիտ, ԹարթիւՓ, իր մէջ կ'ամփոփէ ամէն ինչ  
 որ մատնութիւն մը զազրելի ու աղտոտ կրնայ ը-  
 նել: Յաջողութեան օրերու մէջ անկէ չի վախցուիր.  
 կարելի է զայն վեհանձն նկատել. իր ընտրած կու-  
 սակցութեան Համար կ'աշխատի. բայց դժբաղդ օրե-  
 րու մէջ իր հոգիին գաղտնի աղտոտութիւնը կը ժայթ-  
 քէ, և ցոյց կուտայ պատարուն վատասրտութեան  
 մը միացած նենգամտութեան մը լրումը: Տեսնը-  
 ւած են դիւցազնական մատնութիւններ, սխրալի  
 երդմնազանցութիւններ, կուսակցական կորովի օձ-  
 տումներ, յանդուգն ուրացումներ: Մեր փոփոխա-  
 միտները (girouette) աւելի աննկարագիր հոգիներ են,  
 քան ճշմարիտ ապիրատներ: Յուդայի գործը ամէն  
 տեսակէտով գործն է բարոյական զգացումէ զուրկ  
 մարդու մը, որ խելք ունենալով հանդերձ անասու-

նի մը պէս կը գործէ :»

Օրմանեան Պատրիարքի դիրքն ու կացութիւնը որակելու համար նոր բառերու պէտք չենք տեսներ բնաւ : Իր գործելակերպն ու լարծուն նկարագիրը այնքան նմանութեան գիծեր ունին Յուդայի մը կամ Ֆուչչի մը , որ Ա. Արփիարեան Օրմանեանը խտացուց opportuniste բառին մէջ : Օրմանեան Պատրիարք պիտի չի կրնայ բնաւ ջնջել նմանութեան ու նոյնութեան այն հանգոյցները , որոնք զինքը վերոյիշեալ իր նախորդներուն կը կապեն , որովհետև՝

1. Ինք սահմանադրական ըլլալ ուխտեց , ու իբրև ժամանակին յարմարող մարդ , միապետական մը եղաւ իր վարմունքով ,

2. Ազգին ծառայել ուխտեց , ու իբրև շահու մարդ՝ իր անձին միայն ծառայեց ,

3. Ժողովուրդին շահերուն պաշտպան ըլլալ ուխտեց , ու իբրև շահու ու փառքի մարդ՝ ժողովուրդը խաբելու ջանաց ,

4. Ազգին ներկայացուցիչ ըլլալ ուխտեց , ու՝ ի պահանջել հարկին՝ այդ միևնոյն ազգին հաւատարմութեան երաշխաւոր ըլլալը մերժեց , իր շահերը և իր աթոռը չի վտանգելու համար :

Այս բոլոր ուխտադրժութիւնները , այս բոլոր volte-faceերը , այս բոլոր ուրացումները , ապացոյցը չե՞ն իր անբարոյական նկարագրին , իր ԹարթիւՓական խայտառակութիւններուն , իր Յուդայիկ մատնութիւններուն : Անկուշտ և անյագ ծարաւի հարըստութիւններուն , աղքատ ու գռեհիկ սերունդէ մը սերած , և սնած պապական աթոռին շատ մօտիկ , կեանքն ու անոր կոչումը դրամին ու փառքին մէջ միայն կրցած է ըմբռնել : Ազգ , ազատութիւն , հայրենիք , նշանակութենէ գուրկ բառեր են իրեն համար : Կրօնքն անգամ իբրև միջոց միայն կրնայ ծառայել իր սնուցած բաղձանքներուն կարենալ հասնելու համար : Եւ պատրիարքական աթոռը , մանա-



Յետին պէս որ արեւը կեցող՝ Օրմանեան  
 Կը ծանայ ժամանակը կեցնել, առէր երբոր  
 ատեն դատարարը ծառու համար...

ւանդ Հայ ազգութեան սա ինկած, Հարստահարուած  
 և իրաւազուրկ կացութեան միջոցին, այն յարմար  
 գետինն էր, ուր պիտի կրնային ա՛յնքան արդիւնաւո-  
 րապէս բեղմնաւորիլ իր ցանած բոլոր աղտոտ ու ամ-  
 բարիչ սերմերը: Ահա՛ թէ ի՞նչու համար Օրմանե-  
 եան ամէն ստորնութիւն, ամօթ ու նախատինք յանձն  
 առնէ, առանց հրաժարելու պատրիարքութենէն,

որուն պլլուած է իբրև իր արիւնոտ խանձարուրքին, իր ցեխոտած պատանքին:

Հէ՛գ գաւառացիներ...

Իմ ճամբորդութիւններուս միջոցին, շատ մը հարստահարուած գիւղերու և քաղաքներու մէջ տեսայ գաւառացիներէն շատերը: Անոնք հեշտիւ կ'ըմբռնեն թրքական կոտորածներուն վայրագութիւնները, և անոնց հետ դիւրաւ կը հաշտուին:

«Թուրքը վերջապէս ունի իր նպատակը և իր ծրագիրները, որոնք մեր գոյութեանը դէմ լարուած են, ու իբր հակառակորդ ու իբր թշնամի կը ներկայանայ մեր ազգային անկախութեան ձգտումներուն. ուղիղ թէ անուղիղ, թուրքը իր ծրագիրը կը գործադրէ, իբր թէ իր պետութիւնը ապրեցնելու համար, ան իր սկզբունքին կը ծառայէ, եթէ երբէք երկիրը կոտորածով ու թալաններով բարեկարգելու յիմարութիւնը սկզբունք կրնայ կոչուիլ: Ու մենք յանուն մարդկութեան, յանուն արդարութեան կը բողոքենք անոր դէմ, բայց ի՞նչ մտածենք պատրիարքի մը նկատմամբ, որ իր հայի ու կրօնապետի պարտականութիւնները մոռցած, դաւաճանութիւններով լեցուն Պատրիարքարանի մը պատուհաններէն գաւառային ջարդերուն կը նայի անտարբեր, ու դժոխային Մաքիավէլութիւնով, կարծես գոհ սրտով մը դիտելու և տեսնելու համար այն համատարած աւերակները, որոնք՝ Հայութեան առջև գերեզմանի մը պէս բացուեցան Սև Մովու ափունքէն մինչև Ռուսական ու Պարսկական սահմանագլուխները:»

Օր մը այսպէս կը խօսէր ինծի ծերուկ գաւառացի մը, որ անդամակցած էր երբեմն կեդրոնական Երեսփոխանական Ժողովին, և իր այդ հանգամանքով՝ մօտէն գիտակցութիւն ունեցած էր այն պարտականութիւններուն, որոնց գործադրութիւնովը միայն պատրիարք մը պիտի կրնար իր ընտրութիւնը արժեցնել: Ժողովրդական տրամաբանութիւնը հիմ





ՈՐՄԱՆԵՆ... Ի՞նչ հրաշալի տեսարան... Ի՞նչ պրոբլեմ միայն այս  
անասունով պետք չլինի արտոստմ... Ի՞նչո՞ւ ազգին տանե-  
լը մե մի քիտցման չունան... մե՞ք Աստուծո՞ւ...:

մը ունի վերջապէս, որ թէպէտ քիչ մը կոշտ, բայց  
հաստատուն ըլլալէ չի՛ դադրիր բնաւ, և իր վրայ  
կը կրէ ճշմարտութիւններու հսկայ դէզ մը, գոր չի  
պիտի կրնայ տապալել երբէք Օրմանեանի պատրի-  
արքութեան նման ձրի ու վասակային յորջորջում մը:

## ՕՐՄԱՆԵԱՆ ԵՊԱՍՏԻՑ ԳՈՒՄԱՐՆԵՐՈՒ ՀԱՆԴԷՊ

Օրմանեանի պատրիարքութիւնը ի՞նչով կրցաւ օգտակար ըլլալ գաւառի հայերուն :—Ձինքը դարպասող հացկատակները կը պատասխանեն, թէ 1) Օրմանեան նպաստ հասցուց գաւառացի սովեալներուն, 2) Թափուր թեմերուն առաջնորդներ ղրկեց, 3) Գաւառներու ժողովները կազմակերպեց : Ահա՛ ասոնք են այն աչքի զարնող իրողութիւնները, որոնցմով Օրմանեանի պնակալէզները զինքը կ'ուզեն աստուածացնել : Բայց որպէսզի տեսնենք, թէ ի՞նչ կ'արժեն Օրմանեանի աստուածացումին այդ արուեստական ճառագայթները, կ'ուզենք դանոնք մի առ մի փետրատել, և այդ անամօթ ու լիրբ աստուածացումը վերածել իր աղտոտ իսկականութեանը :

1. Ստոյգ է, որ Օրմանեանի օրով ալ Արտասահմանէն եկած նպաստները բաւական մեծ մխիթարութիւն մը եղան գաւառի դժբաղդ ժողովուրդին, ինչպէս եղած էին Իզմիրլեանի օրով : Բայց եթէ Իզմիրլեանի օրով այդ նպաստները, իբրև եղբայրական օժանդակութեան արդիւնք, գաւառացիներուն իբրև հացագին ծառայեցին անխարդախ, Օրմանեան այդ նպաստներէն անանուն ձեռնարկներու յատկացուց, իր սիրականները կերակրեց, և իր վարդապետներէն ոմանց այդ գումարներէն ժամուց տրուաւ : Երբ Բաբգէն վրդ. Մուշի 160 ոսկին գողնալէ վերջ, կառավարութեան միջոցաւ Պոլիս բերուեցաւ, դիմում ըրաւ Օրմանեանի, թէ անօթի է ինքը, և գուրկ՝ նիւթական դանկէ : Օրմանեան նպաստից գումարէն 30 ոսկի հացագին տուաւ իր սիրականին, ու ճիշդ օր մը վերջ Պոլսոյ Հրապարակին վրայ յայտնուեցաւ, թէ Բաբգէն վրդի գողցած դրամներէն 100 ոսկին տոկոսով տրուած է Խ. Խօրասանճեանի քով : Իզմիրլեանի օրով նպաստը միայն իբրև նպաստ՝



ԲԵՐԲՅՆ ԷԼՐՈՒՄԵՆՏ  
(Յօռցե գարնին)

տրուեցաւ գաւառացիներուն, մինչ Օրմանեան այդ նպաստի գումարներէն մեծ մաս մը յատկացուց կարգ մը գաւառացիներու բերանը գոցելու համար: Տեսէ՛ք, թէ ինչպէս: Գաւառներու զինուորական տուրքը ժամանակ մը յետաձգուեցաւ գանձուելէ և մէկ տարեկանը (կարծեմ 313 տարիինը) շնորհուեցաւ ժողովուրդին: Հակառակ այս կայսերական իրատէին, գաւառներու մէջ ինչ ինչ տեղեր այդ տուրքերը գանձուիլ սկսան որոշեալ ժամանակէն առաջ, և գանձուեցան խեղճերուն տակի անկողիններն իսկ բռնի վաճառուելով: Ուրիշ տեղեր թուրքերու հարստահարութիւններ, կեղեքումներ սեղի ունեցան:

ու այսօրինակ ցաւերով լեցուն նամակի ահագին ծըրարներ շաբթէ շաբաթ դէպի Պատրիարքարան խուժեցին, անկեղծ, կորովի դիմում մը խնդրելով պատրիարքէն, դիմում մը դէպի Երևոյի Քէօջը, հոգ չէր թէ այդ դիմումը ապարդիւն մնար. դժբաղդ գաւառացիները պիտի կրէին ամէն նեղութիւն, առանց իսկ տրտնջալու իրենց բախտէն ու ճակատագրէն, բաւական է որ վստահ ըլլային, թէ իրենց պատրիարքը ամէն ջանք թափած է, բայց յաջողած չէ ձեռք բերել փափաքուած դիւրութիւնները: Վստահութիւնը մեծագոյն օժանդակն է ցաւած ու բզբտուած հոգիներուն: Օրմանեան այդ վստահութենէն զրկեց գաւառի ժողովուրդը, և որպէսզի անոնք իրենց ամենօրեայ լացերով ու ողբերով իր հանգիստը չի խռովեն, դրամական օգնութիւններով խփեց անոնց շատերուն բերանը, գրեթէ կաշառքով խափանեց անոնց աղաղակը, որոնք ո՛չ թէ դրամական նպաստի, այլ լուրջ օժանդակութեան, գործող ու դատող վստահութեան մը պէտքը ունէին: Եւ ահա՛ այդպիսիներուն բերանը ոսկիով ծեփած ատեն, բուն իսկ աղքատներուն, բուն իսկ չքաւոր անօթիներուն հացի պատառը գողցած կ'ըլլար ինք: Ա՛լ թողունք այն կարգ մը նպաստընկալները, որոնք պարզապէս գինքը շողոքորթելուն համար, տարուէ տարի նպաստնին կ'ընդունէին այդ միակ ողորմութեան սնտուկէն: Ահա՛ գաւառի ժողովուրդին նպաստ հասցուցած ըլլալու փաստը: Գոնէ՛ այդ նպաստները հաւատարմութեամբ գործածէր Օրմանեան, այն նըպաստները, որոնց հաւաքումին մէջ չի կրցաւ գործնական բաժին մը ունենալ: Երբ Կովկասի հայկական դէպքերը պատահեցան, Խրիմեան Հայրիկ իր բանաստեղծի զգայնութիւնով, բոլոր Հայութեան կոչում ըրաւ, որպէսզի օգնութեան փութան սովատանջ Կովկասաբնակ եղբայրներուն: Մօտս նամակ մը ունիմ, որով բարեկամ մը ինծի կը պատմէ, թէ քա-

նի մը մարդիկ ներկայացան Օրմանեանին, խնդրելով որ անմիջապէս յանձնախումբ մը կազմուի, և Պոլսոյ մէջ հանգանակութիւն մը կատարուելով, շուտով նպաստ հասցուի Կովկաս: Օրմանեան չուզեր ընդունիլ առաջարկը, և կը մերժէ զայն, ըսելով, թէ չի կրնար հանգանակութեան մը հրաման տալ, նոյնիսկ եկեղեցիներու մէջ, վախնալով, թէ Սուլթանի վստահութիւնը կը կորսնցնէ: Օրմանեան միայն այս նպաստով պարծենալու իրաւունքը պիտի ունենար թերևս, և այդ իրաւունքին չուզեց տիրանալ, նախապատիւ սեպելով, մեր սովամահ Կովկասաբնակ եղբայրներէն աւելի նախամեծար, Սուլթանին համակրանքն ու վստահութիւնը:

2. Ստոյգ է, որ Օրմանեան իր պատրիարքութեան շրջանին մէջ Առաջնորդական գաւառներուն Առաջնորդ ու փոխանորդներ հասցուց: Ստոյգ է, որ ուրիշ ժամանակներէ աւելի Օրմանեանի օրով գաւառներու մէջ շատ Առաջնորդներ ղրկուեցան, անոր համար որ, երբ Օրմանեան պատրիարք ընտրուեցաւ, այդ ընտրութեան օրէն իսկ Արմաշի Դպրեվանքը իր տրամադրութեան տակ դրաւ՝ հետզհետէ՝ մինչև 25 վարդապետներ, որոնք շարունակ գաւառական պաշտօններու վազեցին: Եթէ այդ պատրաստութիւնը, Դպրեվանքի այդ այգեկութքը աւելի կանուխ սկսած ըլլար, ուրիշ պատրիարքներու օրով ալ գաւառները թափուր պիտի չի մնային: Եւ տյդ երիտասարդ վարդապետները ուրիշ պատրիարքի մը ձեռքին տակ ու օրով, աւելի պիտի կրնային օգտակար ըլլալ ազգին, քան Օրմանեանի օրով: Որպէսզի այս մասին համոզում կազմեն ընթերցողները, կ'ուզեմ աւելի լայնօրէն պարզել իմ միտքս: Օրմանեան, իր ապականած ու հակազգային կեանքով այդ երիտասարդ վարդապետներէն շատերը դէպի ստորնութիւն առաջնորդեց, և անոնց բարքի, վարքի, ու համոզումներու վատասերումին ուղղակի պատասխանատուն

հանդիսացաւ : Կ'ուզէ՞ք օրինակներ . 1) Առէք Խարբերդի Առաջնորդը , Խոսրով վարդապետ Պէհրիկեանը : — Սա , Խարբերդի Թուրք պաշտօնեաներուն միացած , ո՛չ միայն Առաջնորդարանը ճշմարիտ բողանոցի ու գինետան վերածեց , ո՛չ միայն իր ժողովուրդին քար գայթակղութեան հանդիսացաւ , ո՛չ միայն իր հօտին նուիրական շահերը և պատիւը Թուրք փոլիսներուն ծախեց , ո՛չ միայն դժբաղդացած որբեր ու այրիներ գանակոծեց Առաջնորդարանին մէջ , ո՛չ միայն դրամական ահագին զեղծումներ ըրաւ , այլ և՛ երբ Թէրքի Թէպայով Ամերիկա գաղթելու հարկադրուած Թշուառ ու բոկոտն կիներ ու որբեր ձեռք առին Առաջնորդարանին դուռը , իրենց իւր մ ու խ ա պ է ը ր Կնքել տալու համար Առաջնորդին , Խոսրով վարդապետ , պարսիկ քօնսիւլի մը անպաակառ բրտութիւնով , անոնց ճամբու ծախքը անոնց ձեռքէն յափշտակեց անիրաւօրէն , ու զանոնք աղի արցունքով ճամբու դրաւ դէպի Ամերիկա : Եւ իւրումն այս վատութիւններուն , բարձրաձայն յայտարարեց . «Ո՛րչափ ատեն Օրմանեան պատրիարք մնայ , ամէն ուզածս պիտի ընեմ , և պիտի չի գտնուի մէկը , որ կարող ըլլայ ինձի ֆլասեւ : Ողջ Թո՛ղ մնայ Օրմանեանը» : Եւ երբ Օրմանեանի ներողութենէն զառածած այդ իշուկը , պատրիարքին ղրկուած իւր ի փոխարէն իր եպիսկոպոսական վկայագրին հաստատութիւնը ձեռք բերաւ , անդին՝ Ամերիկահայ Գաղութը՝ իր գաւակներուն ցնցող պատմութիւններէն ազդուած՝ բազմաստորագիր հանրագրութեամբ իր կծու բողոքները ներկայացուց Հայրիկին , որպէսզի այդօրինակ հրէջի մը եպիսկոպոսական ձեռնադրութիւնը չի կատարուի : Ահա՛ Առաջնորդ մը , որ Օրմանեանի Թոյլտուութենէն ու ներողամտութենէն կը ղեղծանի : Եթէ Խոսրով վարդապետ արդարադատ և անաչառ պատրիարքի մը Թեւին տակ գտնուէր , կը կարծէ՞ք Թէ այս-

քան ստորնանալու պատեհութիւն և մտադրութիւն կրնար ունենալ: Օրմանեան իր յոռի և չափանդիր ընթացքովը Խարբերդի Առաջնորդը անբարոյութեան մղեց ու ժողովուրդին կործանման, և անոր բարոյական քայքայումին ուղղակի և անմիջական պատասխանատուն հանդիսացաւ:

Յ. Առէ՛ք Տիգրանակերտի Առաջնորդը, Եզեկիէլ վարդապետ Արշակունին, որ երբ Երուսաղէմէն մեկնեցաւ, թուրք զօրքերէն շատեր յայտարարած են, թէ Վերենց կիւր ձեռքերնուն փախուցին»: Տասնեակ տարիներ իվեր է, որ այդ մտակոյտը կը պաշտօնավարէ Տիգրանակերտի մէջ, որուն ժողովուրդը կտրիճ, ասպետական, ուշիմ ու եռանդուն, նոյնիսկ ազգային յեղափոխական տեսակէտով, բնականէն պատրաստուած խմոր մըն էր: Եզեկիէլ վարդապետ, իր դանդաղ յօրանջումներուն մէջ, իր succube վաւաչոտի հանգամանքով, իր քէյֆը և միայն քէյֆը նայած միջոցին, ի հարկին մատնութիւններ ի գործ դրաւ, ժողովուրդին ցաւերը մոռցաւ, վատասերեց անոր հուժկու նկարագիրը: Ժողովուրդը վարդապետը նկատեց իբրև իր գոյութեան գերեզմանքարը, բողոքեց, լացաւ, անոր հրաժարումը պահանջեց, սպառնաց կրօնափոխ ըլլալ: Իր բողոքները ահագին հատորներ կը լեցնեն, ու ատոնց ամենքը անլսելի մնացին, որովհետև վարդապետը Օրմանեանի հանդէպ հ լ ու հ պ ա տ ա կ ու թ ե ա ն ուխտը կը կրկնէր իր շաբաթական նամակներով: Եզեկիէլ վարդապետ թերևս դարձի գար ու վերանորոգուէր, եթէ լաւագոյն ու նկարագրի տէր պատրիարքի մը հլու հպատակը դառնալու պատեհութիւնն ունեցած ըլլար:

Է. Առէ՛ք Մուշի նախկին տեղապահ Բաբգէն վարդապետ Կիւլէսերեանը: — Իր ԵՍԻՆ և իր ՇԱՀՈՒՆ պաշտամունքին նուիրուած բանսարկու արարածը: Սամսոնի մէջ իր յարուցած խայտառակութիւննե-

րուն գիրկը ձագ չի կրնալ հանելէն վերջ, Մուշ փոխադրուեցաւ Օրմանեանի կարգադրութեամբ: Իր հայրն ու սրիկայ-գինով եղբայրը վազեցին դէպի հոն, ուր որբերու նպաստի առատ հոսանք մը կը պոռթկար: Արմատախիլ ըրէ՝ Բարգէն վարդապետի մէջէն ԵՄՆ ու ՇԱՀի պաշտամունքը, և այն ատեն անիկա կարող եկեղեցական մը պիտի դառնայ: Բայց այդ երկու մոլութիւնները, որոնք իր քայքայումին ու բարոյական ինկածութեան ամենագոր ազդակներն են, աւելի ևս մղում, ծաւալ ու քաջալերութիւն գտան Օրմանեանի անխիղճ պաշտպանութիւնով, և զինքը գտնավիժեցին դէպի անյատակ կոյանոցը: Բարգէն վարդապետ, իր ԵՄՆ ու ՇԱՀին անձնատուր, և ապաւինած Օրմանեանի զեղծումի առաջնորդող պաշտպանի քաղաքականութեանը, մոռցաւ իր սուրբ կոչումը, մոռցաւ իր շուրջի աւերակներն ու մոխիրները, մոռցաւ կնոջական մերկութիւնն ու նօթութիւնը, և հակառակ իր գրած տեղեկագրին, ինքն ալ, իբրև նոր քիւրտ կամ թալանող թուրք, գողցաւ անօթիներուն դրամը, զայն իր գրպանը և իր եղբոր կոկորդը լեցուց, և երբ թուրք կառավարութիւնը զինքը հեռացուց Մուշէն, այդ յանկարծական մեկնումի պահուն, Մուշի որբերը իր ետեէն պողացին. «Հայր սո՛ւրբ, գոնէ պատառ մը հացի ստակ ձգէիր մեզի»... Օրմանեանէն տարբեր պատրիարքի մը ձեռքին տակ Բարգէն վրդ. կրնար լաւ եկեղեցական մը դառնալ: Օրմանեան, իր բարեկամի հանգամանքով, աւելի ևս բորբոքեց անոր չար ու ընկերափնաս միտումներն ու բնական ժառանգականութիւնը, թունաւորեց անոր արիւնը և խանգարուած մեքենայի մը վերածեց զանի:

Դեռ ո՞ր մէկն ըսեմ, Եզնիկ վրդ. Գալբաքճեանը թէ Թաթուլ վրդ. Դուրեանը, Վահրիճ վրդ. Շահլամեա՞նը թէ Մկրտիչ վրդ. Ալգատեանը, Ներսէս վրդ. Նապասեա՞նը թէ Զաւէն վրդ. Տ. Եղիայ-





եանր : Կարդացէ՛ք անոնց կենսագրականները Թուրքիոյ և Արտասահմանի թերթերուն մէջ, և պիտի տեսնէք, թէ Օրմանեան գաւառները Առաջնորդներ ղրկելով, իր աղտոտ պաշտպանութեան շնորհիւ, բարոյապէս նախ այդ առաջնորդները սպաննեց, ու յետոյ ժողովուրդին հոգիին խորը զգուանք մը արթըն-

ցուց թէ՛ Առաջնորդին, թէ՛ եկեղեցիին և թէ՛ ազգային գոյութեան հանդէպ: Ա՛լ թողունք այն կարգ մը պարագաները, որոնցմով անիկա կեղծաւորութիւն քարոզեց կարգ մը Առաջնորդներու անկեղծութեան և անկաշկանդութեան սանձ դնելու համար, ինչպէս ցոյց կուտայ Պոլսէն մեզի ղըրկըւած նամակի մը պատճէնը: Ապա ուրեմն գաւառական Առաջնորդներու առաքումը չի կրնար Օրմանեանի փառքը չինել: Դպրեվանքի վարդապետներէն առաջ Պոլսոյ մէջ արգելափակ եպիսկոպոսներ ու վարդապետներ կային, եթէ Օրմանեան գիտնար իր հաճոյքի ժամերէն մաս մը պահել, և այդ արգելափակ եկեղեցականները յաջողէր ղրկել գաւառներուն անկիւնները, է՛հ, այդ յաջողութիւնը պիտի կրնար դափնիի տերև մը կապել անոր ճաղատ գլուխին: Ներսէս եպիսկոպոս Արսլանեան Պուլկարիոյ ժողովուրդին հովիւ ընտրուեցաւ: Վահան վրդօթակորեանի մէկ սրիկայ մատնութեամբ Արսլանեան Սրբազան արգիլուեցաւ՝ թուրք կառավարութեան կողմէն՝ Պուլկարիա երթալէ: Եթէ Օրմանեան փոխանակ մարտելու այդ մատնութիւնը, յաջողէր Արսլանեան Սրբազանը Պուլկարիա ղրկել, այդ առաքումը վարդի պսակ մը պիտի ըլլար իր ճակտին: Այս և ասոր նման անհերքելի իրողութիւններ որոշ կերպով ցոյց կուտան, թէ Օրմանեան նոյնիսկ չի կրցաւ իր ձեռքը գտնուած այդ եկեղեցականները օգտակարապէս գործածել. ասոնցմէ մէկ քանին չփացուց իրենց սրիկայութիւններուն մէջ, ոմանց գնդժումները պարտկելով, զանոնք աւելի վատթարացումի առաջնորդեց, ու նոյնիսկ մատնութիւնն ու գրպարտութիւնը քաջալերեց, մատնիչներու և գրպարտիչներու պատուանշան մուրալով և եպիսկոպոսութեան վկայականներ բաշխելով:

5. Օրմանեանի խնկարկունները կ'ըսեն, թէ օրուան պատրիարքը յաջողեցաւ գաւառներու վարչա-

կան կազմակերպութեան կանոնաւորութիւն և ուղղութիւն տալ: Բաւական ծիծաղելի չէ՞ք գտներ սա իբրև իրողութիւն մեզի հրամցուած պարզ ենթադրութիւնը, որ ոչ մէկ հիմ ունի տրամ գետնի վըրայ: Օճառի պղպղակներու պէս ուռած սա անըստգիւտ գործունէութիւնը հիմն իվեր տապալելու համար ճիգի պէտք չի կայ բնաւ: Պզտիկ մը փշեցէք վրան, և ահա պիտի տեսնէք, թէ անոնք իսպառկորած անհետացած են ձեր աչքին առջևէն: Օրմանեան Պատրիարք ի՞նչ պէս կրնար գաւառական վարչութիւններու լաւագոյն կազմակերպութիւն մը տալ, քանի որ այդ կազմակերպութիւններու ոգին կը պակսէր իր մէջ, և քանի որ իբրև արդիւնք այդ պակասին, նոյնիսկ իրեն գործակցելու կոչում ունեցող կեդրոնական վարչական ժողովները գոյութիւն չունեցան իր օրով: Գաւառներէ ստացածր բաւական ընդարձակ տեղեկագիրներէ հրահանգուած, ու իրողութիւններու ծնուցիչ պատճառներուն հոգեբանական և ընկերական ուսումնասիրութեամբ մը, պիտի կրնամ ըսել, թէ գաւառացին՝ օրէնքի տառէն թելադրուած, ուզեց օրինաւոր, գրեթէ օրինաւոր ժողովներու տէր դառնալ, և ժողովներու ընտրութիւնը արդէն իսկ նորեկ Առաջնորդի մը գործունէութեան առաջին քայլը պիտի նկատուէր: Բայց թէ ի՞նչ տարրերէ կազմուեցան այդ գաւառական ժողովները, և ի՞նչ ազդեցութիւններու տակ, ատոր բացատրութիւնը ժողովըրդական կեանքի խորունկ ուսումնասիրութեան մը կը կարօտի: Միայն սա ըսենք, թէ կեդրոնական ինքնակոչ և ապօրինի ժողովներու կողմէն վաւերացուած գաւառական այդ ժողովներուն անդամները, Օրմանեանը չողոքորթելէ, և անկէ իսբուելով ժողովուրդը իսբելէ գատ բանի մը չի կրցին ծառայել: Երբ օր մը պատահութիւնը ունենանք այդ ժողովներու արձանագրութիւններէն մէկ մէկ նմոյշ,

և կամ թղթակցութիւններէ մէյ մէկ բնագիր ձեռք ձգելով հրատարակութեան տալ, այն ատեն բոլոր ընթերցողները մեզի հետ որոշ կերպով պիտի հասկընան թէ ի՞նչ ըսել կ'ուզուի ժողովրդական կազմակերպութիւն բառերով: Արտաքին ձեակերպութիւններու և ցոյցերու ճարպիկ դերասան և մեծ վարպետ, Օրմանեան Պատրիարքը, իր նկարագրին ու սկզբունքներուն բնական ու անհրաժեշտ հետեւանքովը, ո՛չ պէտքին նայեցաւ, և ո՛չ ալ ժամանակին ու ժողովուրդին կարևոր պահանջներովը հետաքրքրուեցաւ: Գիտցաւ միայն երևոյթները փրկելու աշխատիլ, իրեն նեցուկ բռնելով *Apres moi le deluge* դաւանանքը, որ իր կաթոլիկ աստուածաբանութեան սկոլաստիկ բարոյագիտութեան բունը, իսրիսիւր կը կազմէր: Իբրև վերջաբան ըսենք, թէ Աշըգեանի և Իզմիրլեանի օրով գաւառները սուտեցին թիւի տեսակէտով. Օրմանեան՝ գաւառներու հանդէպ իր ունեցած անտարբեր, կեղծ ու կասկածելի հանգամանքով, ո՛չ միայն պարզամիտ ժողովուրդին կորովն ու բարոյականը ջնջեց, այլ և պատճառեղաւ դաղթականական այն մեծ հոսանքներուն, որոնք թուրքիոյ ամէն կողմերէն դէպի Արտասահման փոխադրեցին Երկրի առոյգ ու խոստմնալից երիտասարդութիւնը:

### ՕՐՄԱՆԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՊ

Ազգ մը պատահականութիւններով չի կրնար կառավարուիլ:

Եկեղեցի մը իր գոյութիւնը կը պարտի ժողովուրդին գործնական բարեպաշտութեան և իր օրինական կազմակերպութեան:

Հայութիւնը Ազգ մըն է, ամէն բանէ առաջ, ու Եկեղեցի մը, միանգամայն: Հետևաբար՝ Հայութեան ձակատագիրը պատահականութիւններու լծորդել,

անոր բնաջնջումը պատրաստել պիտի նշանակէր :

Այն օրէն, երբ Ռուբէնեան թագաւորներու լատինամիտ թուլամորթութիւնը վերջին անգամ ըլլալով Հայութեան ճակատագիրը կը թողուր երկու իսլամ պետութիւններու և կարգ մը բռնապետներու ձեռք, մենք հայերս մեր ներքին գործերը ըստ բաղդի վարել սկսանք, մեր ցեղին յատուկ նրբամտութեամբ մը օգտուելով կարգ մը պատեհութիւններէ : Ազգային ներքին գործերու կարգադրութիւնը քանի մը դար շարունակ քալեց անդեկ նաւակի մը պէս, տարուբերուած շարունակ քաղաքական հակահոսանքներու, սարսափի, սպառնալիքի, թալանի ու աւարառութեան ալէծփութեանց մէջ : Պոլիս, իր մայրաքաղաքի դիրքով, 18րդ դարուն սկիզբները Հայութեան տուած էր ինչ ինչ պատեհութիւններ, որոնցմէ օգուտ քաղելով, մերայինք սկսան ինքնամփոփուիլ և առաջին քայլերը առնել դէպի օրինական կազմակերպութիւն մը :

Երբեմն պատմութիւնը իր կատակները ունի : Արևելքի յատկանիչը միապետութիւն եղած է. Հայերը՝ հակառակ արևելցիի ճշգրիտ տիպարը ըլլալուն, բաղդին մէկ քմահանոյքովը թէ ցեղային մասնայատուկ միտումներով, հին դարերէ իվեր սահմանադրական ըլլալու ընդունակութեան առաջնորդուած են : Այդ բնայատուկ միտումին արդիւնքով ալ Հայ քրիստոնէական եկեղեցին կրցած է իր ծագման օրերէն ժողովրդական եկեղեցի ըլլալ, հակառակ Հոռովմէական և Յունական եկեղեցիներու միապետութեանը :

Փա՛ռք Հայկական Ոգիին :

Դարերու հապշտապ դէպքերը, մահառիթ պատահականութիւնները, թուրքաց միապետական բռնապետութեան անասնային սարսափը, չի կրցան իրելլ Հայութեան հոգիէն այդ ժողովրդականութեան ու սահմանադրականութեան առանձնայատուկ սեր-

մերը . և երբ պատեհութիւնները քիչ շատ նպաստաւոր դարձան , և մերինները առիթը ունեցան ինքնամփոփուելու , իրենց ներքին վարչութեան համար ժողովուրդին սրտէն դուրս բերին ժողովրդական կազմակերպութեան սերմը , որուն արդիւնքը եղաւ 1847 Մայիս 7ի Հոգևոր և Գերագոյն ժողովներու կազմակերպութիւնն ու կայսերական վաւերացումը : Այս կարգադրութեամբ Մատթէոս Պատրիարք վերջինը պիտի ըլլար այն պատրիարքներուն , որոնք «աշխարհականք ո՛չ կարին խառնել ի հոգևոր գործառնութիւնս» պիտի կրնային ըսել , Հայ կեանքի պատմութեան անպատկառ ուրացումովը : Ստոյգ է , որ անհատականութիւններ ու նկատումներ մուտ գտան այն ատեններու վարչական գործերու մէջ , և ազգը պահ մը աղմկեցին Ամիրաներն ու Էսնաֆները , բայց այս աղմուկները աւելի անձկամբտութեան արդիւնք էին , և զեղծումներ , որոնք ո՛չ մէկ կերպով կրնային եղծել մեր ազգին յատուկ սահմանադրական ու ժողովրդական հանգամանքը :

Պատրիարքներու ոտնձգութիւնները խափանելու , և անոնց միահեծանութեան փափաքներուն սանձ դնելու սահմանուած այդ երկու ժողովները՝ իրենց կազմութեան օրէն դեռ չէին կրնար ունենալ իրենց համար գործելու որոշ սահման մը : Անոնց նպասակը՝ ազգը իր ընտրած ժողովականներով կառավարելն էր . կառավարութեան ձևն ու մանրամասնութիւնները ճշդող օրէնքները դեռ չէին կազմակերպուած : Հետևաբար , առաջին ժողովականները առանց գործիքի գործաւորներ միայն եղան , և իրենց կարողութեան ներածին չափով միայն կրցան օգտակար ըլլալ : Այդ ժողովական կազմակերպութեան ամենամեծ օգուտներէն մին ալ սա եղաւ , որ էսնաֆներն ու ամիրանները հաւասար իրաւունքներով իրարու մօտ բազմեցան , և այսպէսով վերջ գտաւ երկու դասակարգներու մէջ գտնուած պայքարը , որ այնքան

չփոթութիւններ յառաջ բերած էր նոյնիսկ 1840—41 թուականներուն :

Պէտք էր, ուրեմն, ազգն ու իր ժողովները վարելու որոշ օրէնքներ սահմանել, քանի որ քանի մը տարիներու փորձը ցոյց տուաւ, թէ առանց օրինական տրամադրութիւններու, կամայականութիւններն ու անհատական ազդեցութիւնները չի պիտի դադրէին : Այս պէտքի մասին խորհուած միջոցին, 1856 Յունվար 25ին, կարդացուեցաւ կայսերական այն հրովարտակը, որ հրաւէր կը կարդար բոլոր ոչ-խալամ ազգապետներուն, նկատի առնել՝ թանգի մաթի համաձայն՝ իրենց տրուած առանձնաշնորհումները, և զանոնք յարմարցնելով ժամանակի պէտքին ու ոգիին, պատրաստել բարենորոգութեանց ծրագիրներ, իրենց ներքին գործերը վարելու համար :

Առիթէն օգուտ քաղելով, մասնաւոր յանձնաժողովի մը պաշտօն տրուեցաւ պատրաստել այդ ծրագիրը, որ առաջին անգամ ըլլալով 1850 Մարտ 24ին «Սահմանադրութիւն» անուամբ վաւերացուեցաւ, ընդունուելով անոր վերաքննութեան սկզբունքը, պայմանաւ որ «Սահմանադրութեան վերաքննութիւնը ազգին համար անընդունելի է, երբ հիմնական սկզբանց տրամադրութեանցը համաձայն չըլլայ» (Յօդ. 150) : Ահա՛ այս Սահմանադրութիւնն էր, որ ինչ ինչ փոփոխումներ ու սրբագրութիւններ կրելէ վերջ, հուսկ ուրեմն 1863 Մարտ 7ին կառավարութեան կողմէ վաւերացուած, վերադարձուեցաւ Պատրիարքարան, և անոր գործադրութիւնը հրամայուեցաւ :

Չենք ուզեր հոս ուսումնասիրել, թէ Սահմանադրութիւն ըսուած կանոնագիրքը իրապէս կրցա՞ւ գոհացնել մեր ազգային վարչական պէտքերը : Միայն ըսենք, թէ անիկա օրինագիրք մը ըլլալէ աւելի ծրագիր մըն է լոկ, որուն մէջ ընտրութիւններն ու հասարակական պարտաւորութիւն երը գծուած են

առանց անոնց ի ն չ ու ն և ի ն չ պ է ս ը բացատրելու: Բայց ի ն չ որ ալ ըլլային Սահմանադրութեան թերութիւնները, պէտք էր որ անիկա ապրէր, ո՛չ միայն իբրև հիմունքը ընդլայնուելիք. օրինագծի մը, այլ և իբրև հայկական առանձնաշնորհում մը, իբրև նախատինք մը սուլթանական միապետութեան ճակատին:

Մեռա՛ւ Սահմանադրութիւնը, կամ աւելի ճիշդը՝ ոճրագործներու ձեռքով սպաննուեցա՛ւ:

Սահմանադրութեան հեղինակները, Ֆրանսական դաստիարակութիւնով զարգացած, իրենց մտքին այդ երկունքը, այդ ազգային հարագատ գաւակը մեծցընելու համար, իրենց բովանդակ աղապատանքը իբրև խանձարուրք ծառայեցուցին անոր, իրենց անձնական համոզումներով ու գաղափարներով ժողովներու մէջ լուսաբանեցին անոր կմախք-յօդուածները, պատրաստեցին միտքերը անոր առողջ ըմբռնումին, ընտանեցուցին զանի Հայութեան անձնիւր անհատի հետ, և փթթինազարդ ճոխացուցին անոր զարդարանքը, ուժը, կոչումը: Հազիւ պատանի, Սահմանադրութիւնը 1874-1884 տարեշրջաններուն, արդէն իսկ իր պաշտօնեաներուն զգացնել կուտայ Հայկական Խնդրի կենսական հարցը, և երբ կը թղթատենք այդ թուականներու կեդր. Երեսփոխանական ժողովներու ատենագրութիւնները և օրուան թերթերը աչքէ կ'անցնենք, կը գտնենք որ ազգընտիր ժողովները ա՛լ հազիւ թէ կը զբաղին յանցաւոր տէրտէրի մը պատժապարտութեամբ կամ անհաւատարիմամուսիներու դատաստանով: Անոնց համար Հայութեան ապագան, Հայաստանի անդորրութիւնը, հարտահարութեանց բարձումը խորհրդածութեան միակ նիւթերը կը կազմեն: Հայրենասէրներու խումբը Ղալաթիոյ Օճախը կը կազմէ, իր վրայ մարմնացնելու համար հայ ազգութեան դատին փափաքուած լուծումին անհրաժեշտ դիմադրութեան ուժը. գաւա-



ուցի պանդուխտներուն դասեր կը տրուէին, անոնց միտքն ու սիրտը պատրաստելու ձեռքազատուած Հայաստանի մը համար. Միացեալ Ընկերութիւնը կը կազմուի Հայաստանի լուսաւորութեան համար: Այդ դասերը, այդ լսարաններն ու այդ վարժարանները մէկ նպատակի կը վազեն. այդ նպատակն է գիտութիւնը՝ Հայրենիքի համար: Այդ օրերուն «ինտէլիգէնտ» դասակարգը հայրենամոլներու լէգէտներ կը կազմէր, յառաջապահ գունդը այն կուռ փաղանգներուն, զոր հայ գիւղացիներն ու շինականները կը յօրինեն: Հայութիւն ու Հայաստան դպրոցներուն ծրագիրը, երգերուն ասուղձը, սրտերուն բաղձանքը կազմած են: Եւ Սահմանադրութեան հանդէսները այդ զգացումներուն սեռն արտայայտութիւններն են:

Այս երևոյթներով կրնանք բնորոշել Սահմանադրութեան թարմ ուժին արտայայտութեան յառաջին շրջանը:

Երկրորդ շրջանին մէջ (1885-1895) Սահմանադրութիւնը տարբեր երևոյթով մը կը ներկայանայ թէ՛ ժողովուրդին և թէ՛ թուրք կառավարութեան աչքին: Ժամանակին, Սատրազամ Ալի փաշան, Սահմանադրութեան մասին խօսած ատեն, ըսած էր. «Ան չի կրնար յառաջ երթալ, որովհետև քառակուսի անիւ մըն է»: Թուրք կառավարութիւնը երկար ատեն այդ սխտրանքով քնացաւ. և երբ օր մը աչքերը բացաւ՝ տեսաւ, թէ Հայութիւնը այդ «քառակուսի անիւ»ին վրայ բազմած խոշոր քայլ մը առած էր դէպի իր ապագայ ազատութեան հասնելու նպատակին սպասարկու միջոցներուն հայթայթումը: Եւ այդ օրէն Սահմանադրութիւնը նկատուեցաւ ո՛չ իբրև հաւատարիմ հպատակներու ներքին կանոնադիր մը, այլ դէպի յեղափոխութիւնը, դէպի իրաւունքի ու արժանապատուութեան ճանաչումը առաջնորդող բողոք մը, որ հաշտ չէր քալեր թուրք կառավարու-

Թեան անիրաւ շահերուն հետ : Հսկողութիւններ սկը-  
սան , կառավարական կասկածը դարանի կեցաւ ծըղ-  
տուն լրտեսներու միջոցով , և , կարծեմ , Աչըգեանի  
օրով , Ղալաթիոյ Ազգային Խորհրդարանին մէջ գու-  
մարուած Հայ Կեդրոնական Երեսփոխանութիւնը տե-  
սաւ , թէ Խորհրդարանի դռներուն առջև ոստիկան-  
ներ ու լրտեսներ պահպանութիւն կ'ընեն , իբրթէ  
ժողովականներու ներքին խաղաղութիւնը պահպանե-  
լու համար : Ա . Սուրէնեան այդ ոստիկաններէն ար-  
գիլուեցաւ մտնել այն ժողովասրահը , ուր զինքը  
հրաւիրած և իրեն աթոռ ու ձայն տուած էր իր ազգը :


Սուլթանը կը միջամտէր մեր գործերուն , և այդ  
միջամտութիւնը շատ զուարթ մտադրութեան մը  
աւետարեքը չէր անչուշտ : Հայ ժողովուրդը , որ  
կրցած էր երկար դարերէ ի վեր դիմանալ ամէն  
յարձակումներու , մերթ ընդ վզումով , մերթ ճկուն  
քաղաքականութեամբ , յայտնի և խուլ ընդհարում-  
ներ ունեցաւ թուրք կառավարութեան մտադրու-  
թիւնները վիժել տալու համար : Արիւնի , կատաղի  
պայքարի , բոցի ու ծուխերու մէջէն Հայութիւնը յու-  
սահատական կռիւ մը մղեց Սահմանադրութեան ու  
Հայութեան ազատութեան համար : Եկաւ վայրկեան  
մը , ուր բիրտ ու ժը յաղթանակեց , և Սահմանադը-  
րութիւնը՝ վերջին անգամն ըլլալով՝ նուիրագործեց  
իգմիլեանի պատրիարքական ընտրութիւնը : Երու-  
սաղէմի Աքսորարականին անկումը գրեթէ դադա-  
րումը եղաւ Ազգային Սահմանադրութեան , գոնէ  
յաջորդող իրողութիւնները այսպէս ցոյց տուին :

Արդէն ըսինք թէ ի՛նչ կերպով և ի՛նչ պայման-  
ներու մէջ պատրիարք ընտրուեցաւ Օրմանեան եպիս-  
կոպոս : Զամիչեան Բարթողիմէոս , իր պատրիարքա-  
կան տեղապահութեան ատեն ակամայ ու անգիտակ-  
ցաբար պատրաստեց այն նպաստաւոր գետինը , որուն  
շահագործումը Օրմանեանի նման բաղդախնդիբի մը  
պիտի վիճակուէր : Այդ նպաստաւոր գետինը Սահ-

ման ադրու թեան վերաքննութիւնն էր: Միրզաի բառով, «Լատին եկեղեցւոյ ապստամբ ձագը — Օրմանեան եզուիտը», այդ պարագան երկու կերպով շահագործեց: Նախ կարգ մը ապուշներու կլլեցնել ուզեց, թէ ինք չի փափաքիր Սահմանադրութեան վերաքննութիւնը կատարել, որովհետեւ ազգային շահուն կը վնասէ ասանկ դժբաղդ օրերու մէջ այդպիսի գործ մը, և այդ սուտով ինքզինքը իբրև սահմանադրասէր և ազգասէր պատրիարք մը ցոյց տալ փորձեց: Օրմանեանի այս ընթացքը բարոյական շահագործումն էր կամ անբարոյական շահագործումը Սահմանադրութեան: Այս շահագործումը, ըստ երևոյթին գովելի, իր ետին կը պահէր երկրորդ տեսակը շահագործութեան, որ Օրմանեանի բուն նպատակակէտը, բուն իտէալը կը կազմէր, — նիւթական շահագործումը օրէնքին: Օրէնքը, որպէս էր Սահմանադրութիւնը, քօնթօրօլ մըն է, հսկող, վարող, համարառու և վրէժ-ինդիր ուժ մը, ուրկէ վախնալու միտումը ունին բոլոր անոնք, որոնք գեղծումով, անբարոյութիւններով, վատութիւններով ու գռեհկութիւններով խմորուած են:

Օրմանեանի համար Սահմանադրութիւնը խըրտուիլակ մըն էր, գեհնարոյր հրէչ մը, որուն սոսկումը բաւական էր զինքը ետ կեցնելու նոյնիսկ ամենակենսական շահերէ, որոնք ապօրինապէս միայն կրնային ձեռք բերուիլ: Զեղծանելու ամենայարմար ժամանակին կը վիճակուէր իր պատրիարքութիւնը . 1. նպաստից գումարներու առատութիւն, 2. Հիւլանդանոց, 3. Կտակներ, 4. Տարեգրեկոց գումարներ, 5. Ժամանակի դժպահութենէն ծնած շահաւէտ դիմումներ այնքան առատօրէն երևան եկած չէին բնաւ ուրիշ ո՛չ մէկ ժամանակ: Եւ ասոնց հետ զուգընթաց քայլեցին 1. Սահմանադրութեան վերաքննութիւնը, 2. Ծջմարիտ հայ երևելիներու փախուս-

ՕՐՄԱՆԵԱՆ... Այ՛ն էլ... որպէս կրօնական տղայի կողմէն...



տը կամ սպաննումը, 3. Ժողովրդական սարսափը, 4. Մատնութիւններու երկիւղը: Դրամ չաչելու աղբիւրներու ա՛յսքան առատութեան միջոցին, երբ Սահմանադրութիւն չի գտնուիր, երբ երկիւղն ու սարսափը ժողովուրդին բողոքող լեզուն կը սանձէ, երբ ցուրտ յուսահատութիւնը զգացումի տէրերը կը հեռացնէ կեդրոնէն, Օրմանեանի ուրիշ բան չէր մնար ընել, եթէ ոչ կազմել իր ցնծղուն կաքաւը, ոսկի դէզերու վրայ: Դժբաղդ Հայութիւնը, իր ա՛յսքան տառապագին օրերուն մէջ, փոխանակ իր գլխուն վերև տեսնելու իր ցաւերովը զգածուած տէր մը, տեսաւ իր պատրիարքական աթոռին վրայ բաղդախըն-

դիր մը, օտարածին մը միայն, որ իր տձև մարմինը կը բերէր իբրև կափարիչ ծառայեցնելու այնքան տաժանքով, ձեռք բերուած Սահմանադրութեան մը գերեզմանին:

Օրմանեան, Սուլթանին այդ բանսարկու գործակալը, Սահմանադրութեան դահիճն ըրաւ ինքզինքը, պարզապէս աւելի աներկիւղօրէն վայելելու համար կողոպուտներու ծրարները, որոնք այնքան հանդարտամտութեամբ դէպի օտար դրամատունները փոխադրուեցան իր ու իրեններուն անունով: Գիտեմ, պիտի խնդաք բառերուս վրայ, և պիտի ըսէք դուք ձեզի:

— Միթէ ժողովներ չի կա՞ն անոր մօտ, միթէ անոնք չե՞ն հակակշռեր գինքը և իր դրամական գործառնութիւնները:

Այսպիսի հարցում մը մեր ալ ծիծաղը կը շարժէ պարզապէս: — Ժողով, ժողովական բառերը, նշանակութենէ զուրկ են այսօր, և կը նմանին արժէքէ ինկած թղթադրամներու: Եւ որովհետև անգամ մը արդէն մեր տեսութիւնը պարզած ենք այդ ժողով, ժողովական անունին տակ սքլած ապուշներու մասին, հոս կ'ուզենք յառաջ բերել միայն Միրզաի «Այրի Գահանաների Կրկնամուսնութեան Խնդրի Առթիւ» գրքոյկէն հասուած մը, որ այդ ժողովականներէն մէկ մասին նկարագրութիւնն է, և որ միևնոյն ժամանակ ցոյց կուտայ, թէ ո՛րքան անաչառ եղած ենք մեր նկարագրականին մէջ, պատմելով դէպքերը իրենց իսկական վիճակին մէջ: Միրզա, տարբեր տեսակէտէ մը մեկնելով մեր մատնանշած նենգաւոր դաւաճանութիւնը Օրմանեան Պատրիարքին վըրայ մարմնացած տեսնելէ վերջ (էջ 45), կը խօսի Կ. Պոլսոյ Կեդր. Կրօն. Ժողովի մասին. «Ժողովի նախագահ լատին եկեղեցւոյ ապստամբ ձագը — Օրմանեան եզուիտը, Կովկասահայերին յայտնի աւազակ Մանկունին, իրեն արբանեակ Մեսրովը, Մովսէս, Գրի-

գորիս, միւս Գրիգորիս, Գաբրիէլ և Ղևոնդ ըստմական հարեմապետներով, սրանց սպասուորներ — փառամուր, բայց սինլքոր, Սահակ, Կարապետ, Հմայեակ, միւս Կարապետ, Միքայէլ և Գրիգոր կեղծ ու պատիր քահանաներով, որոնք ոտք լիզելու, չողոքորթելու, ծածկամուտ քաղաքականութեամբ գընացել, բարձրացել են Թուրքիոյ Հայ կենտրոնական Կրօն. ժողովի անդամակցական աթոռների վրայ, հարկաւ ո՛չ որպէս մի մի ձայնի տէր անձինք, այլ մի մի հլու տիրատէրներ, որ երբ հարկը պահանջէ, հարեմապետների ոտքն ու ձեռքը լիզեն, միայն թէ իրենց այդ փառքի մէջ մնան» (էջ 55): Այսպիսի տարրերով կազմուած ժողովներու շրջանակին մէջ Օրմանեան աներկիւղ քալեց այն ճամբորդին կամ օտարականին պէս, որ առանց բիրի կը շրջի անշուն գիւղերու մէջ, աւելի զուարթ քան երբէք, աւելի հպարտ՝ քան երբեմն, և աւելի խորասոյզ՝ իր էնթրիկներուն, իր անձնական փառասիրութիւններուն, իր շուայտութիւններուն գիրկը:

«Եթէ քնացած գազանը արթննա՛ր» .. ահա՛ միակ մտատանջութիւնը, զոր ունեցաւ Օրմանեան: Այդ «քնացած գազանը» Սահմանադրութիւնն էր, յանձնուած ուրիշ գազանի մը ձեռք, որ քնացուց զայն, քաղաքական մօրֆինի էն ժէքսիօնով մը, և իբր թէ այդ քունին մէջ մահամերձի նուազում մը տեսած ըլլալ կեղծելով, անոր ապաքինումին, անոր զարթնումին համար իր ձեակերպական թագրիրները իբր դեղագիր գործածել ուզեց, ինք բժիշկ, ինք թշնամի, ինք ոճրագործ, ու ինք դեղագործ, և ահա՛ թէ ի՛նչու համար Օրմանեանի ձեռքով սպաննուեցաւ Սահմանադրութիւնը:

Օրմանեան, վարժ դամբանախօս, որ դրամով կը կշռէ իր գովեստի շուայումները, անխիղճ կատակերգակի մը պէս, ժողովական սրահներուն մէջ կողորդելուս արցունք թափեց իրմով դաւաճանուած



ՊՐԵՍՏՆԵՆ ԵՎ ԻՐ ԱՌԻՍԷ

Սահմանադրութեան մահափորձին վրայ, ու երբ ինքզինքը առանձին գտաւ իր անխիղճ գիտակցութեան մեկուսացումներուն մէջ, ճիւղի մը քրքիջը թոցուց բերնէն, ժամանակէն նպաստաւորուած մի-ալեծան բռնապետի մը արհամարհանքով :

Բայց ուչ կամ կանուխ պիտի արթննայ քնացող գազանը, — Սահմանադրութիւնը : Երկինք քաղա-

քական ամպերով մթագնած շի կրնար մնալ ընդ միշտ : Խաղաղութեան ու արդարութեան զեփիւռը թէ իսկ անզօր մնայ՝ ժամանակի մը համար՝ բռնապետութեան կուտակած շանթածիգ ամպերը դէն քշտելու , զարթնող ժողովուրդի մը իրաւածարաւ զգացումներէն լաւ ուղղութիւն մը առած , պիտի յաջողի՝ ուչ կամ կանուխ ցրուել այդ ամպերը , պայծառ երկինքը ցոյց տալու համար աչքերու , որոնք ի զուր գութ և արդարութիւն մուրացին : Այդ ատեն , հեռի մուրացկանութեան ստորնացուցիչ դերէն , հեռի սարկութեան գիրկը տաղտապած կեանքի մը արիւնտտ հեքէն , պիտի տեսնենք՝ մէկ կողմէն՝ մեր մէջ գերակշիռ դերը ազգային ու անհատական արժանապատուութեան , և միւս կողմէն , արդարութիւնը , ճշմարտութիւնն ու իրաւունքը՝ որոնք իրենց բռունցքին հարուածով դէպի ցելիին ճահիճները պիտի գլտորեն բոլոր անոնք , որոնք սահմանադրութիւնը սպաննող Օրմանեաններու սիրտն ու զգացումը կրեցին , մեր դժբաղդ օրերուն :

Օրմանեանի հակասահմանադրականութիւնը յաջողեցաւ իրեն համար յենարան մը ստեղծել նոյնիսկ օրագրութեան չրջանակներու մէջ : Իր պատրիարքութեան միջոցին քանի մը տարիներ շարունակ մէկ քանի թերթերու յօդուածներ , տեղեկութիւններ տալէ , ու նոյնիսկ հեռագրական գործակալութիւններու ծախքերը վճարելէ վերջ , տեսաւ , թէ այդ խայծերը ուչ թէ կանուխ պիտի կորսնցնէին իրենց հրապոյրը , թէ բոլոր թերթերուն ալ աչքին լաւ երկնալու քաղաքականութիւնը կրնար գինքը գահավիժել , քանի որ թերթերը իրարու հետ հաշտ ապրելու նպատակը չունէին , անձնական շահի անազնիւ համոզումի մը յենած , ու խորհեցաւ իր թերթը ունենալ : — Տղմաթաթաւ խոզերը ճահիճի մը պէտք ունին , և գեղծանողները՝ նեցուկի մը , հոգ չէ թէ թուղթէ շինուած ըլլայ այն : Եւ Օրմանեան այդ ճա-



«Որքան Բարձր, որքան Բարձր է, նույն Օրհման  
 կան՝ որ քիչ է քիչը՝ զնախև՝ ոչ ասի՛նք միմյանց քիչ»  
 2019 թվին Սեպտեմբեր»

Մտնող չորս սեղջ էր ստացել իր քանակից հարկերով,  
 իր քանակից հարկերով, այն-ուրեքում ինչ որ քիչ»



հիճը, այդ նեցուկը ուզեց ունենալ:

Այդ ճահիճի շինութիւնը ծրագրեցին երեք Այն-  
 Քապիներ. Բարգէն վարդապետ, Յակոբ Թովհեան  
 և Սիսակ Ֆէրիտ: Բարգէնը կը ճանչնաք արդէն:  
 Յակոբ Թովհեան՝ ազգին ձրի հացովը մեծցած՝ էջ-  
 միածնայ շեմարանական մըն է, յետոյ համալսա-  
 րանական եղած, չքաւորութեան մրուրին մէջ հա-

րըստանալու մոլուցքէն գինով, միջոցներու անխըտ-  
 րականութիւնը իրեն սկզբունք շինելով: Բաղդի բե-  
 րումով ձեմարանականներու հետ յարաբերութիւն  
 և ծանօթութիւն չեմ ունեցած երբէք, գիրենք կը  
 ճանչնամ Միրզաի միջոցաւ միայն: — Էջմիածնայ  
 ճեմարանը տուեց ազգին աւելի կատարելագործուած,  
 նոր ձևի, նոր յանգի այնպիսի ուսուցիչներ, քահա-  
 նացուներ և վարդապետներ, որոնց մասին քիչը  
 մենք կ'առենք, շատը թողնելով մամուլին, իսկ նո-  
 ցա անկուշտ ու ամեհի վայրագութիւնները՝ վայե-  
 լելու խեղճ Հայ ազգին: Էջմիածնայ ճեմարանա-  
 ւարտները, նկատելի կերպով, մի ուղղութիւն ըս-  
 տացած, նոյն ուղղութեամբ էլ դուրս են սողում  
 այդ բարոյապէս փեռեկուած հիմնարկութիւնից:  
 Կարծես հարիւրաւորը մի կաղապարից դուրս են ե-  
 կած, բոլորը միակերպ: Եթէ կախարդական մի հա-  
 յելի լինէր, որով ճեմարանաւարտների ամէն միւսի  
 հոգեբանութիւնը նշմարուէր, պարզ կը տեսնուէր,  
 որ այդ աւարտածները ուրիշ ոչինչ չեն, այլ այս  
 զվուելի բիւրօկրատ ամուրի հոգեւորականութեան  
 երկունքից վիժուած ճիւղներ են, որոնք գերա-  
 զանցում են իրանց վարպետ սեահոգիներին այն  
 մեծ առաւելութեամբ, որ սոքա աւելի սրուած,  
 անցուսպ, ծածկագործ, անկրօն ու անսուրբ են,  
 և որոնք ազգն ու եկեղեցին պիտի կառավարեն ու  
 պաշտպանեն» (էջ 33-34): Չենք գիտեր, թէ դատաս-  
 սանի սա ընդհանրացումը ո՞րքան հաւաստիք ունի  
 իր մէջ, սա միայն գիտենք թէ Յ. Թոփճեան, «մա-  
 գիստրոս պնակալէցութեան», ճշգրտօրէն իր վրայ  
 կը մարմնացնէ այն բոլոր անազնիւ գիծերը, որոնց-  
 մով Միրզա ձեմարանականներուն հոգեբանական  
 պատկերը կը գծէ: Թոփճեան՝ Բարգէն վրդ. ի չահա-  
 տըւփընկերը, կարգ մը մուրացկանութիւններ և  
 բաղդախնդրութիւններ ունենալէ վերջ, Գերմանիայէն  
 Պոլիս դարձաւ, հաւանաբար Բարգէնի հրաւէրով:



ՏՈՒՐ. Յ. ԹՈՒՔԱԷԱՆ

Մագիստրոս գնական զուգեան

(Երմեյիայե դարձն)

Ժամանակ մը Պատրիարքարանի գետնայարկերը պատըսպարուեցաւ, բարեսէրներու նպաստով, յետոյ, զինք ապրեցնելու համար, Արմաշ զրկուեցաւ, ինչպէս գրեցին այն ատենի Պոլսական լրագիրները, սա ծրագրով, որ Բարգէն ալ հոն երթայ վանահայրութեան պաշտօնով, և հոն երկուքը անկուշտ և

անյագ, մաքրեն ու սրբեն Արմաշի անտեսական կեանքը: — Ծրագիրը ձախողուեցաւ, ու Թոփճեան տեսնելով, թէ վանքին մէջ կին ու դրամ չի կայ, Պոլիս դարձաւ: Օրմանեան իր պաշտպանութիւնը կրկնապատկեց. Les amis de mes amis sont mes amis առածը պէտք էր որ հոս ալ ճշմարտուէր: Բարգէն ու Թոփճեան ուրիշի մը կը կարօտէին կազմելու համար փափաքուած եռոտանին, որուն վրայ պիտի զետեղուէր Օրմանեանի բիւրօկրատութեան ոսկի կաթսան: Ահա՛ Սիսակ Ֆէրիտը, ներքին Գործոց նախարարին անձնական խաֆիէն, ձերբակալուած մ ու զ իր թուղթերուն հաւատարիմ թարգմանը, որուն յաջողութեան ամէն մէկ քայլափոխը, մատնութեան մը բնադրոշմը ունի: Այս միութեան պահուն, Պոլսոյ մեծ օրաթերթերէն՝ «Արևելք»ը տնտեսական crise մը կ'անցնէր, պէտք էր գնել զայն, ծառայեցնելու համար կարգ մը նկատումներու, որոնց ամենքն ալ շահադիտութեամբ շաղուած էին: Կ'ըսուի թէ Սիսակ Ֆէրիտի դրամին միացուց Օրմանեան իր գողցած դրամներէն պզտիկ գումար մը, և ահա՛, արդէն թերթին արտօնատիրոջ Եռսուֆեան անունին կը յաջորդէ Գ. Պոյաճեան անունը, որ Սիսակ Ֆէրիտի ազգանունն է: Բացէ՛ք գնուած «Արևելք»ի առաջին թիւը, առաջին տողէն իսկ պիտի տեսնէք, թէ թերթը ժանգոտած պատուանդանն է այդ դժոխային աստուածացումին, զոր «Արևելք» փորձեց տալու Օրմանեանի: Երեք ուժեր—եթէ ուժ կրնան նկատուիլ ստորնութիւնները — միացան իրարու, շահամոլութիւնը, մատնութիւնը, անբարոյութիւնը, տարբեր համեմատութեամբ ու տարբեր doseերով անձնաւորուած անոնցմով, տեսակ մը լաչտի անամօթութեամբ, որ «Արևելք»ի խմբակին փառքը կը կազմէ: Երջանի՛կ մահկանացուներ, որոնք գիտցան իրենց երկրային դրախտը պատրաստել «Արևելք»ի մէջ, որուն abonnementները ուզեցին շառնել, նոյն

իսկ սպառնալով, թէ «եթէ թերթին չի բաժանորդագրուիք, դ՛ուք գիտէք»... :

Ահա բաժանորդագրութեան համար «Արևելք»ի ստեղծած նոր սիստէմը: Սիսակ Ֆէրիտ, Պոլսեցիներուն այնքան ծանօթ իր դաւաճանութիւններով, արդէն իսկ անուն մը շինած էր իբրև հայ Ֆէհիմ մը. պէտք էր շահագործել հիմա այդ անունին արհաւիրոտ հմայքը, կողոպուտի նոր սկզբունքով մը, որ «Արևելք»ի արածնատիրութեան հանգամանքը կը յատկանշէ: Պոլսական օրագրութեան մէջ անօրինակ այս թերթի շահագործումը կը մնայ մեծ նախատինքը. հայ գրականութեան, զոր այսօր սպառնալիքով կը հրամցուի սահմուկած ժողովուրդին, որպէսզի Ֆէրիտներ դրամ վաստկին, որպէսզի թոփճեան ապրի, որպէսզի Բարգէն իր աղտերէն մաքրուի և Դըպրեվանքի վերատեսուչ ընտրուի էնթրիկներով, անոր ներքին բարոյական կեանքը քայքայելու համար, որպէսզի Օրմանեան աստուածանայ, իր գռեհկութիւններուն, իր սինլքորութիւններուն, իր մատնութեանց, իր կողոպուտներուն դափնեպսակին տակ: Բերայի գարեջրատուններէն մէկուն մէջ թոփճեան տեսակցութիւն մը կ'ունենայ գրագէտ-բարեկամի մը հետ: Շոգին մասամբ մաքրած է անոր շահասիրութեամբ մրոտած գանկը, և երբ խօսքը Օրմանեանի կարծեցեալ արժանիքներուն շուրջ կը դառնայ.

— «Տարօրինակ բան, կ'ըսէ թոփճեան, քանի զինքը հրեշտակի նմանցնելու կ'աշխատիմ, այնքան սատանայի կը նմանի»:

Իրականութիւնը գրիչի կամ վրձինի հարուածներով չէ կարելի տապալել: Վերջամուտ խաւերը կը թափթփին ու յատակին իսկութիւնը ուշ կամ կանուխ երևան կուգայ: Օրմանեանի վրայ քսուած գովասանքի կամ աստուածացումի ամէն ներքող կեղծ ու շինծու կտաւէ զգեստ մըն է, լուցկիի կտոր մը



բաւական է զանի մերկացնելու այդ շինծու ճիւղաներէն, և ահա յատակը երևան կուգայ իր բովանդակ սոսկալիութիւնով:

Արդէն իսկ ուշացաւ այդ աշխատութիւնը, բայց յանցանքը ժողովուրդինը չէ՛: Ժամանակը, մեծ սարսափին այդ ծնուցիչը, այսօր իր հոսանքն ի վարկը տանի այն իսկ արձագանքները արդար բողոքներուն, առանց լսելի ընել տալու անոնց կենսունակութունը, որ անհրաժեշտ հիւթն ու սնունդն է մեր ազգային գոյութեան:

Այսուհանդերձ չի մեռնիր արդարութիւնը, և անմահ վրէժխնդրութիւնը ամէն վայրկեան Օրմանեանի գլխուն վրայ կախուած կը մնայ Դամոկլեան Սուրին պէս:

Յուսանք և սպասենք:

## ՕՐՄԱՆԵԱՆ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԷՊ

### ԵՒ ՊԱԼԱՏԻՆ ՄԷՋ

Սկզբունքի մը ընտրութեան և անոր որդեգրումին մէջ անկեղծութիւնը անհրաժեշտ պէտք մըն է ամէն դասակարգի անհատի համար: Իսկ սկզբունքի հանդէպ արտայայտուելիք անկեղծութիւնը հրամանակարգ ու գերագոյն պարտականութիւնն է բոլոր անոնց, որոնք հանրային պաշտօնի մը գլուխը կը գտնուին, և որոնց հետ սերտ առնչութիւն և յարամերձութիւն ունի ժողովուրդի մը ճակատագիրը: Սկզբունքը երկար ատենէ իվեր կիրարկուած, անձնաւորուած և խտացուած սովորութիւններու ամբողջութիւնն է: Սկզբունքը մարդուս նկարագիրն իսկ է: Նկարագիրն ու սովորութիւնները որբալէն կը սկսին և ծնունդ են միջավայրին և ենթական շրջապատողներու ազդեցութեանը: Սկզբունքէ զուրկ մարդ մը անբարոյական, անպարկեշտ և սրիկայ մըն է, վատ մը, սինլքոր մը: Եւ երբ նկարագրէ զըրկում մը ընկերացած կ'ըլլայ շնական սկեպտիկութեան մը, որ փոխանակ ճշմարտութեան նախաքայլը ըլլալու, խորշակահարող արևակիզում մըն է բոլոր վսեմ զգացումներուն, ա'լ այդպիսի մարդ մը անորակելի արարած մը կը դառնայ: «Վայ եթէ ժխտումը կը տիրապետէ, որովհետև կեանքը հաստատութիւն (affirmation) մըն է, և ընկերութիւն մը, ազգ մը, հայրենիք մը, այդ հաւաքական կեանքը, ժխտումով կրնայ մեռնիլ»:

Օրմանեան դժբաղդութիւնը ունեցած է ծնելու

այն տեսակ միջավայրի մը և ընտանեկան շրջանակի մը մէջ, ուր սկզբունքը և նկարագրի տոկունութիւնը չեն կրցած գոյութիւն ունենալ: Իր համոզումները, որոնք մասնաւոր պարագաներու յատկատրպութիւնը կը բերեն իրենց վրայ, թելադրութիւններն են պարզապէս ստորին ու փոքրոգի շահերու, որոնք մուտք գտած են նոյնիսկ իր կրօնական համոզումներուն մէջ, եթէ կրնանք համոզում նկատել այն արտաքինայարդար արուեստականութիւնները, որոնք բիւրաւոր դիմայեղումներ կրած են իր մէջ, պատեհութիւններու համաձայն: Այդ լկտի յարափոփոխութեան առաջին պաշտօնական հանդիսադրութիւնը պարզեց Հայ Եկեղեցիին գիրկը դառնալով: Այն ատեն մատնեց իր դաւանանքը, այնքան պաշտած ու փայփայած լատին դաւանանքը, և իր եկեղեցիին ուրացողը եղաւ: Ի՛հ, մարդ կրնայ իր կրօնական դաւանանքը փոխել, առանց ուրացող ու անբարոյական ըլլալու: Համոզումները կրնան սըրբագրուիլ, կ'ընդունինք, պայմանաւ որ այդ համոզումները ուրիշ համոզումներով փոխանորդուին: Օրմանեան իր լատինի համոզումները ուրացաւ ո՛չ անոր համար, որ Հայ Եկեղեցիին համոզումները աւելի հաստատուն և բանաւոր գտաւ, այլ անոր համար որ Հայ Եկեղեցիին գիրկը տեսաւ աւելի շահ, աւելի գոհացում փառքի, աւելի լայն ասպարէզ իր շահատակութիւններուն: Ահա ա՛յս պատճառով միայն զինքը գձուձ ուրացող մը կը նկատենք, և կ'ափսոսանք իր լարախաղացի այդ անձնաւորուած հակումներուն վրայ: Ուրացող մը միշտ հակամէտ է ուրանալու, ահա՛ ցաւը, որ պոռթկաց, այնքան ահագնօրէն, այնքան սարսափելիօրէն, Օրմանեանի քաղաքական կեանքին մէջ:

Օրմանեանի պատրիարքութիւնը կը վիճակուէր անանկ ժամանակի մը մէջ, ուր քաղաքական իրարու հակառակ հոսանքները այնքան հզօր թափով մը ի-



րարու կը բաղիւէին, արիւնաքամ յորձանուտներ կազմելով, պղտոր ու կարմիր: Ա՛լ անցած էին Հին բարի ժամանակները, երբ թուրք կառավարութիւնը ամէն ինչ լաւատես ակնոցով կը դիտէր, յղփացած իր կանանոցներու ներքին շուայտութիւններովը, երբ Հայ ժողովուրդը, անհոգ ու անտարբեր, չէր ուզեր իսկ խորհիլ իր ազատութեան, իր ինքնիշխան ապագային հարցով: Ժողովրդական ինքնաճանաչութեան զարթնումին յաջորդած էր թուրք կառավարութեան ու ժողովուրդին ալ վանտալական զարթնումին ահաւոր թափը: Առաջինը իր տենչանքներուն աստղ հասունացումին, երկրորդը իր վայրագութեան գագառնային խիզախութեան մէջ՝ իրարու հանդիպած էին: Հայը Արծիւն ուզեց ըլլալ, Հարենիքին բերելու համար վարդամատն առաւօտներէ հիւսուած ազատութեան նարտը, ու երբ թեւերը բացաւ, թուրքը՝ դարանակալ որսորդի մը պէս, արծիւի մաքուր լանջքին արձակեց իր գնդակը: Ան չի մեռաւ սակայն, ընդհակառակն, իր արիւնոտ լանջքը տուած հովերուն, պտուտքեցաւ շարունակ իր Հայրենիքի սահմաններուն վրայ, ու Պապը Ալիի բարձունքը, և ամէն սեղ, Հայերու սրտին խորէն սկսեալ մինչև Արտասահման, Հայաստանի սարերէն մինչև Օտարութեան գիրկը, ահաւոր, երկնասաստ բողոքի մը պէս, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ բառերը, հրացայտքի մը պէս կարմիր, իր արիւնովը բեռագրեց:

Այդ արդար բողոքի հրահոսան, կրամիր օրէն իվեր Հայութիւն և թուրքութիւն, Ազատութիւն և Համիտութիւն divorce ըրին իրարու, անդարձ, անմոռանալի, աններելի դիմադարձութիւնով և վրէժի ահաւոր որոշադրականութեամբ: Եւ քաղաքական երկու ճամբաներ բացուեցան, գոնէ մեզ Հայերուս համար: Թրքական քաղաքականութիւն և Հայկական քաղաքականութիւն: Միջին ճանքան ան-

խըտրականութիւնը կամ անտարբերութիւնն էր միայն : Համաշխարհականութիւնը (cosmopolitisme) չէր կրնար մուտ գտնել Հայկական Խնդրոյն մէջ, քանի որ մեր ազգային ընդվզումը, բողոքը, հայրենիքի, ցեղի, ազգի և ազգային նկարագրի բողոքն էր՝ ազատութեան հայրենաշունչ ըղձանքով :

Մեր ազգային պատմութեան մէջ, նոյն իսկ եկեղեցականները իրենց հայրենասիրութիւնն ունեցած են : Եւ եթէ անոնք իրարմէ տարբերութիւն մը ունեցած են, այդ տարբերութիւնը տեսնուած է պարզապէս ազգասիրութեան արտայայտութեան արտաքին կերպերուն մէջ : Գէորգ Դ. Կաթողիկոս ազգասէր մըն էր իր ըմբռնած ձևով, երբ թուրք կառավարութեան ի նպաստ, աններող ոգուով կը շարժէր ռուս կառավարութեան դէմ, երբ նոյն իսկ Էջմիածնայ պարիսպներուն տակ հազարաւոր Ալաշկերտցիներ սովամահ կը սպաննէր, և իր այդ ռուսընդդէմ հակառակութիւնը կը բացատրէր իր ըմբռնած ազգասիրութիւնով : Աչըզեան Պատրիարք ազգասէր մըն էր, իր ըմբռնած կերպով : Սկզբունքով հակառակ էր յեղափոխական գործին, և յաճախ կը կրկնէր. «Եթէ վստահ ըլլամ, որ հարիւրաւորներու մահով մեր ազգը պիտի փրկուի, այդ դէպի մահ, դէպի կախաղան վազողներուն առաջինը պիտի ըլլամ : Բայց հաւատք չունիմ թէ ազգը ատով պիտի կրնայ իր ազատութիւնը ձեռք բերել, ահա՛ թէ ի՞նչու համար բարեկամ չեմ յեղափոխականներուն և յեղափոխական գործին : Կը յարգեմ յեղափոխականներուն հայրենասնուէր եռանդը և զոհաբերող հոգին, բայց թուրքը խուժողուժ է, գազանային է, և ես ազգը կը մեղքնամ» : Ահա՛ հոս բառ առ բառ կը դռնեմ Աչըզեան Պատրիարքի դատաստանը, համոզումը յեղափոխական գործին վերաբերմամբ : Եւ ես որ գացած էի յեղափոխական գործին ձեռնտուութիւն մը ստանալու իրմէ, ցաւեցայ իր պատասխա-

նին այս մերժողականութենէն, բայց իր անձին մասին մասնաւոր յարգանք մը ունեցայ այն օրէն իվեր, որովհետև իր սիրտը, իր սկզբունքը, իր անկաշկանդ համոզումն էր որ կը պարզէր առանց այլ և այլի: Իզմիրլեան Պատրիարք ազգասէր մըն էր իր ըմբռունած կերպով, երբ իր պատրիարքական անդրանիկ ուղերձին մէջ, Սուլթանին շնորհակալութիւն յայտնել կը մերժէր, և ականջ դրած կոչկոճուած Հայութեան օրհասային լացերուն և արիւնոտ բողոքներուն, հակամարտ ուղղութեամբ մը կը պայքարէր թուրք կառավարութեան վայրագութիւններուն դէմ, երբ ջարդերը կը շարունակուէին, և հրդեհները լաւայացած արցունքի հծծիւններ կը լսեցնէին իրենց բալ ծուխերուն մէջէն: Բարթողիմէոս ու Մեսրոպ եպիսկոպոսները թրքամոլներ, և հետևաբար թուրք քաղաքականութեան հետևողներ էին, և իրենց բովանդակ տեսլականը կեդրոնացած էր Սուլթան Համիտի անձին, և անոր ճիւղային քաղաքականութեանը վրայ:

Օրմանեան ո՛չ մին եղաւ և ո՛չ միւսը, նոյնիսկ չի կրցաւ անտարբեր ու անխտրական մը ըլլալ ազգային, հայկական քաղաքականութեան ճամբուն մէջ, որովհետև ինքը ուղեց թուրքն ու հայը խաբել հաւասարապէս, որովհետև երկուքին ալ համակրանքն ու վստահութիւնը շահիլ փոճեց, անպարկեշտ: Հակուղիղ միջոցներով, որովետև ինքը ո՛չ թուրք էր և ո՛չ հայ մը, այլ հայ կրօնաւորի դիմակին տակ, սկզբունքէ ու նկարագրէ գուրկ շէրվէ մը, որ ուղեց իր շահուն ու փառասիրութեանը և իր հեզամունականութեան նենգածէտ կայկայումին համար, արուեստակուած շէրվէականութեան մը մարմնացումն ըլլալ, ծաղրելով հայրենիքի ու ազգութեան նուիրականութիւնը:

Հայուն առջև բացուած քաղաքականութեան երկու ներհակ ուղղութիւնները, հետզհետէ որոշ գոյն

ու կերպարան առին Թուրքիոյ մէջ, և վերջ ի վերջոյ կոչուեցան նաև Սուլթանական Քաղաքականութիւն և Հայ Յեղ. Քաղաքականութիւն:

Ի՞նչ էր սուլթանական քաղաքականութեան բուն ոգին, և ի՞նչով դէպի իր նպատակը քալեց: — Սուլթան Համիա լսեց — չէր կրնար տեսնել, քանի որ ինքնարգել կալանաւոր մըն էր ինքը — թէ Թուրքիոյ Հայերը ինքնաճանաչութեան զարթնումի մէջն են, թէ արդարութեան ու հաւասարութեան կը տենջան անոնք: Կեանքը յանցանքը աններելի է ու կը մնայ. պէտք է ցորենը աղալ դեռ չի բուսած, զայն անընդունակ ընելու աճման և արդիւնաւորման. սովորական հարստահարութիւնները՝ ընդհանրական թալանի վերածուեցան, մասնաւոր մարդասպանութիւնները՝ համազգային կոտորածի, անհատական հրձիգութիւնները՝ հրապարակային հրդեհներու: — Ի՞նչու. որպէսզի Սուլթանին գազան ծրագիրը գործադրուի, և Հայը առիթն ու պատեհութիւնը չունենայ իր փափաքի գոհացումներուն: — Սուլթանական քաղաքականութիւնը, որ այնքան քանդող սարսափ մը եղաւ բովանդակ Թուրքիոյ ընդհանրապէս, և մեզ Հայերուս մասնաւորապէս, չէր կրնար արդարանալ պատմական և ո՛չ մէկ իմաստասիրութեամբ, ընկերաբանական և ո՛չ մէկ տեսութեամբ, ան հակամարդկային ծրագիր մըն էր, ճիւղաղային գանկի մը ծնունդ:

Ընդհակառակը, ժողովուրդներու կեանքին մէջ, բոլոր ընկերական և քաղաքական զարգացումները, սկսած են այն ճամբով, ուրկէ քալել ուզեցինք մենք: Մեր հայրենիքը ոճրապարտ ձեռքերով խլուած էր մենէ, մեր անձնական ազատութիւնը կապտուած, մեր անձնական արժանապատուութիւնը՝ բռնաբարուած, մեր իրաւունքները՝ քաղաքական խելխօլ քրմայքներու զոհուած, մեր պատիւը՝ միշտ հարուածուած, մեր օրապահիկը՝ մեր բերնէն յափշտակուած,

և մեր հանդիստն ու ընտանեկան կեանքը՝ ենթակայ ցաւառիթ պատահականութիւններու : — Յեղային կռիւը՝ իր օրինաւոր առանցքէն շեղած , առած էր այն տեսակ ուղղութիւն մը , ուր սուլթանական քաղաքականութիւնը անլուր մաքիավէլականութիւնով մեր բնաջնջումին , մեր ստրկացումին պոռնիկ ու շնարարոյ ուղղութիւնը կը քաջալերէր յայտնի ու գաղտնի : Ուզեցինք մեր դիրքին , մեր արժանապատուութեան տէրը դառնալ , մե՞ղք գործեցինք միթէ այդ մարդկային փափաքը սնուցանելով . ուզեցիք արդար և օրինաւոր մրցումով մը մեր պատիւին դահինիները վաստկիլ , յանցապարտ արա՞ք մը միթէ գործեցինք մեր այդ ընթացքով : Եւ այդ փափաքները ունեցանք , ո՛չ իբրև անիշխանականներ , ո՛չ իբրև յեղափոխականներ , այլ իբրև գաւակները ազգի մը , որ իր գոյութիւնը , դարաւոր գոյութիւնը պահած ու պահպանած է իր արիւնին գնով : Կառավարութիւններ կան , որոնց ենթարկուած ժողովուրդները՝ իրենց հասարակական գիտակցութեան գարթնումէն սկսեալ , որոշապէս կ'ըմբռնեն , թէ իրենք երկու հայրենիքի կը պատկանին , մին այն՝ որ իրեն սեփական հայրենականն է և վաղնջականը , և միւսը՝ արդիւնք այն մեծ ձուլածոյին , զոր մարդկային ուժերը կը կազմեն , տարբեր ազգաբնակութիւններու քաղաքական միացումներով , պետութիւններ կամ թագաւորութիւններ ձևացնելու համար : Թուրքիան ալ այդպէս եղաւ , և այդ կայսրութիւնը պարզապէս մէկ անկատար , տիւեղձ ամբողջութիւնն է բազմազան բնակչութիւններու , որոնց միջև ապահովարար գոյութիւն պիտի ունենայ գերագահութեան , առաջնութեան իրաւունք ստանալու փափաքէն ծնած կռիւը և յարաբերական ազատութեան մը տեսլականին հետապնդումը : Քրոյր այսօրինակ երկիրներու մէջ , ամէն մարդ , երկու հայրենիք ունի , եթէ այսպէս կարելի է ըսել , մին փոքր

և միւսը մեծ, որոնք առաւել կամ նուազ յայտնի հակասութեան մէջ կը գտնուին, և որոնք անհասին կուտան իրարու հակասական թելադրութիւններ: Ուրիշ բառով, այս գէշ կազմակերպուած երկիրները, ուր պատմութիւնն ու քաղաքականութիւնը կը հակասեն իրարու, ճշմարիտ հայրենիքներ գոյութիւն չունին: Ասոնք գէշ կերպով յարմարցուած, առժամայ կարգադրութիւններ են միայն, որոնք իրենց վերջնական կազմակերպութեանը կը ձգտին... Գէշ կազմակերպուած երկիրներու մէջ, արդէն գոյութիւն ունեցող քաղաքական կազմակերպութեան հակառակորդները ա՛յն ժողովուրդներն են, որոնք հայրենիք մը կը փնտռեն, որոնք զայն չունենալուն համար կը տառապին, և կ'ուզեն որ հայրենիքի տէր ըլլան, կամ հանդէպ կեդրոնական կառավարութեան անկախութիւն մը ձեռք բերելով, և կամ կեդրոնական կառավարութեան լաւագոյն կազմակերպութիւն մը տալով... Այս հայրենիք պահանջող անժառանգորդները, իրենց տենջանքներուն մէջ, վերացական ու բնագանցական թէօրիի մը չէ որ կը հպատակին, անոնք պարզապէս կը հետեին մարդկային բնութեան մէկ խորին մղումին: Անոնք ինքզինքնին գրկուած կը զգան ո՛չ թէ ցնորարական, այլ դրական բարիքէ մը, որուն ճշմարիտ բնութիւնը իրենց կը յայտնէ իրական կեանքէն լուսաւորուած բնագղբը»:

Ալֆրէտ Գրուազէի սոյն ժողովրդաբանական տեսութիւնը ինքնին կը պարզէ Հայկական ձգտումին, և Հայկական ինդիւրին ծագումն ու բնոյթը: Եթէ թուրք կառավարութիւնը, իր կեդրոնական վարչութեան մէջ արդէն իսկ կրցած ըլլար ձեռք բերել լաւագոյն և բարերար կազմակերպութեան մը առաւելութիւնը: Հայկական և ուրիշ հայրենաբաղձ ինդիւրները, պիտի չի կրնային բնաւ քաղաքական նըշանակութիւն մը ունենալ: Եթէ Մակեդոնիան կ'ապըստամբի, եթէ Հայերը իրաւունք կը պահանջեն,

եթէ ԵՏՄէն զէնքով կը դիմադրէ Խալիֆային զօրքերուն, այս ամենուն ահաւոր և անիծապարտ պատասխանատուութիւնը կը ծանրանայ Սուլթան Համիտի և իր դաւաճան քապիէին վրայ: Այդ դժբաղդ ժողովուրդները տեսան, թէ իրենց երկրասէր բաղձանքները կը խոչտանգուին, տեսան, թէ կեդրոնը որդնոտած, փտած կմախք մըն է այլևս, անընդունակ ամէն բարենորոգումի, ուզեցին գոնէ ինքզինքնին փրկել, ստեղծելով իրոնց Հայրենիքը, և ստանձնելով անոր իրաւունքներուն պաշտպանութիւնը, թրքական քաղաքականութեան Համայնական քայքայումին Հանդէպ: Եւ այդ ազգայնական պատուասիրութեան յառաջդիմասէր գաղափարին արի զինուորները, իրենց զուտ ազգային-մարդկային պարտականութիւնը կատարած միջոցին, երբ իրենց Հանդէպ տեսան սուլթանական խժդժութիւնները, վատ ու վայրագ և ժողովուրդներու բնաջնջումին սպառնացող հրէշութիւնները, քայլ մը աւելի առաջ գացին, և՛ ահա՛... ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆ ԵՎ ԳՈՒՄԸ: Սուլթան Համիտ, իր ազգակործան ընտրումով, ուզեց իր պետութիւնը կազմող ժողովուրդներէն ապուշ, թոյլ, կնամարդի գանգուած մը միայն յօրինել, սարսափով, սոսկումներով թրմուած, ու ահա, հակառակ իր բաղձանքին, ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆ ԵՎ ԳՈՒՄԸ նոր ծնաւ:

Սուլթան Համիտ և իր քաղաքականութիւնը պիտի աճիւնանան, թերևս մօտաւոր ապագայի մը մէջ, բայց իր զաւակը՝ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆԸ՝ անմահ է ու պիտի մնայ:

Խալիֆան ուզեց այդ անմահութիւնն ալ Հարուածել, իր գաղափարներու հարազատ զաւակներուն, Նազըմի, Շէֆիքի, Ֆէհիմի, Իզզէթի և ուրիշ արբանեակներու ձեռքով, բայց, բռնութիւնը ո՛րքան շատցաւ, ժողովուրդը այնքան յեղափոխուեցաւ, արգարութեան փափաքները ո՛րքան արգիլուեցան, անոնք աւելի ևս քաղցրացան պատքած շրթներու:

Հայ պատրիարքներու օժանդակութեանն ալ դիմեց Համիտ: Աչըզեան Պատրիարք, հակառակ ըլլալով հանդերձ յեղափոխական գործին, Սուլթանին կառավարութեան սա թելադրանքը ըրաւ, թէ «Բռնութիւնը, աւելի ևս պիտի սաստկացնէ դժգոհներուն թիւը. պէտք է անոնց նուիրական զգացումները բռնաբարել»: Եւ երբ Պատրիարքարանի ցոյցը տեղի ունեցաւ, և ոստիկանութիւնը պաշարեց ցուցարարները, Աչըզեան, իրեն եղած ոստիկանական հարցումին հանդէպ, ճանկիւլեանը չի ճանչնալ ձեացուց, մէկ խօսքով չի մատնեց զայն, որպէսզի ճանկիւլեանը առիթը ունենայ փախչելու այն տունէն, ուր կը գտնուէին: Իզմիրլեան, թունդ հայրենասէր, յեղափոխական կուսակցութեան պատկանէր կամ ոչ, իբրև մարմնացումը այդ ուժին, ահաւոր ընդդիմութիւնն ըրաւ սուլթանական ձգտումներուն, չի մոռնալով մերթ ընդ մերթ Յեղափոխութեան կուսակցութիւններուն սխալ քայլերը մատնանշել, ինչպէս ըրաւ Պապը-Ալիի ցոյցին օրը:

Օրմանեան, հակառակ իր պարծանքներուն, թէ ինքը մէկը եղած է Հայկական Յեղափոխութեան ռահվիրաներէն, երբեմն Պոլսական լարաններուն մէջ արտասանած հայրենասէր ատենաբանութիւններովը, որոնք՝ «Հ ա յ Ե Ր Ի տ ա ս ա Ր դ ու թ Իւ ն», «Հ ա յ Կ ե ա ն ք և Ա պ ա գ ա յ» տետրակներով հրատարակուած են ժամանակին, — հակառակ իր շառլոզանութեան, թէ՛ իբր թէ ինքն ստեղծած ըլլայ էրզրումի առաջին կազմակերպութիւնը, որ վիժեցաւ Տ. Մելքիսէդի մատնութեան հետևանքով, Օրմանեան, հազիւ պատրիարք եղած, իր ընտրութեանէն ճիշդ տասն ամիս վերջ, ստրկօրէն հպատակելով Պալատին թելադրութիւններուն, պատուանշանի ըստացումի տղայամիտ լկտութիւնով, ահա Պոլսոյ եկեղեցիներուն մէջ կարդացնել կուտար իր տիրաւորութեան, անօրինակ և ազգադաւ կոնդակը, որով անէծքի



և բանադրանքի տակ կ'առնէր յեղափոխականներն ու յեղափոխութիւնը, ու ամարդօրէն Հայ ժողովուրդը կը հրաւիրէր ոչխարի հեզ ու հլու հպատակութիւնը ցոյց տալու Սուլթանի նուիրական կամքին: Օրմանեան այդ կոնդակի գրչութեան և անոր ընթերցումի ունկնդրութեանը պահուն, գոնէ զգա՞ց արդեօք, թէ ինքն իր ձեռքով կը խորտակէր անցեալին մէջ իր թքալիր բերնով քարոզած հայրենիքն ու հայրենասիրութիւնը: Բայց Օրմանեան բնաւ անդրադառնալու պէտքը չի զգաց ո՛չ իր կեանքին և ո՛չ ալ իր բառերուն պատասխանատուութեանը վրայ: «Օր աւուր բզխէ զբան» ասութիւնը իր կեղծ ու պատիր հայրենասիրութեան կռուան շինած, կատաղի մոլեգնութեամբ շրջըրջիկ հողմաղացներու պէս, կը դառնայ դէպի այն կողմը, ուր զինքը կը մղէ օրուան հովը: Զի պիտի մեղադրէինք զինքը զգացումի ազգադաւ յարափոփոխութիւններու համար, եթէ ինքը, հակառակ իրականութեան, ինքզինքը իբրև գերագանց ազգասէր ներկայացնելու անամօթութիւնը չունենար, ճիշդ այն պահուն, երբ զինքը յանկարծակիի կը բերէին, իր եթէ ո՛չ թրքամոլութեան, գոնէ չի համոզուած սուլթանամոլութեան գռիչին մէջ: Օրմանեան, իր կանուխի օրերուն, կեղծ հայրենասէր մըն էր՝ իր շահուն համար, Ղալաթիոյ փողոցները շափշփած ատեն, ապրելու անհրաժեշտ պէտքին առջև գլուխ ծռած, պէտք էր խօսէր այն բառերով, որոնք ո՛չ միայն անուշ կը հնչէին ուրիշներու ականջին, այլ և դրամ կը բերէին իրեն, առանց կառավարական պատասխանատուութեան: Օրմանեան այսօր, եթէ ցած ուրացումով մը հրաժեշտ կուտայ իր նախորդ խօսքերուն, և անէծք կը կարդայ բոլոր անոնց, որոնք յանուն ազգային փառքին ու ապագային անձնագոհուելու տրամադրութիւնն ունին, համոզումով չէ՛ որ կը գործէ, այլ շահու և փառքի ականկալութեամբ: Անէծք կը կարդայ Հայ Յեղափո-

խականին, որովհետև այդ անէծքի պէս հինցած ու անգոր բառերը թեւադրութիւնն են անոր—Սուլթանին—որուն դրամն ու պատուանշանները, ա՛յնքան ոսկեգօծեցին զինքը: Խրիմեան Հայրիկ լսեց հեռուէն Օրմանեանի այս հակազգային վարմունքի մասին, ուզեց անոր և ազգին միանգամայն ծառայութիւն մը մատուցանել: Ծերունի հայրենասէրը, Հայ Յեղափոխութեան պարթև նահապետը, ուզեց սաստերու ամենէն ահաւորին դիմել, Օրմանեանը ուղղութեան բերելու համար: Պէնտէրեան՝ մատանիի քարի մը վրայ «Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց» փորագրելով, տուած էր Հայրիկին Խրիմեան, իր ազգային պարտականութեանը հրաւիրելու համար մոլորած Օրմանեանը, այդ մատանին անոր զրկեց: Օրմանեան, որ ամէն նուիրականութիւն ցեխոտել դիտէ, բացարձակ անամօթութեամբ ելաւ յայտարարելու, թէ ինքը քաջ հովիւ նկատուած է Հայրիկի կողմէն, թէ Հայրիկ զինք գնահատած է, և այդ մատանիով կը քաջալերէ իր անիծող քաղաքականութիւնը, իր թեքւող, լարծուն, պատեհական դիւանագիտութիւնը:

«Անամօթին երեսը երբ թքնես, անձրև կուգայ կ'ըսէ»: Մատանիին ստացմամբ, Օրմանեան գործնապէս իր վրայ արդարացուց այդ ժողովրդական առածը:

Օրմանեանի քաղաքական անարմատ համոզումներուն փոփոխութիւնը անցեալի ու ներկայի խնդիր մը չէ միայն: Բարեկամներէս մին, օր մը ներկայ գտնուած է Օրմանեանի ընդունելութիւններուն: Նախ թուրք կառավարութեան պաշտօնեայ մը այցելած է: Խօսքը Հայկական Խնդիրին շուրջ կը դառնայ: Օրմանեան կը յայտարարէ, թէ «Թուրք կառավարութիւնը իրաւունքի իր դերին մէջն է»: Պահ մը վերջ դեսպանական թարգմանի մը հետ կը տեսնուէին, և անոր կը պատմէ կարգ մը անիրաւու-

Թիւններ, որոնք ի գործ կը դրուին կառավարութեան կողմէն: Պահպանողական Գ. Խորեանը կուգայ, և ասոր կը պատմէ Սուլթանին առաքինութիւնները, Թուրք սոֆթայի մը ջերմեռանդութեամբ: Յեղափոխական ներկայացուցիչ մը կուգայ, և անոր սպառնալիքէն ընկճուած, կը խոստանայ մեծամեծներուն խօսք հասկցնել իր անիծած դատին նպաստելու: Եւ ի վերջոյ եւրոպական Թերթի մը լրատուն կուգայ, և անոր կը պատմէ աղջկան մը պատճառաւ Սուլթանին և իր տղուն միջև ծագած սուր վէճը: Ու երբ ամենքն ալ կը մեկնին, Օրմանեան մեր բարեկամին դառնալով, կ'ըսէ.

— Աղէկ չի ճամբեցի՞ ամենքն ալ: Ամենքը զատ զատ ինքզինքս իրենց ցոյց տուած կերպովս պիտի ճանչնան զիս. մէկը ազատամիտ պիտի կարծէ զիս, միւսը՝ պահպանողական, մէկը՝ Թրքասէր, միւսը՝ յեղափոխական:

Խեղճ դիւանագիտութիւն, գետնառիւծային գունափոխութիւնով անճանաչուած մարդը չենք գիտեր, Թէ կրնա՞յ նպաստել դատի մը, Թէ իսկ սուրբ ըլլայ այդ դատը. խաբերայ մը, նոյնիսկ դիւանագիտական շրջանակին մէջ, կրնա՞յ բնաւ Թարգմանը հանդիսանալ ճշմարտութեան, Թէ իսկ ան ըլլար ազգութեան մը կեանքը: Ու ելլել բարբանջել, Թէ Թուրք կառավարութեան Հայամերժ քաղաքականութեան հանդէպ իրապէս կարող պատրիարքն եղաւ Օրմանեան... Ի՞նչ անպատկառ ստութիւն... (Տե՛ս «Արարատ», 1908 Յունվար):

Այս ամէն խաբերայութիւններէն վերջ, ահա՛ կառքը դէպի Պէշիքթաշ ու անկէ Երէտրզի Քէօշկը կը սուրայ: Օրմանեան, կապիկի մը ծամածոռմնեքով կ'անցնի Թահսին փաշայի սենեակը: Եւ երբ երկար ժամեր մրափելէ ու յօրանջելէ վերջ, փաշան յօժարութիւնը կ'ունենայ զինք ընդունելու, Օրմանեան կը պատմէ իր Թղթակցութիւնները, որոնցմով



Մերոպա գտնուած հայ յեղափոխականները զգաստութեան հրաւիրած է, կը պատմէ, թէ Լա-Հէյի դեսպանախորհուրդին հեռագրած է հայ ժողովուրդին գոհունակութիւնը Սուլթանէն, և խնդրած, որ կարևորութիւն չի տրուի գառամած Խրիմեանի դիմումին, կը պատմէ, թէ Պուլկարիայէն հայ յեղա-

փոխականներ, փոսթով, սոֆթ ա յ ի զգեսաղըր-  
կած են իրեն, չի քաշելով Սուլթանին հանդէպ իր  
հաւատարմութիւնը:

Եւ երբ այս ամէն պատմութիւնները աւարտած,  
կը պատրաստուի մեկնելու, Թահսինի ականջն ի վար  
կ'ըսէ.

— Ինձի համար ի՞նչ նուէր պատրաստեց ամե-  
նաողորմած Սուլթանս:

Նուէ՛ր... Պէտք է գրեւ «Կարմիր ժամուց»ին  
փոխարէն, ու հակադարձը, ԱՐԻԻՆՈՏ ԺԱՄՈՒՅԸ՝  
Օրմանեանին համար:

Նուէ՛ր...:

### ՕՐՄԱՆԵԱՆ ԵՒ ԻՐ ԹԱԳՈՒՆ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ

Մինչև հիմա մեր գրած յօդուածներով ցոյց  
տուինք Օրմանեանը իր անազնիւ էնթրիկներուն,  
իր ստորին շահագործումներուն և իր գծուծ փառա-  
սիրութիւններուն մէջ: Ասոնք սակայն իր կազմած  
անձնական ծրագիրներուն կողմնակի յայտնութիւն-  
ներն են միայն, և իր բո՛ւն թագուն նպատակակէտը  
կազմելէ աւելի ի սպաս դրուած են բուն նպատակին  
հասնելու մղձաւանջին: Օրմանեանի այդ միակ փայ-  
փայուած նպատակն է ԲԱՐՁՐԱՆԱԼ, ի՛նչ գիտով և  
ի՛նչ ճամբով ալ ըլլայ: Որպէսզի կարող ըլլանք գին-  
քը իր այդ մղձաւանջին մէջ ներկայացնել կարելի  
եղածին չափ, պէտք է նախ իր ամփոփ կենսագը-  
րութիւնը ներկայացնենք հոս՝ քաղելով «Արևելք»  
լրագրի 1906 Նոյ. 6 (19) թիւէն և ամբողջացնելով  
այն ծանօթութիւններով՝ զորս կրցած ենք քաղել  
իրեն ժամանակակից և գրեթէ քայլ առ քայլ հե-  
տևող անձնաւորութիւններէ:

Օրմանեան Մաղաքիա ծնած է 1841 Փետ. 11ին:  
Հազիւ 10 տարեկան, կը զրկուի Հոովմ Անտօնեանց

վանքը, ուր 7 տարի ոչ-գովելի կեանք մը անցնելէ վերջ, արեղայական օրհնութիւն կը ստանայ և կը մտնէ Ս. Ապօղինարի սէմինարը, և ուր 1860ին և 1865ին փիլիսոփայութեան և աստուածաբանութեան վկայականները կը ստանայ: 1863ին սարկաւազ և յետոյ քահանայ կը ձեռնադրուի և կը մնայ Անտօնեանց վանքին մէջ: Մինչև 1870 մնաց Անտօնեանց վանքը և իր աղտոտ փառասէրի անյագ տենչանքով, որուն մէջ կրօնական համոզումը երբէք գոյութիւն չունի, մասնակցեցաւ Հասունեան և հակա-Հասունեան խնդիրներու, և պապական անսխալութեան հարցին բռնաբորբոք մէկ վայրկեանին, երբ Անտօնեանները ստիպուեցան Հռովմը թողուլ և Պոլիս գալ, Օրմանեան Մաղաքիա ակամայ հարկադրուեցաւ միանալ իր պետերուն և թողուլ Հռովմը, որ իր երիտասարդ օրերուն՝ կրօնական վերարկուի տակ պահուըտած՝ ամէն տուփանք և ամէն անպարկեշտ հաճոյք լիառատ մատակարարած էր իրեն, վանքերու և կուսանոցներու ներքին սենեակներուն մէջ: Հազիւ Պոլիս եկած, տեսնելով թէ Պոլիս ժլատ կը գտնուի իր դէմ իր հաճոյքներու գոհացումին համար, համոզեց իր մեծաւորները և իբր թէ Անտօնեանց կալուածական իրաւունքները պաշտպանելու պատրուակով այս անգամ առանձինն ու աշխարհականի զգեստով Հռովմ մեկնեցաւ: Օրմանեանի աշխարհականի այս կեանքը վեց տարի տևեց գրեթէ: Երևակայեցէք տուփոտ ցանկասիրութիւններով օժտուած երիտասարդ մը, աշխարհականացած եկեղեցական մը, որ իր ձեռքին տակ միաբանութեան պատկանող կարևոր գումարներ ունի, և որ կը գտնուի այն տեսակ քաղաքներու մէջ, ուր հաճոյքը այնքան դիւրագիւտ է և դիւրապատրաստ, և ուր զինքը մօտէն ճանչցող աչք մը գոյութիւն չունի բնաւ: Հռովմէն Փարիզ և Փարիզէն Հռովմ զգայապաշտի վազք մը եղաւ իր կեանքը այդ տա-

րիններուն մէջ, և սիրային արկածներ ու շամբուշ կենակցութիւններ, առևանգութիւններ ու սիրուհիներու հետ փախուստներ բաւական նշանակալից տեղ մը կը գրաւեն այդ 5-6 տարիներու իր կեանքին մէջ: Իր այս շամբուշ կեանքը այնքան յառաջ տարաւ, իր հապշտապ երթևեկները, իր զգայնոտի գրգռականութիւնները և այդ ասպարէզին մէջ իր ոգորումները այնքան ազդեցին իր վրայ, որ մէն էն-ժի դի հիւանդութեան մը բռնուեցաւ և քիչ մնաց իր հաճոյքներու կէս ճամբուն վրայ գերեզման իջնէր, դժբաղդ հայերու այսօրուան օտարածին և խորթ պատրիարքը: 1876ին Պոլիս կը դառնար, և երեք տարիի չափ հակա-Հասունեանց եկեղեցական գործերով զբաղելէ վերջ, տեսնելով թէ՛ չուովմէն շնորհազուրկ՝ այդ շրջանակը շատ նեղ կուգար իր փառասիրական ձգտումներուն համար, 1879 շուկ. 29ին վերջապէս դարձաւ Հայ եկեղեցւոյ գիրկը, երկու տարիներ շարունակ Ներսէս Պատրիարքի կողմէն մերժումի պատասխան ստանալէ վերջ: 1880ին Կարնոյ Առաջնորդ ընտրուեցաւ, ուր մնաց 2½-3 տարիներու չափ, հոն շարունակելով մէկ կողմէն իր զգայապաշտի կեանքը, որու մասին նոյն ատենի «Երկրագունտ»ներու մէջ ընդարձակ պարսաւագիր մը հրատարակեց Ռ. Պէրպէրեան, ապագայ Ուսուցչապետը: Կարնոյ մէջ յարուցած գայթակղութիւններուն վրայ քիչ մը մոխիր փչելու նպատակով 1883ին Պոլիս վերադարձաւ, ուր տարիի մը չափ պաշտօն վարելէ վերջ, երբ Կարնոյ իր սակաւթիւ համախոհներէն առած սեղեկութիւններէն համոզուեցաւ թէ երեք տարիներու իր շահատակութիւնները և անոնց յառաջ բերած տխուր սպաւորութիւնները բաւական հանդարտած են՝ վերադարձաւ իր պաշտօնատեղին, և 1886ին Էպիսկոպոս ձեռնադրուեցաւ Մակար կաթողիկոսէն: Բայց վերջապէս ա՛լ չէր կրնար երկար ատեն պաշտօնավարել Կարնոյ

մէջ, ուր իր մասին ժողովրդական հաւատքն ու համոզումը խախտուած էր այլևս, ու յաջողեցաւ 1887 ի վերջերը իբրև ուսուցիչ ինքզինքը էջմիածնայ ձեմարանը հրաւիրել տալ Մակար կաթողիկոսին: Այդ պաշտօնավարութեան միջոցին ալ չի կըրցաւ ձագ հանել էջմիածնայ մէջ, և 1888ին ստիպուեցաւ վերադառնալ Պոլիս, ուր աննշան թաղերու մէջ քանի մը ամիս քարոզչութիւն ընելէ վերջ Աչըզեան Պատրիարքի կողմէ հրաւիրուեցաւ Դպրեվանքի տեսչութեան պաշտօնին, զոր շարունակեց մինչև 1896, ամէն տարի յաճախակի Պոլիս երթևեկելով դարպասելու համար իր հովանուհիներուն: 1896 Նոյեմբեր 6ին պատրիարք ընտրուեցաւ ոչ-սահմանադրապէս և տեսանք թէ այդ թուականէն սկսեալ անիկա ի՞նչ շահատակութիւններ ունեցաւ ի Քնաս Ազգին և Հայութեան:

Օրմանեանի ստորին նկարագիրը և իր գծուծ փառամոլութիւնները չի կրցին գոհանալ «Պատրիարք Կ. Պոլսոյ» տիտղոսով, հետզհետէ «Պատրիարք Հայոց Թուրքիոյ» ստորագրեց և երբ տեսաւ թէ Թուրքիան ալ նեղ շրջանակ մը կը գծէր իր անբարեմիտ նկատումներուն շուրջ, այնուհետև «Պատրիարք Հայոց» տիտղոսը երկաթագիր բնագրոյցեց՝<sup>1</sup> մասնաւոր քարտերուն վրայ, որոնցմէ այնքան առատօրէն կը գտնուին հասարակ ժողովրդին մօտ անգամ: Մեծութիւններն ու բարձրագահութիւնները Օրմանեանի համար քարշողական ու ժ մըն են, ինչպէս է շողացող ադամանդ մը մութին մէջ սողացող գետնաքարչ օձին համար: Ինք՝ հակառակ իր ստանձնած պաշտօնին ահաւորութեանը, իր պատրիարքութեան բոլոր ժամերը նուիրած է իրականացնելու բարձրացումի իր ոսկի երազները, և իր անձին վրայ կեդրոնացնելու բոլոր պատրիարքութիւններու, բոլոր կաթողիկոսութիւններու տիտղոսները, ենթակալի վիճակէն վեր միահեծան և անպատկառ իշխելու



իր վատթար կղերի ճիրաններուն մէջ բռնած ժողովուրդին սիրտն ու հոգին: Բայց Ազգը, իր ամենէն յուսահատական ու ամենէն ճակատագրական դժբաղդութիւններուն մէջ անգամ, իր աղի արցունքի շիթերուն մէջէն տեսաւ Օրմանեանի հակազգային սինլքորութիւնը և լռելեայն, բայց գործնապէս, կանգնեց արգելիչ թումբը, անոր բաղձանքներու ապօրինի հեղեղին դէմ, և հանդիսաւոր պարտութիւններով խարանեց անոր ցեխոտած ճակատը, որուն վրայ դժբաղդաբար ոչ մէկ ազգային շող, ոչ մէկ հայ եկեղեցականի շնորհք կրցած էր նշմարել: Ահա թէ ի՛նչպէս տեղի ունեցան Օրմանեանի այդ կորանքները, այդ պարտութիւնները:

1. Մկրտիչ Կաթողիկոսի մահով Կիլիկոյ Կաթողիկոսական Աթոռը թափուր կը մնար: Իզմիրլեան իր պատրիարքութեան օրով ուզեց այդ թափուր մընացած Աթոռը օժտել Կաթողիկոսով մը: Դժբաղդաբար Իզմիրլեանի կատարել սուած ընտրութեան արդիւնքը անհետեանք մնաց, քանի որ թուրք կառավարութիւնը չուզեց հաստատել Ալէաթճեան Գրիգորիս եպիսկոպոսի կաթողիկոսական ընտրութիւնը: Օրմանեան Պատրիարքական Աթոռը բարձրացած պահուն իսկ աչքը դարձուց Կաթողիկոսական այդ պարպ Աթոռին, և եղած դիմումներուն վրայ ընտրութեան ձեւակերպութիւններուն ձեռնարկեց, միշտ այն յոյսով, թէ արդիւնքը պիտի գար իրականացնել իր բաղձանքները՝ զինքը Կիլիկոյ Կաթողիկոս հռչակել տալով: Բաղձանք մը ինքնին չի կենար իրագործուիլ: Բաղձանքները սերմերու կը նմանին, մինչև որ հողը չի մշակուի, կարելի չէ սերմէն արդիւնք մը սպասել: Օրմանեան՝ ճարպիկ էնթրիկան՝ իրագեկ ըլլալով այս ճշմարտութեան, ձեռնարկեց հողին մշակութեանը՝ իբրև հաւատարիմ մշակ գործածելով իրեն հլու հպատակ կարգ մը եկեղեցականներ և աշխարհականներ, որոնք անձամբ և նամակներով ժո-

ղովուրդին մէջ մտած՝ ուզեցին հանրութեան ողջամիտ համոզումները մոլորեցնել և Օրմանեան-Թակարդին մէջ ձգելով զայն, այսպէսով յաջողցնել Օրմանեանի կաթողիկոսական ընտրութիւնը, անոր տալու համար՝ «կաթողիկոս Տանն Կիլիկիոյ և Պատրիարք Հայոց» տիտղոս մը, որուն սէրէն տոչորուած կը մնար Օրմանեան: Այդ փոթորկալից օրերուն մէջ էր, որ Պոլսոյ Կրօնական Ժողովի անդամներէն Մանկունի եպիսկոպոս նամակ մը կը գրէր Երուսաղէմ, կաթողիկոսական ընտրութեան պասուիթակին, 1902 Յունիս 14 Թուականով, նամակ մը՝ զոր Սապայեան եպիսկոպոս իր տեղեկագրին հետ ղրկած է Հայրիկին և զոր Հայրիկ մեզ ցոյց տուաւ երկու տարի առաջ իրեն ըրած այցելութեանս միջոցին: Այդ նամակով Մանկունի եպիսկոպոս սապէս կը նկարագրէ Օրմանեանը իր էութիւններուն մէջ. «Ա՛խ Սրբազան Եղբայր, ներկայ Ազգ. Կեդր. Վարչութեան, մանաւանդ Կրօն. Ժողովոյ վեցամսեայ պաշտօնավարութեան մէջ ստիպուած եմք աւելի և յաճախագոյնս ոչխարազգեստ գայլին մեքենայութիւնքը և դաւադրութիւնքը ըստ հնարաւորին ջլատելու մտածել, քան թէ ազգային և եկեղեցական կարևոր խնդրոց և բարեկարգութեանց հետեւելու: . . . Խրիմեան կաթողիկոսի ապիկար և անգիտակից միջամտութիւնըն էր, որ Ալէաթճեանի ընտրութեան բեկման և վեցանուն ցանկի յանձման մէջ ուր ուրեմն տկարացուց գմեզ և լռել ստիպուեցանք: Որչափ ցաւալի, միանգամայն սոսկալի է, որ արտաքին միջամտութեանց և ուղղութեանց դէմ պաշտպանուիլ ստիպուած ատեն ոչ խարազ գեստը և օտարած ինը ներքին մեքենայութեամբք իր քննադատելի նըպասակներուն կը հետևի ոսկեզօծեալ պատըրւակներով և հրապուրիչ դարձուածքներով և մենք երկու — արտաքին և ներքին — աննպաստ ուղղութեանց դէմ ստիպուած կ'ըլլանք մաքառիլ: Վստահ

եմ որ գրածներէս յաւելին գիտէք և ամէն բան կ'ըմբռնէք, որով անբասիր կը թողուք զմեզ, եթէ աւելին չեմք կարող արդիւնաւորել. ժամանակը չար է և ձախորդ պարագայից սպառնալեաց առջև խոհեմ շարժիլը ևս պէտք չէ մոռնալ:» Ձեռք կարծեր, որ Հայոց Հայրիկին վերագրուած «ապիկար և անգիտակից» միջամտութիւն մը գոյութիւն ունեցած ըլլար, ինչպէս նոյնինքն Հայրիկ կը յայտարարէր մեզ, միայն այդ նամակին մէջ եթէ Մանկունիի համար արժանիքի դոյզն բաժին մը կայ, այն ալ սա է թէ Մանկունի քիչ ու շատ կրցած է ճանչնալ Օրմանեանը, այդ ոչ խարազ գեստը և օտարածինը և անոր քննադատելի նպատակները, որոնց ինքն ալ յետոյ գործակցեցաւ Երուսաղէմական խնդիրներուն մէջ, նշան, տիտղոս, ճանապարհածախս անուններուն տակ դրամական նուէրներ ստանալէ յետոյ: Խրիմեան Հայրիկ այս առթիւ երկարօրէն նկարագրելէ վերջ Օրմանեանի ազտոտ նրկարագիրը և անոր կազմած ազգաւեր ծրագիրները՝ ինձ ցոյց տուաւ նաև իր մէկ նամակը, զոր իբրև պատասխան գրած էր Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան տեղեկագրին. «Ստացայ Ձեր պատուական նամակ Երուսաղէմէն, գրուած փետրուար ամսում: Այս նամակ իր ամբողջ բովանդակութեամբ մի նկարագիր էր Կիլիկիոյ կաթողիկոսութեան վերջին ընտրութեան: Ոչ մի նուագ, այլ երկիցս կարդացի ամենայն ուշադրութեամբ, ճշգիւ վերահասու եղայ, թէ Պօլսոյ կողմէն որչափ խաղ ու էնթրիկներ տեղի ունեցած են գործոյն մէջ. գովելի է Ձեր ողջամիտ քաջութիւն, որ կարողացեր էք պարզ երեսով դուրս ելնել կնճռոտ գործին մէջէն: Ձեր պարտքըն այդչափ էր և զատարեցիք, թո՛ղ այսուհետև Պօլսոյ մեծ դեր խաղացողին: Լրագիրներէն տեղեկացայ, որ այս անգամ Տ. Աշոտ եպիսկոպոս պիտի գնայ: Բարի յաջողութիւն:

«Որդի մարդոյ, դուք ինչպէս մարգարէանում էք, ամեն անարգ միջոցներ ի գործ պիտի դրուին, որպէսզի յաջողի Օրմանեանին համար իր ցանկութեան հասնիլ: Ամեն ոք վկայում է, որ այդ անձն ճարտար և գործունեայ անձն մի է, բայց իր ոգւոյն երբէք վստահութիւն չը լինիր, զի կարի մոլեալ է գփառս անձին ընտրել քան Քրիստոսի եկեղեցւոյն: Եթէ այսպէս յաջողի մեղք ո՞ւմ պարանոցին վրայ կը ծանրանայ...»

«Մի նոր լուր տամ Քեզ, գուցէ դուք վազ ևս լսած լինիք: «Փունջ» լրագիր գրած էր թէ Ատանացիք մի քարոզիչ խնդրած են Օրմանեան Սրբազանէն, նա ևս պիտի զրկէ Արմաշեցի Աղան վարդապետ. հասկանո՞ւմ ես որ դա կարապետ պիտի լինի հանդերձելոյն ճանապարհ պատրաստել, ինչպէս ուխտի պատրուակով եկող Պատրիարքարանի Գործակատարը եկաւ ու դարձաւ. չը գիտեմ թէ նա ո՞րքան յաջողեցաւ:» (1902)

Հոգեւոյս Հայրիկի ինքնագիր նամակին այս տողերը, զորս բառ առ բառ յառաջ բերինք, կուգան նուիրագործելու մեր տեսութիւնները Օրմանեանի փառասիրական և հակազգային ուղղութիւններուն մասին, և անհերքելիօրէն հաստատելու մեր համոզումները, որոնք հիմնուած են իրական և ճշգրիտ ապացոյցներու վրայ:

Կիլիկեան ժողովուրդը քուէի մէկ հարուածով խորտակեց Օրմանեանի փառատենջ երազները, և երբ Սահակ Խապայեան Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս հըռ-չակուեցաւ, Օրմանեան նորօրինակ գայրուցքով մը սկսաւ վրէժխնդիրի վերաբերումներ ունենալ Կիլիկիոյ Գահակալին և անոր ժողովուրդին դէմ: Մեր ստացած մասնաւոր նամակներէն կը տեղեկանանք, թէ այսօր պատրիարքական հակառակութիւնը ո՞րքան սուր կերպարանք առած է հանդէպ Կիլիկիոյ, որուն ժողովուրդը Օրմանեանէն կը հալածուի, անոր

Համար, որ քուէ տուած չէ իրեն, և որուն կաթողիկոսը շարունակ իր ուղերուն առջև կ'ունենայ Օրմանեանէն ստեղծուած կարգ մը խոչընդոտներ, պարզապէս անոր Համար, որ Սահակ Կաթողիկոս Օրմանեանի կողմէն կը նկատուի իբրև իր իրաւունքին յափշտակողը !!!: Այդ Հակառակասիրութեան պատճառաւ էր որ երբ Սահակ Կաթողիկոս 1904 ին կայսիրասէնով Պոլիս գնաց, Հակառակ Օրմանեանի Հաճութեան՝ օրուան պատրիարքը անձամբ և Ռօպէր Եղաճեանի նման իր արբանեակներով թագնօրէն ամէն դժուարութիւններ յարոյց կաթողիկոսի ազգօգուտ ձեռնարկները անյաջողութեան մատնելու Համար և վարկաբեկելու զանի յաչս կառավարութեան և Հայ ժողովուրդին: Եւ անոնք, որոնք շատ մօտը ապրեցան այդ խոչընդոտներուն՝ շատ լաւ գիտեն թէ Օրմանեանի այս գժուձ և փառամոլ Հակառակասիրութիւնը ո՛րքան սուղի նստաւ Կիլիկեցիներուն:

2.— Կիլիկիոյ կաթողիկոսական խնդիրը փակուած էր: Օրմանեան իր շուրջը նայեցաւ, տեսաւ Երուսաղէմի Պատրիարքական Աթոռը, և անոր օրէ օր դէպի գերեզման մօտեցող ծերուկ ու խռճած Գահակալը: Նո՛ր երազ: Չէ՞ մի որ Պատրիարքական տարեգրութեանց մէջ գտնուած են պատրիարքներ, որոնք Երուսաղէմի և Պոլսոյ Պատրիարքութիւնները իրենց անձին վրայ միացուցած, իրենք Պոլիս նըստած՝ փոխանորդի մը միջոցաւ կառավարած են Երուսաղէմի գործերը: Օրմանեան ուզեց գոնէ այդպէս ըլլալ ժամանակի մը Համար: Բայց բաւական խոչընդոտ և դժուարութիւններ կային իր առջև, պէտք էր զանոնք հարթել: Երուսաղէմի Պատրիարքութիւնը ունէր իր վանական կանոնագրութիւնը, որուն Համեմատ, միայն Երուսաղէմի միաբան մը կրնար պատրիարք ընտրուիլ: Պէտք էր տակնուվրայ ընել վանքը, ո՛չ միայն կանոնական դժուարութիւնները վերցնելու, այլ և մրոտելու Համար Երուսա-

ղէմի Պատրիարքութեան ուրիշ հաւանական ընտրելիները: Գէորգ եպիս. Երէցեան ժողովրդական խըլըրտումի մը պահուն հաւանականագոյն ընտրելին էր ո՛չ միայն Պոլսոյ Պատրիարքութեան, այլ և միակ ու ձեռնհաս պատրիարքուն Երուսաղէմի: Օրմանեան ուզեց իր մրցակիցը ու կարծեցեալ ախոյեանը վարկաբեկել իր ապագայ յաջողութեան կարելիութեանը համար, և ահա՛ ստեղծուեցաւ Երուսաղէմի հաշուական խնդիրը: Այդ հաշուական խնդիրը, որ այնքան անազնուօրէն շահագործուեցաւ Օրմանեանի կողմէն, մէկ կողմէն գձուծ վրէժխնդրութեան ցոյց մըն էր հանդէպ Կիլիկիոյ Կաթողիկոսին և միւս կողմէն զրպարտութեան ցեխ մը նետուած Երէցեան Սրբազանի վրայ, և որուն դժբաղդ քաւութեան նոխազը եղաւ Երուսաղէմի ամենէն գործունեայ, ամենէն ուղղամիտ և ամենէն օգտակար մրաբանը՝ Ղևոնդ վրդ. Մաքսուտեան: Սա հինգ տարիներու շրջանին մէջ Երուսաղէմ թատր եղաւ ամենէն ստորին և ամենէն վայրագ խժդժութիւններու. վէճերը կռիւներով ու ծեծերով վերջացան, բողոքները մատնութիւններով պսակուեցան, հակառակութիւնները զրպարտութիւններու խառնուեցան, և հոն՝ նոյնիսկ ոճրագործութիւնը և եղբայրասպան խժդժութիւնները մեծ ծաւալ գտան և այսպէսով Երուսաղէմի վանքը ազգին և օտարներուն ցուցադրեց անգամ մըն ալ անամօթութեան և անխիղճ վերաբերումի ցնցող արտայայտութիւններ: Մէկ խօսքով Օրմանեան չի խղճաց հնադարեան վանքի մը բարոյական վարկին քայքայումը յառաջ բերել, չի խղճաց Երէցեանի և Մաքսուտեանի նման եկեղեցականներ մրտաւել միմիայն ապահովելու համար իր ապագայ ընտրութեան կարելիութիւնը: Ու հիմակ ալ չենք զարմանար, երբ կը տեսնանք թէ ինչու հինգ տարիներէ իվեր հաշուական խնդիր մը չի վերջանար, քանի որ այլևս ապացուցուած իրողութիւն

մըն է թէ եղածը հաշուեքննութեան պատրուակին տակ անձնական հակառակութեան շարք մըն է միայն և այսօր երբ հանրութեան դասաստանին առջև Ղեւոնդ վրդ. իր հաշիւներով անպարտ հոշակուած է իր խղճամիտ հաշուետուութիւններով, պիտի սպասենք տեսնելու համար թէ Օրմանեանի կանխադատ խմբակը քաջութիւնը պիտի ունենայ խոստովանելու իր յանցանքը, դարմանելու Ազգին եղած փնասները, վերահաստատելու խաղաղութիւնը Երուսաղէմի վանքին մէջ՝ իր սերմանած խռովութիւններուն տեղ, ինք որ Երուսաղէմի ցնդած պատրիարքը իրեն գործիք չինած, նոյնիսկ փորձեց հակառակիլ կաթողիկոսական կարգադրութիւններու և իրաւասութիւններու, պահ մը Գէորգ եպսկոպոս չնորհուած «Արքութիւն»ը չի ճանչնալ փորձելով:

3. — Այս պահուս Օրմանեանի համար Երուսաղէմ մեռած տառ մըն է այլևս, քանի որ Հայրիկի մահուամբ էջմիածնի թափուր աթոռը կայ մէջտեղ: Եւ արդէն իսկ Երուսաղէմի մէջ ան իր գործը աւարտեց իսառնակութիւն և երկպառակութիւն սերմանելով, ա՛լ այսուհետև Երուսաղէմի միաբանութեան կը մնայ ճանչնալ իր սխալը, ճանչնալ իր եղբայրադաւ կուսակցականութեան ահռելիութիւնը, միանալ իրարու հետ սրբագրել անհամաձայնութեան տխուր արդիւնքները, ձեռք ձեռքի տալ և աշխատիլ վանքի պայծառութեանը և պարտքի բարձումին:

Օրմանեան այսօր էջմիածնայ թափուր Աթոռին հանդէպ ուշադիր լարուածքով, կը գտնուի իր փառասիրական ձգտումներու ահագնաբորբ եռ ու զեռին մէջ: Օրուան պատրիարքը տեսնելով՝ թէ կիլիկիոյ կաթողիկոսութեան իւղոտ պատառը արդէն ուրիշներուն անցած էր, տեսնելով թէ Երուսաղէմի մէջ՝ իսառնակչի իր կատարած կաղ սատանի դերը իրեն համար ուէ լուսաշող ապագայ չի խոստանար, հիմակ




այքը դէպի էջմիածին կը դարձնէ՝ հոն գոնէ յաջողելու համար իր ծրագիրներուն մէջ, հոն գոնէ միահեծանօրէն իշխելու, հոն գոնէ պերճանքի արտաքնայարդար ցոյցերու տակ երևնալու գոեհիկ անմտութիւնով: Եւ եթէ այս անգամ ալ բաղդը իրեն չի ժպտի և ձախողին իր ունայնամիտ երազները,



վստահ եղիք թէ ան դէպի Հռովմ պիտի վազէ նորէն, բաւական է, որ լատին եկեղեցին, եթէ ոչ պապութիւն մը, գոնէ գարտինալութիւն մը խոստանայ իրեն: Ի զուր չէր, որ Խրիմեան Հայրիկ իր մասին կը գրէր, թէ վստահութիւն չըլլուիր այդ մարդուն, քանի որ աւելի իր, քան թէ ժողովուրդի շահովն է, որ կը մոլի: Այսու հանդերձ Օրմանեան որչափ ալ ձախողի իր ծրագիրներուն մէջ, ան՝ իր տենչանքներէն մտրակուած՝ չուզեր բնաւ կասիլ իր ճամբուն վրայ, շարունակ կը հետամտի իր ծրագիրներու իրականացումին, առանց չիկնելու, առանց ամչնալու, և երբ անգամ մըն ալ ձախողի՝ կը ջանայ գոնէ ինքզինքին տալ ուրիշները ի զուր զբաղեցուցած ըլլալու հրճուանքը:

Խրիմեանի գնահատումով Օրմանեան անարժան մըն էր կիլիկիոյ կաթողիկոսութեան, նոյնը և աւելին պէտք է ըսել Հայոց ընդհանուր կաթողիկոսութեան համար: Հայոց կաթողիկոսութիւնը ընդհանուր քերիստոնէական եկեղեցիներուն մէջ կը մնայ, իր հայկական հանգամանքով, որոշ և անջատ, որուն գերագաս հանգամանքը կարելի չէ իր կախարդանքին մէջ պահել ո՛չ Օրմանեանի լարախաղացութեամբ և ո՛չ ալ անոր ստորին աճպարարութիւններովը: Օրմանեան իր պատրիարքութեան օրով առաւել քան երբէք ո՛չ միայն ցոյց տուաւ թէ ինք իր փառքէն, իր հաճոյքներէն և իր դրամապաշտութենէն զատ բանի մը վրայ չի կրնար մտածել, ո՛չ միայն ցոյց տուաւ թէ ինք խառնակիչ մըն է բառին բովանդակ նշանակութեամբ, այլ և իր հրատարակած կարգ մը պատրիարքական հրահանգներով որոշապէս ցոյց տուաւ թէ Հայ եկեղեցիի ժողովրդական ոգիէն զուրկ, հայազգեստ բազէրա մըն է ինքը, «ոչխարազգեստ» մըն է պարզապէս Մանկունիի բառով, որ կ'ուզէ Հայ եկեղեցիի վարչական կազմակերպութիւնը փոխանակել լատինամիտ միապետականութիւնով, աւելի



ազատ և աւելի միահեծան կարենալ իշխելու համար: Օրմանեանը կաթողիկոս ընտրել կը նշանակէ ուրեմն հայկական եկեղեցիին ազգային բնադրոջմը եղծանել, քայքայել անոր ժողովրդական սկզբունքը, կղերականութեան ազատ ասպարէզ տալ, ճնշել հայ ժողովուրդին խիղճն ու զգացումները և հայկական եկեղեցին գրկել իր կենդանացնող ոգիէն և

չունչէն: Բայց մեր ժողովուրդէն ո՞վ պիտի համարձակէր այդ ոճրագործութիւնը կատարել և թողուլ, որ Լուսաւորչի, Սահակի ու Մեսրոպի շունչովն ու ոգիովը կենդանացած և վարդաններու արիւնովը զօրացած մեր նահատակ եկեղեցին Օրմանեանի ձեռքով միուի ցեխերուն մէջ և անչքանայ անոր մաքիավելական սոսկումներուն տակ:

Օրմանեանի անձն ու գործունէութիւնը, անոր սկզբունքներն ու ծրագիրները արդէն իսկ ծանօթ են Տաճկահայերուն ու Ռուսահայերուն: Մենք այնպէս կը հաւատանք, թէ Ռուսահայերուն մէջ, կարգ մը ճեմարանական արեղաներէ զատ, որոնք ապագայ շահեր ունին սպասելիք Օրմանեանէն, պիտի չի գտնուի անհատ մը, որ Օրմանեանը իբրև կաթողիկոսական թեկնածու ներկայացնելու անացնուութիւնն ունենայ: Թէ իսկ գտնուին ալ ոմանք, անոնք բնաւ պիտի չի կրնան ներկայացնել Ազգին ընդհանրական ձայնը, որ ամենէն հուժկու բողոքը պիտի ըլլայ այդպիսի ձախող ընտրութեան մը հանդէպ:

Ռուսաստանն ու Ռուսահայերը շատ լաւ և շատ մօտէն ճանչցած ըլլալնուս համար է, որ այսքան համարձակութեամբ կրնանք խօսիլ Օրմանեանի հանդէպ իրենց սածած զգացումներու մասին Օրմանեան ալ թերևս մեզմէ աւելի համոզուած է այս խնդիրներուն վերաբերմամբ, անոր համար է, որ երբ մէկ կողմէն այս պահուս սիրալիր յարաբերութիւններ կը մշակէ Պոլսոյ ռուսական դեսպանին հետ և ապագայ ռուսասիրական ձգտումներու գաղտնի ծրագիրներ կը յանձնէ անոր, միևս կողմէն չի մոռնար ռուսահայ թերթերէն մէկ քանինները ձեռքի տակէ կաշառել, միաքեր պատրաստելու համար մարդեր զրկել հոս ու հոն, բարեկամական նամակները առատացնել հեռաւորներուն, և միևս կողմէն ալ պատուանշաններ և ըրիւթ պէ ներ ստանալ տաճ-

## ԳԻՊԻ ԵՋՄԻԱԾԻՆ . .

Ռեխաւոր մը որ՝ ապահովա  
 զայն՝ ճրարարանը ստիպու  
 էաւորա՛նք Կ.



կահայ ապագայ հաւանական պատգամաւորներուն : Այս տարուան Հոկտեմբերի 30ը հանդիսաւորապէս պիտի վճռէ , թէ ի՞նչ արդիւնք պիտի կրնան ունենալ Օրմանեանի այսքան հապճեպ կեղծիքները և անոր ձեռք առած միջոցները իր կաթողիկոսական ընտրելիութիւնը յաջողցնելու համար : Մենք խղճի պարտք մը միայն ունինք կատարելիք , որ է ներկայացնել Օրմանեանը իր իսկական արժանիքին , իր անձնական նկատումներուն , իր թագուն ծրագիրնե-



### Ներքը Աղուխ՝ Նպասակը Էջմիածին...

րուն, իր հակահայկական քողարկուած նպատակներուն, իր խարդաւանանքներուն և իր դաւերուն մէջ, բանաւոր ուղղութիւնը կարենալ տալու համար բոլոր անոնց, որոնք Հայ Ազգին և Հայ Եկեղեցիին ճակատագրովը զբաղելու պարտականութիւնը ունին :

Մեր այս յառաջընթացները լոկ անձնական դատողութիւններ չեղան : Ինչպէս տեսանք, անոնք ուժովցած են իրողութիւններու հաստատութեամբ :

Կաթողիկոսի և եպիսկոպոսի վկայութիւններով և կարգ մը ուրիշ վաւերագրերով, որոնք մեր ձեռքը անցած էին: Եւ ա՛լ այսուհետեւ կը թողունք, որ ընթերցողները խորհին ու դատեն, թէ ո՛վ պէտք է ընտրել Հայ Ազգին Կաթողիկոսը, որմէ ժողովուրդը շատ բան սպասելու իրաւունքը ունի, քանի որ կարգ մը արտաքին պարագաներ, քաղաքական կնճռոտ դարձուածքներ և դարուս յառաջդիմասէր ճըգտումները, պէտքերու և բարեկարգութիւններու ահագին կոյտ մը դիզած են մեր վրայ և որոնց ճշգրիտ արդիւնաւորութենէն կախում ունի մեր ազգային գոյութեան անվթար պահպանութիւնը:

ՎԵՐՋ

ՆԻԻԹԵՐՈՒ ՑԱՆԿ

1. Փտույթեան Օճախը . . . . .	երես	1
2. Օրմանեանի Պատրիարքութիւնը . . . . .	»	3
3. Օրմանեան Պատրիարքարանի մէջ . . . . .	»	5
4. Օրմանեան իր Ազգականներուն մէջ . . . . .	»	9
5. Օրմանեան Ժողովներու մէջ . . . . .	»	17
6. Օրմանեան Եկեղեցիներու մէջ և Կոտորածներուն Հանդէս . . . . .	»	34
7. Օրմանեան Գաւառներու և Տարագրեալներու Հանդէս . . . . .	»	45
8. Օրմանեան Նպաստից Գումարներուն Հանդէս . . . . .	»	57
9. Օրմանեան Սահմանադրութեան Հանդէս . . . . .	»	67
10. Օրմանեան Յեղափոխութեան Հանդէս և Պալանին մէջ . . . . .	»	86
11. Օրմանեան և իր Թագուն Ծրագիրները . . . . .	»	100





